



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍՏ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

«ՊՐՈՖՏԵՍՏ» ՍՊԸ¹

Թողարկողի ֆիրմային անվանումը

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Կազմակերպա-իրավական ձևը

Հայաստանի Հանրապետություն, 0078, ք. Երևան,
Աջափնյակ, Հ. Մարգարյան Փ., Շ. 6/1, ԲՆ. 3 Բ/Կ
Հեռ՝ (+374 95) 595858

Էլ. փոստ՝ proftestllc@gmail.com

Ինտերնետային կայք՝ www.ptest.am

«ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ²

Գլխավոր տեղաբաշխողի անվանումը

Փակ բաժնետիրական ընկերություն

Կազմակերպա-իրավական ձևը

ՀՀ, ք. Երևան, 0019, Բաղրամյան 2, 27/1 ոչ բնակելի տարածք

Հեռ՝ (+374 10) 545670

Էլ. փոստ՝ info@dimension.am

Ինտերնետային կայք՝ www.dimension.am

**ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ
ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ
ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:**

Երևան 2026

¹ Այսուհետ «Պրոֆտեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն տերմինը կօգտագործվի նաև որպես Թողարկող:

² Այսուհետ «Դայմենշն» փակ բաժնետիրական ընկերություն տերմինը կօգտագործվի նաև որպես Տեղաբաշխող:



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

Արժեթղթի դասը, տեսակը	Անվանական, արժեկտրոնային, ոչ փոխարկելի պարտատոմս
Արժեթղթի ձևը	Ոչ փաստաթղթային
Թողարկման արժույթը	ՀՀ դրամ
Արժեթղթերի քանակը	15,000 (տասնհինգ հազար) հատ
Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
Արժեթղթերի թողարկման ծավալը	1,500,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ
Արժեկտրոնային եկամտաբերություն	13%
Արժեկտրոնի վճարման պարբերականությունը	Եռամսյակային պարբերականությամբ
Շրջանառության ժամկետը	36 ամիս (3 տարի)



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ	6
ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ	7
1. Տեղեկատվություն թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ	8
Ապագայում Ընկերությունը մտադիր է իր ներդրումային միջոցներն ուղղել հետևյալ նպատակներին.	13
2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկեր	18
3. Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ	34
4. Թողարկողի աուդիտ իրականացնող անձ	34
5. Թողարկողի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն	35
6. Առաջարկվող պարտատոմսերի հիմնական տվյալները	37
7. Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը	39
8. Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները	43
ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	49
9. Ռիսկային գործոններ	49
10. Հիմնական տեղեկատվություն	52
11. Առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) արժեթղթերի հետ կապված տեղեկատվություն	53
12. Առաջարկի ժամկետները և պայմանները	72




ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

13. Վերջնական պայմաններին վերաբերվող տեղեկությունները	74
14. Տեղաբաշխման պլանը	79
15. Առաջարկի գինը	80
16. Տեղաբաշխումը	81
17. Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը	82
18. Լրացուցիչ տեղեկատվություն	83
ԲԱԺԻՆ 3.ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	85
19. Անկախ աուդիտորները	85
20. Ռիսկային գործոններ	85
21. Տեղեկատվություն Թողարկողի մասին	97
22. Ներդրումները	98
Ապագայում Ընկերությունը մտադիր է իր ներդրումային միջոցներն ուղղել հետևյալ նպատակներին.	98
23. Բիզնեսի նկարագիրը	99
24. Թողարկողի կառուցվածքը	101
25. Թողարկողի հիմնական միջոցները	101
26. Զարգացման վերջին միտումները	102
27. Թողարկողի կառավարման մարմինները	103
28. Թողարկողի կառավարման մարմինների անդամները և գործունեությունը	105
30. Տեղեկատվություն Թողարկողի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին	107



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

31. Լրացուցիչ տեղեկատվություն	108
32. Էական պայմանագրերը	109
33. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը	109
34. Այլ տեղեկատվություն	110
ԲԱԺԻՆ 4. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	111
ՀԱՎԵԼՎԱԾ 1: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը	111
ՀԱՎԵԼՎԱԾ 2: Հայտ ֆիզիկական անձ ներդրողների համար	113
ՀԱՎԵԼՎԱԾ 3: Հայտ իրավաբանական անձ ներդրողների համար	115
ՀԱՎԵԼՎԱԾ 4: Ֆինանսական հաշվետվություններ	117



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖԵՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը:

Արթուր Մելքոնյան <hr/> (անուն, ազգանուն)	Մասնակից <hr/> (պաշտոն)	 <hr/> (ստորագրություն)	<u>03.06.2026թ.</u> (ամսաթիվ)
Արթուր Մարտիրոսյան <hr/> (անուն, ազգանուն)	Գործադիր մարմնի ղեկավար (Տնօրեն) <hr/> (պաշտոն)	 <hr/> (ստորագրություն)	<u>03.06.2026թ.</u> (ամսաթիվ)
Սեդա Քոչարյան <hr/> (անուն, ազգանուն)	Ավագ հաշվապահ <hr/> (պաշտոն)	 <hr/> (ստորագրություն)	<u>03.06.2026թ.</u> (ամսաթիվ)
Գայանե Արզումանյան <hr/> (անուն, ազգանուն)	«Դայմենշն» ՓԲԸ Գլխավոր տնօրենի ժ/պ <hr/> (պաշտոն)	 <hr/> (ստորագրություն)	<u>03.06.2026թ.</u> (ամսաթիվ)
Ստորագրությունները հավաստում են՝			
Արթուր Մելքոնյան <hr/> (անուն, ազգանուն)	Մասնակից <hr/> (պաշտոն)	 <hr/> (ստորագրություն)	<u>03.06.2026թ.</u> (ամսաթիվ)





ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ամփոփաթերթը պետք է դիտվի որպես «ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Թողարկող կամ Ընկերություն) պարտատոմսերի ազդագրի (այսուհետ՝ Ազդագիր) ներածական համառոտ նկարագրություն, և առաջարկվող պարտատոմսերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական Ազդագրի վրա:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում: Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը թղթային տարբերակով Թողարկողի և/կամ «Դայմենշն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ **Տեղաբաշխող**) գլխամասային գրասենյակում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ վերջիններիս ինտերնետային կայքերում՝ www.ptest.am, www.dimension.am:

Սույն ազդագրում ներկայացված տեղեկատվությունը, բացառությամբ անկախ աուդիտորի կողմից աուդիտի ենթարկված 2025-2024թթ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների, չի ենթարկվել աուդիտորական ստուգման: Ինչպես նաև, ներկայացված տվյալների համար աղբյուր չեն հանդիսացել երրորդ կողմերից ստացված խորհրդատվությունը և/կամ տեղեկատվությունը:



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍՏ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

1. Տեղեկատվություն թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ

1.1 Թողարկողի անվանումը, պետական գրանցման համարը, գտնվելու վայրը, կապի միջոցները, ինտերնետային կայքը

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ՊՐՈՖՏԵՍՏ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ռուսերեն՝ "ПРОФТЕСТ" Общество с Ограниченной Ответственностью
անգլերեն՝ "PROFTEST" Limited Liability Company

Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ՊՐՈՖՏԵՍՏ» ՍՊԸ
ռուսերեն՝ ООО "ПРОФТЕСТ"
անգլերեն՝ "PROFTEST" LLC

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝

Թողարկողը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում, ՀՀ, 0078,
ք. Երևան, Աջափնյակ, Հ. Մարգարյան Փ., Շ. 6/1, ԲՆ. 3 Բ/Կ

Պետական գրանցման համարը՝ 264.110.748777

Թողարկողի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0078, ք. Երևան,
Աջափնյակ, Հ. Մարգարյան Փ., Շ. 6/1, ԲՆ. 3 Բ/Կ

Կապի միջոցները

Հեռ՝ (+374 95) 595858

Էլ. փոստ՝ proftestllc@gmail.com

Ինտերնետային կայք՝ www.pctest.am

Թողարկողի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍՏ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման

Կոնֆակտային անձ

Ընկերության կողմից թողարկված պարտատոմսերին առնչվող հարցերի առաջացման դեպքում ներդրողները կարող են դիմել Արթուր Մարտիրոսյանին:

Հեռ՝ (+374 95) 595858

Էլ. փոստ՝ proftestllc@gmail.com

Ինտերնետային կայք՝ www.ptest.am

1.2. Թողարկողի համառոտ պատմությունը և ռազմավարությունը

«Պրոֆտեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը («Մայր ընկերություն», դուստր ընկերության հետ միասին՝ «Խումբ») հիմնադրվել է 2013 թվականի հունվարի 15-ին: Մայր ընկերության գործունեության հիմնական ուղղությունը բժշկական պարագաների և սարքավորումների վաճառքն է Հայաստանի Հանրապետությունում:

Ընկերությունը համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որի կանոնադրական կապիտալը բաժանված է կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով և Ընկերության կանոնադրությամբ:

Մայր ընկերության հիմնադիրը և միակ բաժնետերը՝ 100% բաժնեմասով, հանդիսանում է Արթուր Խաչատուրի Մելքոնյանը:



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

Ընկերության գործունեության հիմնական ուղղությունը բժշկական սարքավորումների և պարագաների մեծածախ ու մանրածախ առևտուրն է: Ընկերությունը հանդիսանում է մի շարք ընկերությունների ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետությունում (ինչպիսիք են՝ Abbott, Merit Medical, Medtronic, Baxter, Adeor):

Հիմնական ապրանքատեսականին է.

- Էնդովասկուլյար վիրահատությունների համար կիրառվող պարագաներ՝ սրտի և պերիֆերիկ ստենտեր, բալոններ և կաթետրներ,
- Նեյրովիրաբուժական պարագաներ,
- Հեմոդիալիզի սարքեր և պարագաներ,
- Բժշկական տեխնիկա:

Ընկերության գործունեության հիմնական շուկան Հայաստանի Հանրապետությունն է, որտեղ այն համագործակցում է գրեթե բոլոր պետական և մասնավոր բժշկական կենտրոնների հետ: Միաժամանակ իրականացվում է նաև արտահանում դեպի Ռուսաստանի Դաշնություն, սակայն դրա մասնաբաժինը չի գերազանցում ընկերության ընդհանուր իրացման 3%-ը, ինչի արդյունքում Ռուսաստանի Դաշնության շուկայի հետ կապված ռիսկերը գնահատվում են էականորեն ցածր: Այլ ուղղություններով արտահանում չի իրականացվում:

Ընկերության գործունեության մյուս առանցքային ուղղությունը հեմոդիալիզի ծառայությունների մատուցումն է: Ներկայումս գործում են երեք հեմոդիալիզի կենտրոններ, որտեղ 2025թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ սպասարկվել է շուրջ 150 հիվանդ: Գործարկման փուլում են գտնվում նաև ք. Երևան, Մարգարյան 6/1 և ք. Գյումրի, Իսահակյան 41 հասցեներում տեղակայված նոր կենտրոնները: Գյումրիում բացվող կենտրոնը գործելու է ոչ միայն որպես հեմոդիալիզի կենտրոն, այլև որպես բազմապրոֆիլ բժշկական ախտորոշիչ կենտրոն:



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

Ընկերության զարգացման ռազմավարության շրջանակում նախատեսվում է մինչև 2026 թ .-ի ավարտը ձեռք բերել տարածքներ Արտաշատ և Հրազդան քաղաքներում, ինչը հնարավորություն կտա ավելացնել սպասարկվող հիվանդների թիվը և ընդլայնել մատուցվող ծառայությունների շրջանակը: 2027թ.-ին նախատեսվում է սպասարկել շուրջ 400 հիվանդ:

Հրազդանում Ընկերությունը ձեռք է բերել նախնական պայմանավորվածություն տարածքի ձեռքբերման կապակցությամբ, որը բավարարում է հեմոդիալիզի և ախտորոշման կլինիկայի գործարկման համար անհրաժեշտ բոլոր պայմաններին: Նշված տարածքում իրականացվելու է միայն կոսմետիկ վերանորոգում և բժշկական սարքավորումներով կահավորում:

Արտաշատում Ընկերությունը ևս նախատեսում է ձեռք բերել տարածք և գործարկել հեմոդիալիզի և ախտորոշման կենտրոն, սակայն տվյալ քաղաքում Ընկերությունը դեռևս իրականացնում է համապատասխան տարածքի որոնում:

2025թ. նոյեմբերի 7-ին «Պրոֆտեստ» ՍՊԸ-ն ձեռք է բերել «Պրոմ-Տեստ» ՍՊԸ-ի բաժնեմասերի 100%-ը, որի արդյունքում «Պրոմ-Տեստ» ՍՊԸ-ն դարձել է Խմբի դուստր ընկերություն (այսուհետ՝ Դուստր ընկերություն):

Ձեռքբերման ամսաթվի դրությամբ դուստր ընկերության որոշելի ակտիվներն ու պարտավորությունները ճանաչվել են իրենց իրական արժեքներով: Ձեռքբերված զուտ որոշելի ակտիվների իրական արժեքը կազմել է 340,225 հազար ՀՀ դրամ:

Ձեռքբերման գինը կազմել է 91,970 հազար ՀՀ դրամ, որը ներառված է առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի կազմում և ենթակա է մարման ձեռքբերման ամսաթվից մեկ տարվա ընթացքում:



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

Ձեռքբերված զուտ ակտիվների իրական արժեքի և ձեռքբերման գնի տարբերությունը՝ 248,255 հազար ՀՀ դրամ, ճանաչվել է որպես ձեռքբերումից օգուտ և ներառվել է շահույթի կամ վնասի մասին համախմբված հաշվետվությունում:

	Հիմնական գործունեություն	Ձեռքբերման ամսաթիվ	Ձեռքբերված բաժնեմաս
2025թ.			
«Պրոմ -Տեստ» ՍՊԸ	Լաբորատոր ախտորոշիչ ծառայությունների մատուցում	7.11.2025թ.	100%

«Պրոմ-Տեստ» ՍՊԸ-ն Հայաստանի մոլեկուլային կենսաբանության և բարձր տեխնոլոգիական ախտորոշման ոլորտների առաջատար կազմակերպություններից է՝ հիմնադրված 1998թ-ին: Դուստր ընկերությունը ներդրել է մի շարք նորարարական տեխնոլոգիաներ, այդ թվում՝ ՊՇՌ ախտորոշում, գենետիկական հետազոտություններ և սեքվենավորում: Այն կարևոր դեր է ունեցել ինչպես մասնագիտացված բժշկական ծառայությունների զարգացման, այնպես էլ համաճարակաբանական ծրագրերի իրականացման գործում: «Պրոմ-Տեստ» ՍՊԸ-ն շարունակաբար զարգացնում է իր կարողությունները՝ ապահովելով ժամանակակից և հուսալի ախտորոշում: Դուստր ընկերությունը հանդիսանում է մի շարք աշխարհահռչակ ընկերությունների պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում, ինչպիսիք են. Abbott Laboratories: Abbott Diabetes Care, Abbott Molecular, Abbott Vascular, Abbott Diagnostics; Euroimmun, Beckman Coulter և այլն:

Դուստր ընկերությունը գրանցված է ք. Երևան, Կոմիտասի/Շ/58/12բն. Արաբկից 0014 հասցեում:



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի ընթացքում և դրանից հետո՝ մինչև ազդագիրը գրանցման ներկայացնելու պահը, «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից իրականացվել են ներդրումներ՝ ուղղված բժշկական կենտրոնների հիմնմանը: Մասնավորապես՝ շուրջ 200 մլն դրամի ներդրում է կատարվել Երևան, Մարգարյան 6/1 հասցեում հեմոդիալիզի կենտրոն հիմնելու նպատակով, ինչպես նաև 150 մլն դրամի ներդրում՝ ք. Գյումրի, Իսահակյան 41 հասցեում բժշկական կենտրոն հիմնելու համար:

Ապագայում Ընկերությունը մտադիր է իր ներդրումային միջոցներն ուղղել հետևյալ նպատակներին.

- Մասնաճյուղերի ցանցի ընդլայնում՝ ծառայությունների հասանելիության մեծացման նպատակով.
- Սարքավորումների արդիականացում՝ տեխնիկական վերազինման և որակի ապահովման նպատակով.
- Նոր տարածքների ձեռքբերում՝ գործունեության ընդլայնման և ենթակառուցվածքների զարգացման նպատակով:

1.3 Կազմակերպության կանոնադրական կապիտալը

Ընկերության կանոնադրական կապիտալը 2024թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 36,050 հազար ՀՀ դրամ:

2025թ.-ի հունիսի 23-ին Արթուր Մելքոնյանը կատարել է 30,000 հազար ՀՀ դրամի կանոնադրական կապիտալի ավելացում և 2025թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ վերջինս կազմել է 66,050 հազար ՀՀ դրամ:



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

2026թ-ի մարտի 24-ի դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմել է 306,050 հազար ՀՀ դրամ, որը բաժանված է 1 բաժնեմասի, մեկ բաժնեմասի անվանական արժեքը կազմում է 306,050 հազար ՀՀ դրամ և սեփականության իրավունքով պատկանում է Արթուր Խաչատուրի Մելքոնյանին:

Ընկերության բոլոր 1 բաժնեմասերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և պատկանում են Ընկերության միակ մասնակից Արթուր Մելքոնյանին:

1.4. Բիզնեսի համառոտ նկարագիրը

Ընկերության գործունեության հիմնական ուղղությունը բժշկական սարքավորումների և պարագաների մեծածախ ու մանրածախ առևտուրն է: Ընկերությունը հանդիսանում է մի շարք ընկերությունների ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետությունում (ինչպիսիք են՝ Abbott, Merit Medical, Medtronic, Baxter, Adeor):

Հիմնական ապրանքատեսակնին է.

- էնդովասկուլյար վիրահատությունների համար կիրառվող պարագաներ՝ սրտի և պերիֆերիկ ստենտեր, բալուններ և կաթետրներ,
- Նեյրովիրաբուժական պարագաներ,
- Հեմոդիալիզի սարքեր և պարագաներ,
- Բժշկական տեխնիկա:

Ընկերության մրցակցային դիրքը հիմնված է պրեմիում դասի ապրանքանիշերի ներկայացման և որակյալ ծառայությունների մատուցման վրա:

Ընկերությունը ներկայացնում է Abbott Vascular ընկերությունը, որը համաշխարհային մակարդակով հանդիսանում է կարդիովասկուլյար միջամտությունների ընթացքում կիրառվող



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման

արտադրատեսակների առաջատար արտադրողներից մեկը: Ընկերության կողմից արտադրվող սրտային ստենտները լայնորեն կիրառվում են ամբողջ աշխարհում և համարվում են ոլորտի առաջատարներից: Տվյալ ուղղությամբ շուկայում գործում են երկու հիմնական պրեմիում մրցակիցներ:

Ընկերությունը հանդիսանում է նաև Medtronic ընկերության ներկայացուցիչը, որը ևս համաշխարհային առաջատարներից է բժշկական սարքավորումների և արտադրատեսակների ոլորտում:

Ներկայացված ընկերությունների հիմնական մրցակիցներն են չինական և հնդկական ծագման ավելի ցածրարժեք արտադրատեսակները: Միաժամանակ, առկա են մի շարք ունիկալ արտադրատեսակներ, որոնք չունեն համարժեք այլընտրանքներ, ինչպես նաև պահպանվում են էական որակական տարբերություններ:

Առողջապահության համընդհանուր ապահովագրության ներդրմանը զուգահեռ՝ Ընկերությունն արձանագրել է վաճառքի ծավալների էական աճ: Ըստ Ընկերության կանխատեսումների՝ իրացման ծավալների դրական դինամիկան կրելու է շարունակական բնույթ: Հաշվի առնելով, որ Ընկերության կողմից վաճառվում են պրեմիում որակի և ոչ մասսայական ապրանքներ, շուկայում առկա մրցակցային միջավայրը զգալի ազդեցություն չի ունենում վաճառքի ծավալների և գնագոյացման քաղաքականության վրա: Սա թույլ է տալիս պահպանել կայուն շուկայական դիրք և գործառնական արդյունավետություն:

Գործունեության հիմնական շուկան Հայաստանի Հանրապետությունն է, որտեղ Ընկերությունը համագործակցում է գրեթե բոլոր պետական և մասնավոր բժշկական կենտրոնների հետ: Իրականացվում է արտահանում միայն դեպի Ռուսաստանի Դաշնություն, սակայն դրա մասնաբաժինը չի գերազանցում ընկերության ընդհանուր իրացման 3%-ը:



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

Ընկերության գործունեության մյուս առանցքային ուղղությունը հեմոդիալիզի ծառայությունների մատուցումն է: Ներկայումս Ընկերությունն ունի 3 գործող կենտրոն, ևս 2-ը գտնվում են գործարկման փուլում:

1.5 Թողարկողի տրամադրության տակ եղած ակտիվների մասին տեղեկատվություն

1.5.1 Ակտիվների համարժեքությունը

2024թ. և 2025թ-ի աուդիտ անցած տարեկան ֆինանսական հաշվետվությունների արդյունքներով կազմակերպության ակտիվների շահութաբերությունները (Ջուտ շահույթի հարաբերությունը ընդհանուր ակտիվների միջին մեծություն) կազմել են համապատասխանաբար 21.9% և 25.8%, իսկ սեփական կապիտալի շահութաբերությունները (զուտ շահույթի հարաբերությունն սեփական կապիտալի միջին մեծությանը)՝ 82.8% և 115%: Լևերիջի գործակիցը (ընդհանուր պարտավորությունների մեծության հարաբերությունն ընդհանուր կապիտալի մեծությանը) 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 4.68:

1.5.2 Ընդհանուր ակտիվներ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ընդհանուր ակտիվների մեծությունը կազմել է ավելի քան 4.1 միլիարդ ՀՀ դրամ: Նույն պահի դրությամբ կապիտալի համարժեքության գործակիցը (սեփական կապիտալի հարաբերությունն ընդհանուր ակտիվներին) կազմել է 0.18, իսկ ակտիվների շահութաբերությունը եղել է 25.8%:

1.5.3 Ակտիվների իրացվելիությունը

Ընկերության ընդհանուր իրացվելիության գործակիցը, որը հաշվարկվում է որպես ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների հարաբերակցություն, արտացոլում է ընկերության կարճաժամկետ պարտավորությունները փակելու ունակությունը: Ընկերության



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

ընդհանուր իրացվելիության գործակիցը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1.76:

Այս ցուցանիշը վկայում է, որ Ընկերության ընթացիկ ակտիվները բավարար չափով գերազանցում են ընթացիկ պարտավորությունները, ինչը բնութագրում է իրացվելիության բավարար մակարդակ և արտացոլում է Ընկերության կարողությունը՝ ժամանակին կատարելու իր կարճաժամկետ պարտավորությունները:

1.6 Ընկերության կառուցվածքը

Ընկերության միակ մասնակիցն Արթուր Մելքոնյանն է՝ 100% բաժնեմասով:

Ընկերության կառավարման մարմիններն են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը և Ընկերության գործադիր մարմինը՝ Տնօրենը:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

«Պրոֆտեստ ՍՊԸ-ն («Մայր ընկերություն») ունի մեկ դուստր ընկերություն՝ «Պրոմ-Տեստ» ՍՊԸ (Դուստր ընկերություն), որի բաժնեմասն ամբողջությամբ իրեն է պատկանում:

Ընկերությունը 2026 թվականի ապրիլի 30-ի դրությամբ ունի 44 աշխատակից:

1.7 Թողարկողի մասնաճյուղերը

Թողարկողը գործունեություն է իրականացնում հետևյալ հասցեներում.

1. ք. Երևան, Աջափնյակ վարչական շրջան, Հ. Մարգարյան փողոց 6/1, բն. 3 (գլխամաս և հեմոդիալիզի կենտրոն),
2. ք. Հրազդան, Բաղրամյան թաղամաս, Պուրակային 38 (հեմոդիալիզի կենտրոն),



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

- 3. ք. Արթիկ, Բաղրամյան 2 (հեմոդիալիզի կենտրոն),
- 4. ք. Արտաշատ, Արամ Խաչատրյան 116 (հեմոդիալիզի կենտրոն):

2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկեր

2.1 Թողարկողին առնչվող ռիսկեր

Գոյություն ունեն Թողարկողին և վերջինիս գործունեության ոլորտին հատուկ մի շարք գործոններ, որոնք կարող են ուղղակի կամ անուղղակի ձևով ազդեցություն ունենալ թողարկված արժեթղթերի ռիսկայնության մակարդակի վրա:

Ներդրողները պետք է որոշում կայացնեն՝ լիովին գիտակցելով ներդրումների բնույթն ու դրանցից բխող հիմնական ռիսկերը՝ ելնելով իրենց փորձից, նպատակներից, ֆինանսական ռեսուրսներից, ռիսկերի նկատմամբ հակվածության աստիճանից և այլ գործոններից:

Ներդրողները պետք է հասկանան նաև, որ Ազդագիրը չի կարող ներկայացնել Թողարկողի գործունեության հետ կապված բոլոր ռիսկերը: Թողարկողին առնչվող ռիսկերը կապված են նրա ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների հետ և արտահայտվում են ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու հանգամանքով: Թողարկողի բնականոն գործունեությանը սպառնացող ռիսկեր կարող են առաջացնել նաև արտաքին գործոնները: Թողարկողի գործունեությանն առնչվող ռիսկերը կարող են հանգեցնել պարտատոմսերի գնի նվազմանը:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը: Ընկերության համար վարկային ռիսկը կամ դեֆոլտի ռիսկը այն ռիսկն է, որ ընկերությունը չի կարողանա կատարել իր ֆինանսական պարտավորությունները, ինչպիսիք են վարկերի կամ պարտատոմսերի մարումը, ֆինանսական դժվարությունների կամ անվճարունակության



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

պատճառով: Վերոնշյալ խնդիրները կարող են սահմանափակել ընկերության գործառնական ծրագրերը և նվազեցնել ներդրողների վստահությունը, ինչի հետևանքով կարող է թուլանալ շուկայական դիրքը:

Ընկերության վարկային ռիսկը պայմանավորված է ֆինանսական լւերիջի մակարդակով, որը արտահայտվում է Ընկերության ընդհանուր պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցությամբ: 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական լւերիջի գործակիցը կազմել է 4.68 (ընդ որում կարճաժամկետ և երկարաժամկետ վարկերի և փոխառությունների մասնաբաժինը ընդհանուր պարտավորություններում կազմում է 44.15%): Ցուցանիշը ցույց է տալիս, որ Ընկերության ֆինանսավորման կառուցվածքում պարտավորությունների մասնաբաժինը գերակշռում է սեփական կապիտալին, ինչը պահանջում է պարտքային բեռի և վճարունակության շարունակական վերահսկողություն:

Ընկերության 2024 և 2025 թվականների դրությամբ կարճաժամկետ և երկարաժամկետ վարկերի և փոխառությունների կառուցվածքը ներկայացված է ստորև.

<i>(արտահայտված հազար հայկական (<<)) դրամով)</i>	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
<i>Ոչ ընթացիկ</i>		
Բանկային վարկեր և վարկային գծեր/օվերդրաֆտներ	1,037,959	-
	1,037,959	-
<i>Ընթացիկ</i>		
Բանկային վարկեր և վարկային գծեր/օվերդրաֆտներ	372,437	23,130
Կապակցված կողմերից չապահովված փոխառություններ	108,400	19,748
	480,837	42,878



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

Ընդամենը վարկեր և փոխառություններ

1,518,796

42,878

Բանկային վարկերն ունեն 5 տարի մարման ժամկետ և տարեկան 7% միջին տոկոսադրույք (2024թ.՝ 9.6% տոկոսադրույք):

Կապակցված կողմերից չապահովված փոխառությունները կարճաժամկետ, անտոկոս փոխառություններ են:

Վարկերն ապահովված են ընկերությանը պատկանող տրանսպորտային միջոցներով և սարքավորումներով:

Իրացվելիության ռիսկ: Իրացվելիության ռիսկի հետևանքով դժվարություններ կարող են առաջանալ Ընկերության ակտիվներն արագ և շուկայական գնով իրացնելու ժամանակ, հետևաբար նաև խնդիրներ կարող են առաջանալ պայմանագրային պարտավորությունները ժամանակին և ամբողջությամբ կատարելու հետ կապված:

Ընկերության ընդհանուր իրացվելիության գործակիցը, որը հաշվարկվում է որպես ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների հարաբերակցություն, արտացոլում է ընկերության կարճաժամկետ պարտավորությունները փակելու ունակությունը: 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ընդհանուր իրացվելիության գործակիցը կազմել է 1.36, իսկ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1.76:

Գործակցի աճը վկայում է Ընկերության կարճաժամկետ վճարունակության բարելավման մասին: 2025 թվականի վերջի դրությամբ ընթացիկ ակտիվները 1.76 անգամ գերազանցել են ընթացիկ պարտավորությունները, ինչը ցույց է տալիս, որ Ընկերությունն ունի բավարար ռեսուրսներ իր կարճաժամկետ պարտավորությունները ժամանակին կատարելու համար և իրացվելիության ռիսկը գտնվում է վերահսկելի մակարդակում:



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները: Խումբը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Խումբը ստիպված կլինի մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական հոսքերը:

2025թ.	Անտոկոս	Պարտավորություն ֆինանսական վարձակալության գծով	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		11.29%	7%	
Մինչև 1 տարի	847,372	192,024	372,437	1,411,833
1-5 տարի	-	558,754	878,809	1,457,563
Ավելի քան 5 տարի	-	36,431	139,150	175,581
	847,372	787,209	1,410,396	3,044,977

Խումբն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Խմբի դրամական միջոցները և



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

առևտրային դեբիտորական պարտքերն էականորեն ցածր են անհրաժեշտ դրամական արտահոսքերից: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերից դրամական հոսքերը պայմանագրով ենթակա են ստացման 1-2 ամսվա ընթացքում: Խումբը մտադիր է մարել պարտավորությունները տարեվերջի դրությամբ առկա պաշարների վաճառքից եկամտի հաշվին:

Շուկայական ռիսկ: Շուկայական ռիսկը այն ռիսկն է, երբ շուկայական գործոնների փոփոխությունները, մասնավորապես՝ տոկոսադրույքների, արտարժույթի փոխարժեքների և շուկայական գների տատանումները, կարող են բացասաբար անդրադառնալ Ընկերության ֆինանսական գործիքների արժեքի, ապագա դրամական հոսքերի, ֆինանսական արդյունքների և ընդհանուր ֆինանսական կայունության վրա: Շուկայական պայմանների փոփոխությունները, առողջապահական ոլորտում պահանջարկի տատանումները, պետական գնումների ծավալների փոփոխությունը կամ բժշկական կենտրոնների ներդրումային ակտիվության նվազումը կարող են ազդել Ընկերության վաճառքների և ֆինանսական արդյունքների վրա:

Արտարժույթային ռիսկ: Խումբը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Խմբի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Խմբի՝ արտերկրյա վաճառքներից և ձեռքբերումներից, տրամադրված և ստացված փոխառություններից, վարկերի և վարձակալությունների գծով պարտավորություններից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով, ռուբլիով և եվրոյով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Խմբին ենթարկվում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացուլված



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

գումարները փոխարկվում են հայկական դրամի՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

31 դեկտեմբերի 2025թ. <i>(արտահայտված հազար հայկական (<<) դրամով)</i>	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի
Ֆինանսական ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	910	221
Փոխառություններ	-	420,902	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	708	1,059	2,894
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	708	422,871	3,115
Ֆինանսական պարտավորություններ			
Բանկային վարկեր և փոխառություններ	22,752	1,452,815	-
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	-	658,307	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	348,887	99,794	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	371,639	2,210,916	-
Զուտ արդյունք	(370,931)	(1,788,045)	3,115



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման

Պարտքային ռիսկ: Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ընկերության համար պարտքային ռիսկը հիմնականում առաջանում է դեբիտորական պարտքերից, ժամկետային ավանդներից, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներից և այլ ֆինանսական ակտիվներից:

Խմբի ղեկավարությունը զգուշորեն կառավարում է պարտքային ռիսկը: Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Խմբի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից: Ռիսկերի կառավարման նպատակով պարտքային ռիսկի գնահատումը ներառում է մոդելների օգտագործում, քանի որ ռիսկը տատանվում է՝ կախված շուկայական պայմաններից, դրամական միջոցների ակնկալվող հոսքերից և ժամանակի ընթացքից:

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

(արտահայտված հազար հայկական 31 դեկտեմբերի 2025թ. 31 դեկտեմբերի 2024թ. (<<) դրամով)

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Տրամադրված փոխառություններ	787,383	-
Առևտրային դեբիտորական պարտքեր	362,496	236,677
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	33,671	42,887
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	1,183,550	279,564

Առևտրային դեբիտորական պարտքեր



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

Պարտքային ռիսկի գծով կենտրոնացումը սահմանափակ է՝ Խմբի հաճախորդների բազայի մեծության և միմյանց հետ կապակցված չլինելու պատճառով:

Երբ հավանական չէ առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրումը, դրանք դուրս են գրվում (ապաճանաչվում են): Վճարում չկատարելը և Խմբի հետ այլընտրանքային վճարման վերաբերյալ համաձայնության չգալը համարվում է գումարի վերադարձման վերաբերյալ խելամիտ սպասումներ չունենալու համար հայտանիշ:

Ելնելով վերը նկարագրվածից՝ առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների մնացորդները ներկայացված են հետևյալ աղյուսակներում.

<i>31 դեկտեմբերի 2025թ</i> <i>(արտահայտված հազար</i> <i>հայկական (<<) դրամով)</i>	Ակնկալվող պարտքային կորուստ	Համախառն հաշվեկշռային արժեք	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում
Մինչև 1 ամիս	1.70%	206,039	3,510
1 ամսից 2 ամիս	2.69%	59,603	1,603
2 ամսից 3 ամիս	5.37%	31,352	1,684
3 ամսից 6 ամիս	10.38%	70,647	7,333
6 ամսից մինչև 1 տարի	28.61%	12,587	3,601
1 տարուց ավելի	100%	86,384	86,384
		466,612	104,116

<i>31 դեկտեմբերի 2024թ</i> <i>(արտահայտված հազար</i> <i>հայկական (<<) դրամով)</i>	Ակնկալվող պարտքային կորուստ	Համախառն հաշվեկշռային արժեք	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում
Մինչև 1 ամիս	2.25%	183,433	4,132



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

1 ամսից 2 ամիս	2.69%	7,188	193
2 ամսից 3 ամիս	5.37%	27,876	1,498
3 ամսից 6 ամիս	10.38%	24,225	2,513
6 ամսից մինչև 1 տարի	28.61%	3,209	918
1 տարուց ավելի	100%	43,499	43,499
		289,430	52,753

Ղեկավարության համոզմամբ անհուսալի և կասկածելի դեբիտորական պարտքերի գծով սովորական պահուստից առավել այլ պարտքային ռիսկի պահուստ չի պահանջվում:

Հոլդինգային կառուցվածքին բնորոշ ռիսկ: Թողարկողը հանդիսանում է հոլդինգային կազմակերպություն, և նրա ֆինանսական վիճակը որոշակիորեն կախված է դուստր ընկերության գործունեության արդյունքներից և ֆինանսական կայունությունից: Դուստր ընկերության գործունեության արդյունավետության նվազումը, ֆինանսական ցուցանիշների վատթարացումը կամ այլ անբարենպաստ զարգացումները կարող են բացասաբար ազդել Թողարկողի ֆինանսական արդյունքների, դրամական հոսքերի և իր պարտավորությունները կատարելու կարողության վրա:

Ոլորտի կարգավորման դաշտի փոփոխությունների հետ կապված ռիսկ: Առողջապահության ոլորտը Հայաստանում ենթակա է խիստ պետական կարգավորման: Թողարկողը ենթակա է առողջապահական ոլորտը կարգավորող ազգային և տեղական նորմերի պահպանմանը, այդ թվում՝ լիցենզավորման և գործունեության ստանդարտների պահանջներին: Կարգավորող շրջանակի փոփոխությունները, ինչպես նաև լիցենզիաների տրամադրման կամ վերանայման գործընթացների հնարավոր ձգձգումները կամ սահմանված պահանջներին չհամապատասխանելը կարող են հանգեցնել տուգանքների, գործառնական սահմանափակումների, ինչպես նաև հեղինակության վնասի:



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

Միաժամանակ, բժշկական սարքավորումների ներմուծման, սերտիֆիկացման, գրանցման և լիցենզավորման պահանջների, ինչպես նաև բժշկական ծառայությունների մատուցման կանոնների փոփոխությունները կարող են առաջացնել լրացուցիչ ծախսեր և ազդել գործունեության կազմակերպման վրա: Մասնավորապես, հեմոդիալիզի ծառայությունների մատուցման ոլորտում կարգավորող պահանջների խստացումը կամ լիցենզավորման պայմանների փոփոխությունները կարող են բացասաբար անդրադառնալ Ընկերության գործունեության վրա:

Հիվանդների անձնական և բժշկական տեղեկատվության ոչ պատշաճ կառավարումը կարող է առաջացնել իրավական և ֆինանսական հետևանքներ: Ընկերությունը նվազեցնում է վերոնշյալ ռիսկերի առաջացման հավանականությունը՝ համապատասխան մասնագիտական կարողություններ ունեցող աշխատակիցների ներգրավմամբ և ներքին գործընթացներում համապատասխանության ապահովման մեխանիզմների կիրառմամբ:

Հարկային դաշտի փոփոխություններով պայմանավորված ռիսկ: Հարկային օրենսդրության, ինչպես նաև հարկային մարմինների որոշումների հնարավոր փոփոխությունները կարող են նշանակալիորեն ազդել Ընկերության գործունեության արդյունավետության և դրամական հոսքերի վրա:

Մրցակցային ռիսկ: Թողարկողի գործունեության՝ բժշկական սարքավորումների և պարագաների շուկայում առկա մրցակցային միջավայրը, ինչպես նաև դրա հնարավոր սրացումները, կարող են առաջացնել ռիսկեր, որոնք բացասաբար կանդրադառնան Ընկերության գործառնական և/կամ ֆինանսական արդյունքների վրա: Մրցակցությունը կարող է ուժեղանալ ինչպես գործող մասնակիցների ակտիվացման, այնպես էլ նոր ընկերությունների մուտքի արդյունքում: Մրցակիցների կողմից գների նվազեցումը, նոր ապրանքանիշերի ներմուծումը կամ ավելի շահավետ պայմանների առաջարկումը կարող է հանգեցնել



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

Թողարկողի հաճախորդների թվի նվազման և/կամ վաճառքների ծավալների կրճատման, ինչը, իր հերթին, կարող է բացասաբար անդրադառնալ Ընկերության շուկայական մասնաբաժնի և ֆինանսական ցուցանիշների վրա:

Ընկերության մրցակցային դիրքը հիմնված է միջազգային ճանաչում ունեցող արտադրողների արտադրատեսակների ներկայացման, առաջարկվող լուծումների որակի և մասնագիտական փորձառության վրա: Մրցակցային առավելություններն առավել մանրամասն ներկայացված են Ազդագրի 23.2 բաժնում:

Տնտեսական և քաղաքական ռիսկ: Հայաստանի Հանրապետության տնտեսական իրավիճակի վատթարացումը, առողջապահական ծախսերի կրճատումը, գնաճը և ֆինանսական շուկաների անկայունությունը կարող են բացասաբար անդրադառնալ Ընկերության գործունեության և ֆինանսական արդյունքների վրա:

Ներքին և արտաքին քաղաքական զարգացումները, պետական քաղաքականությունների փոփոխությունները, ինչպես նաև միջազգային հարաբերությունների հնարավոր լարվածությունները կարող են նույնպես բացասաբար ազդել Ընկերության գործունեության վրա:

Գործառնական ռիսկ: Ընկերության գործունեությունը ներառում է բժշկական սարքավորումների սպասարկում, հեմոդիալիզի կենտրոնների շահագործում և բժշկական ծառայությունների կազմակերպում: Սարքավորումների տեխնիկական խափանումները, մասնագիտական անձնակազմի պակասը, տեղեկատվական համակարգերի աշխատանքի խափանումները կամ բժշկական ծառայությունների մատուցման գործընթացում առաջացող այլ խնդիրները կարող են հանգեցնել գործունեության ընդհատման և ֆինանսական կորուստների:



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

Ավելին, տվյալների պաշտպանության պահանջների խստացումը կամ դրանց խախտումները, ինչպես նաև հիվանդների անձնական և բժշկական տեղեկատվության ոչ պատշաճ մշակումը կարող են առաջացնել իրավական և ֆինանսական հետևանքներ:

Ընկերության գործառնական ռիսկերը կարող են նաև պայմանավորված լինել դուստր ընկերության գործունեությամբ, ներառյալ դրանց գործառնական գործընթացների խափանումները կամ կառավարման դժվարությունները, որոնք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ընդհանուր գործունեության և ֆինանսական արդյունքների վրա:

Ընկերությունը նպատակ ունի նվազեցնել նշված ռիսկերը՝ համապատասխան մասնագիտական կարողությունների ներգրավման և ներքին վերահսկողական ու համապատասխանության մեխանիզմների կիրառման միջոցով:

Արտաքին հանգամանքներով պայմանավորված ռիսկ: Ընկերությունը կարող է բախվել արտաքին գործոններից բխող այնպիսի ռիսկերի, որոնք չեն կարող կառավարվել կամ կանխատեսվել: Շատ հանգամանքներ, որոնք պայմանավորված են պետական քաղաքականությամբ, միջազգային զարգացումներով, առողջապահական կամ այլ արտակարգ իրավիճակներով, գտնվում են ընկերության վերահսկողությունից դուրս: Օրինակ՝ Ընկերությունը չի կարող կանխատեսել, թե ապագայում ինչ որոշումներ կընդունի կառավարությունը՝ արտակարգ դրության, բնական աղետների, համաճարակների, տնտեսական անկման կամ այլ նմանատիպ իրավիճակների դեպքում:

Տրանսպորտային և լոգիստիկ գործընթացների ռիսկ: Նման ռիսկ կարող է առաջանալ սահմանային անցակետերում ուշացումների, փոխադրումների հետ կապված վարչարարական խափանումների կամ տրանսպորտային միջոցների տեխնիկական խնդիրների հետևանքով: Այսպիսի խոչընդոտները կարող են ժամանակավորապես դադարեցնել ապրանքների



ԱՁԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

մատակարարումը, ավելացնել ծախսերը և խախտել մատակարարման ժամանակացույցը, ինչը անմիջական ազդեցություն ունի եկամուտների և հաճախորդների վստահության վրա:

Կորպորատիվ կառավարման ռիսկ: Ընկերության կորպորատիվ կառավարման կառուցվածքը, ներառյալ դուստր ընկերության գործունեության համակարգումը, պահանջում է արդյունավետ վերահսկողություն, հստակ հաշվետվողականություն և պատշաճ կորորդինացիա: Կառավարման գործընթացներում հնարավոր թերությունները կամ ոչ արդյունավետ որոշումների ընդունումը կարող են հանգեցնել գործառնական ծախսերի աճի, նախագծերի իրականացման ձգձգումների կամ ֆինանսական արդյունքների վատթարացման:

Հեմոդիալիզի կենտրոնների ընդլայնման ռիսկ: Ընկերությունը իրականացնում է հեմոդիալիզի նոր կենտրոնների գործարկման ծրագիր: Նոր կենտրոնների բացման գործընթացում կարող են առաջանալ շինարարական, տեխնիկական, լիցենզավորման կամ ֆինանսավորման հետ կապված դժվարություններ, որոնք կարող են հանգեցնել ծրագրերի իրականացման ուշացումների, ծախսերի աճի կամ ակնկալվող արդյունքների/եկամուտների չապահովման:

2.2 Թողարկվող պարտատոմսերին առնչվող ռիսկեր

Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ առողջապահության և բժշկական ծառայությունների ոլորտում գործունեություն իրականացնող ընկերությունների պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ: Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը:

Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության վրա բացասական ազդեցություն ունեցող ռիսկերի հետևանքով պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը կապված գնի



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖԵՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

անկման և շուկայում իրացվելիության հետ: Թողարկված պարտատոմսերը շրջանառության ժամկետի ընթացքում կարող են բացասական փոփոխությունների ենթարկվել տնտեսական վիճակի անբարենպաստ փոփոխությունների հետևանքով, ուստի Թողարկողը չի կարող երաշխավորել, որ ներդրողը ցանկացած պահի կարող է իրացնել պարտատոմսերը երկրորդային շուկայում իր համար շահավետ գնով:

Հնարավոր ռիսկերի շարքում կարելի է նշել.

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկ: Այն կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան ձեռքբերման գինն էր:

Կազմակերպությունը պարտատոմսերի իրացվելիության բարձրացման համար նախատեսում է վերջիններիս օժտել որոշակի ներդրումային որակներով, այն է՝ շուկա ստեղծողի (market maker) միջոցով ապահովել պարտատոմսերի իրացվելիությունը: Այնուամենայնիվ, Թողարկողը չի կարող երաշխավորել, որ իր կողմից թողարկված պարտատոմսերը դրանց շրջանառության ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար ֆինանսապես շահավետ գնով:

Ինչպես նաև ցանկանում ենք տեղեկացնել, որ շուկա ստեղծողի մշտական առկայության ապահովման ռիսկ ևս կա, ինչը կարող է ուղակիորեն ազդել պարտատոմսերի իրացվելիության վրա:



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

Արտարժույթային ռիսկ: Ներդրողը կարող է կրել նաև փոխարժեքների տատանման հետ կապված կորուստներ ՀՀ դրամի և արտարժույթի փոխանակման ժամանակ: Սույն ռիսկը, հատկապես առնչվելի է այն ներդրողների համար, ովքեր պարտատոմսերի ձեռք բերման և մարման դիմաց ստացվող գումարները փոխանակելու են մեկ արժույթից մեկ այլ արժույթի:

Տոկոսադրույքի ռիսկ: Շուկայում գործող տոկոսադրույքների փոփոխությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ պարտատոմսերի գնի և եկամտաբերության վրա, քանի որ պարտատոմսի գինն ու եկամտաբերությունը գտնվում են միմյանցից հակադարձ կախվածության մեջ:

Կենտրոնական բանկի կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի հնարավոր բարձրացումը կարող է հանգեցնել թողարկված պարտատոմսերի գրավչության նվազմանը, ինչը, իր հերթին, կարող է բացասաբար ազդել դրանց իրացվելիության և ներդրողների սպասվող եկամտաբերության վրա:

Շուկայական ռիսկ: Պարտատոմսերի պահանջարկը և, համապատասխանաբար, դրանց շուկայական գինը կարող են կարճաժամկետ կամ երկարաժամկետ ժամանակահատվածում փոփոխվել՝ պայմանավորված ներքին և միջազգային ֆինանսական շուկաներում տնտեսական իրավիճակով, տոկոսադրույքների մակարդակով, ներդրումային սպասումներով և այլ գործոններով: Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ պարտատոմսերի շուկայական գինը կարող է ժամանակի ընթացքում ինչպես նվազել, այնպես էլ աճել:

Միաժամանակ, ներդրողները պետք է նկատի ունենան, որ անկախ պարտատոմսերի շուկայական գնի տատանումներից՝ Թողարկողի կողմից վճարվող արժեկտրոնային եկամուտների և պարտատոմսերի մարման պահին վճարման ենթակա գումարների չափը, արտահայտված թողարկման արժույթով, մնում է անփոփոխ:



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում Թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, արժեկտրոնային վճարումները կատարելու կամ պարտատոմսերն անվանական արժեքով մարելու անհնարինության և Թողարկողի հնարավոր սնանկացման հետ:

Գնաճի կամ գնողունակության ռիսկ: Թողարկողի կողմից իր Պարտատոմսերի դիմաց առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը գնահատելիս ներդրողները պետք է հաշվի առնեն, որ Հայաստանում գնաճի առկայության պարագայում Պարտատոմսերի իրական եկամտաբերությունը կարող է լինել անվանական արժեկտրոնային եկամտաբերությունից ավելի ցածր:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Ընկերության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և արդյունքում նաև իրացվելիության վրա:

Համաձայն գործող օրենսդրության՝ 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված տոկոսները կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտները, ազատվում են եկամտային հարկից: Ապագա օրենսդրական փոփոխությունները կարող են վերացնել կամ սահմանափակել այս արտոնությունը, ինչի հետևանքով պարտատոմսերի եկամուտը կարող է ենթարկվել եկամտային հարկման՝ նվազեցնելով դրանց գրավչությունը և իրացվելիությունը:



ԱԶԴԱԳԻՐ
«ԴՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

Թողարկողը հարկ է համարում ընդձեռն, որ Ազդագիրը չպետք է դիտարկել որպես հարկային որլորտի խորհրդատվություն. այս առումով, ներդրողին հորդորում ենք ստանալ հարկային որլորտի մանսագետի խորհրդատվություն:

3. Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ

Ընկերության գործունեությունը մշտապես գտնվում է Ընկերության մասնակիցների և գործադիր մարմնի ուշադրության ներքո, ովքեր օպերատիվ արձագանքում են շուկայական իրավիճակի փոփոխություններին:

Թողարկողը և դուստր ընկերությունը ներգրաված չէ ընթացիկ դատական, արբիտրաժային և (կամ) վարչական իրավական վարույթների մեջ, որոնք կարող են էական ազդել Ընկերության ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա և/կամ կարող են ունենալ կամ վերջերս ունեցել են էական ազդեցություն:

4. Թողարկողի աուդիտ իրականացնող անձ

Կազմակերպության 2025 և 2024 թվականների անկախ աուդիտորական ստուգումն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, որը գրանցվել է ՀՀ-ում 2010 թվականին (գրանցման համար՝ 264.120.09235):

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հասցեն է՝ ՀՀ ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի փող. 9, 0015, Երևան Պլազա բիզնես կենտրոն, հեռ.՝ +374 (10) 50 09 64/61, ինտերնետային կայքի հասցեն է՝ <https://www.grantthornton.am/>:

Աուդիտորական կազմակերպության տնօրենն է Արմեն Հովհաննիսյանը:

Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ ֆինանսական հաշվետվությունների էական անճշտություններից զերծ լինելու և միջազգային ստանդարտներին



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման

համապատասխանելու մասին: Աուդիտորական կազմակերպության եզրակացությունները ներկայացված են կից Հավելվածներում:

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի ընթացքում թողարկողի աուդիտն իրականացրած անկախ աուդիտորը անդամակցել է «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» մասնագիտական կառույցին: Թողարկողի աուդիտն իրականացրած անկախ աուդիտորը այլ մասնագիտական կառույցներին անդամակցություն չունի:

5. Թողարկողի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

Ըստ կազմակերպության կանոնադրության՝ Ընկերության կառավարման մարմիններն են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը և Ընկերության գործադիր մարմինը՝ Տնօրենը:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

5.1 Ընկերության մասնակիցներն են.

<i>N</i>	<i>Մասնակիցներ</i>	<i>Մասնաբաժնի չափը</i>	<i>Թողարկողի կանոնադրական կապիտալում բաժնեմասի տոկոսը</i>
----------	--------------------	------------------------	---



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

1	Արթուր Խաչատրյանի Մեջբռնյան	306,050,000 (երեք հարյուր վեց միլիոն հիսուն հազար)	100%
----------	------------------------------------	--	------

5.2 Աշխատակիցներ

Ընկերությունը 2026 թվականի ապրիլի 30-ի դրությամբ ունի 44 աշխատակից:

N	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Բնակության վայր	Իրավասություններն ու պարտականությունները	Կազմակերպության գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Փորձառություն
1	Արթուր Մեջբռնյան	Միակ մասնակից	ՀՀ, ք. Երևան, Արմենուի Տիգրանյան 12/2	Ընկերության զարգացման ռազմավարության որոշում	Չի իրականացնում	30 տարի
2	Արթուր Մարտիրոսյան	Գործադիր մարմնի ղեկավար (Տնօրեն)	ՀՀ, ք. Երևան, Կիեվյան 26 շենք, բնկարան 37	Ընկերության ընթացիկ կառավարում	Չի իրականացնում	15 տարի



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

3	Սեդա Քոչարյան	Ավագ հաշվապահ	ՀՀ, ք. Երևան, Արաբկիր 39 փ. 1Ա	Հաշվապահների թիմի ղեկավարում, Հաշվապահական հաշվեկշիռների և հաշվետվությունների կազմում, ստուգում և ներկայացում	Չի իրականացնում	Ավելի քան 10 տարի
----------	----------------------	---------------	--------------------------------	---	-----------------	-------------------

6. Առաջարկվող պարտատոմսերի հիմնական տվյալները

Տեսակը	Անվանական, արժեկտրոնային
Ձևը	ոչ փաստաթղթային
Փոխարկելիությունը	ոչ փոխարկելի
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը, արժույթը	100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ
Թողարկման ընդհանուր ծավալը	1,500,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ
Տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր քանակը	15,000 (տասնհինգ հազար) հատ
Տեղաբաշխման ձևը	չերաշխավորված
Տեղաբաշխման օրը	Հրապարակային առաջարկը սկսվելու է սույն Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցելու օրվան հաջորդող 5-րդ աշխատաքային օրը և տևելու է մինչև 40 օրացուցային օր:
Արժեկտրոնի վճարման պարբերականությունը	Եռամսյակային, Եթե արժեկտրոնների վճարման օրը ոչ աշխատանքային



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման

	օր է, ապա արժեկտրոնների վճարման օր է հանդիսանում այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը:
Տարեկան արժեկտրոնի եկամտաբերությունը	13%
Շրջանառության ժամկետը	36 ամիս (3 տարի) Եթե պարտատոմսերի մարման օրը ոչ աշխատանքային օր է, ապա պարտատոմսերի մարումը կատարվում է մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը:
Շրջանառության ձևը	Բացառապես կարգավորվող շուկայում ազատ շրջանառության իրավունքով
Պարտատոմսերի ապահովվածությունը	Չապահովված

Տեղաբաշխվող պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային վճարումները կատարվելու են ՀՀ դրամով:

Թողարկողի կողմից անվանական պարտատոմսերի թողարկման և հետագա տեղաբաշխման նպատակն է ներգրավել ֆինանսական միջոցներ՝ ընկերության գործունեության ընդլայնման և ծառայությունների զարգացման համար:

Մասնավորապես, նախատեսվում է ձեռք բերել երկու տարածք՝ Արտաշատ և Հրազդան քաղաքներում, որտեղ կմատուցվեն բազմապրոֆիլ ախտորոշիչ ծառայություններ: Վերջիններս հնարավորություն կտան ավելացնել սպասարկվող հիվանդների թիվը և ընդլայնել մատուցվող ծառայությունների շրջանակը: 2027թ.-ին նախատեսվում է սպասարկել շուրջ 400 հիվանդ:

Հրազդանում Ընկերությունը ձեռք է բերել նախնական պայմանավորվածություն տարածքի ձեռքբերման կապակցությամբ, որը բավարարում է հեմոդիալիզի և ախտորոշման կլինիկայի



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

գործարկման համար անհրաժեշտ բոլոր պայմաններին: Նշված տարածքում իրականացվելու է միայն կոսմետիկ վերանորոգում և բժշկական սարքավորումներով կահավորում:

Արտաշատում Ընկերությունը ևս նախատեսում է ձեռք բերել տարածք և գործարկել հեմոդիալիզի և ախտորոշման կենտրոն, սակայն տվյալ քաղաքում Ընկերությունը դեռևս իրականացնում է համապատասխան տարածքի որոնում:

Միաժամանակ պլանավորվում է ընդլայնել մասնաճյուղերի ցանկը Երևանում: Նախատեսվում է նաև ձեռք բերել վերջին սերնդի մագնիսառեզոնանսային տոմոգրաֆ, ինչպես նաև այլ ախտորոշիչ սարքավորումներ:

7. Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը

7.1 Պարտատոմսերի տեղաբաշխման գործընթացի համառոտ նկարագիրը

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն և պատշաճ կերպով Թողարկողին ներկայացնեն պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը, և որով այդ պայմանները կդառնան ներդրողների համար պարտադիր:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականները կիրապարակվեն Տեղաբաշխողի և/կամ Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքերում:

Հայտ-հանձնարարականում պարտադիր լրացման դաշտ է համարվում ներդրողի արժեթղթերի հաշվի համարը և արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը: Այդ նպատակով ներդրողները պարտավոր են որևէ հաշվի օպերատորի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական արժեթղթերի հաշիվ և կրել վերջինիս հետ կապված ծախսերը:



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման

Հետևյալ հղումով ներդրողը կարող է տեսնել այն պահառուների անվանումները և գտնվելու վայրերը, բացառությամբ Կենտրոնական Բանկի, որտեղ կարելի է արժեթղթերի հաշիվ բացել՝ [CDA](#):

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի լրացումից և պատշաճ կերպով Թողարկողին առաքումից հետո պարտատոմսերի ձեռքբերման համար համապատասխան դրամական միջոցները ներդրողների կողմից պետք է մուտքագրվեն թողարկման նպատակով բացված հաշվեհամարին մինչև հայտ-հանձնարարականի ձեռքբերման օրվա ավարտը: Հայտ-հանձնարարականը կհամարվի վավեր պատշաճ առաքման և համապատասխան վճարի կատարման հիմքով:

Ընկերությունը դրամական միջոցների հավաքագրման և պարտատոմսերի տեղաբաշխման նպատակով «Ինեկորբանկ» ՓԲԸ-ում բացել է հետևյալ հաշվեհամարը՝ 2050022849041001 (AMD):

Սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ձեռքբերման օրվա ավարտից հետո, ինչպես նաև պարտատոմսերի տեղաբաշխման նախատեսված վերջնաժամկետից հետո Թողարկման հաշվեհամարին ստացված գումարները ենթակա են ետ վերադարձման, իսկ դրանց համապատասխան հայտ-հանձնարարականները չեն կարող բավարարվել:

Պարտատոմսերում ներդրում կատարող անձը կարող է եկամուտ ստանալ հետևյալ դեպքերում՝

Պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսից,

- Մինչև մարումը վաճառքի և գնման գների դրական տարբերությունից (կապիտալի հավելված):



7.2 Պարտատոմսերի տեղաբաշխման գինը

Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$DP = \frac{C}{f} \sum_{i=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{i-1+\tau}} + \frac{100}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}}$$

որտեղ՝

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

DP - Պարտատոմսի գինն է,

DSN - գործարքի կատարման օրից (settlement/trade date) մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

f- արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,

N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,

C - տարեկան արժեկտրոնը մեկ պարտատոմսի անվանական արժեքի դիմաց,

Y - մինչև մարում եկամտաբերություն:

Ներդրողները պարտավոր են Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ հաշվի օպերատորի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական արժեթղթերի հաշիվ և կրել վերջինիս հետ կապված ծախսերը:

Հետևյալ հղումով ներդրողը կարող է տեսնել այն պահառուների անվանումները և գտնվելու վայրերը, որտեղ կարելի է արժեթղթերի հաշիվ բացել՝ [CDA](#) :



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

7.3 Այլ էական տեղեկություններ

Արժեկտրոնի գումարը վճարվում է պարտատոմսերի սեփականատերերին, արժեկտրոնի հաշվարկման օրը: Եթե արժեկտրոնի հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարման օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Արժեկտրոնների վճարումը կատարվում է ՀՀ դրամով:

Արժեկտրոնների հաշվարկման օր է համարվելու Պարտատոմսերի տեղաբաշխումն սկսելու օրվան հաջորդող 3-րդ, 6-րդ, 9-րդ, 12-րդ, 15-րդ, 18-րդ, 21-րդ, 24-րդ, 27-րդ, 30-րդ, 33-րդ և 36-րդ ամիսների համապատասխան օրերը:

7.3.1 Համալիր հարկային ստուգումներ

Ընկերությունում 17.12.2021թ.-ից մինչև 19.01.2022թ. իրականացվել է համալիր հարկային ստուգում, որի արդյունքում ՀՀ ՊԵԿ-ի կողմից 11.11.2021թ. կազմվել է N 3005336 ակտը: Նշված ստուգման արդյունքներով Ընկերությունում խախտումներ չեն հայտնաբերվել:



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

8. Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները

(Հազար ՀՀ դրամ)

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Այլ կազմակերպությունների համար

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ցուցանիշի անվանումը	2025 <i>Աուդիտ անցած</i>	2024 <i>Աուդիտ անցած</i>	2023 <i>Աուդիտ չանցած</i>
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	1,951,642	1,809,941	1,952,773
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	(1,211,495)	(1,203,014)	(1,394,363)
Համախառն շահույթ (վնաս)	740,147	606,927	558,410
Իրացման ծախսեր	(95,426)	(72,116)	(77,341)
Վարչական ծախսեր	(251,318)	(140,345)	(125,736)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	393,403	312,376	355,333
Գործառնական այլ եկամուտներ	408,974	41,928	47,006
Գործառնական այլ ծախսեր	(124,210)	(46,443)	(63,574)
Գործառնական շահույթ (վնաս)	740,847	409,590	338,765
Ֆինանսական եկամուտ	31,363	43	72
Ֆինանսական ծախսեր	(135,256)	(9,982)	(11,635)



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս)	-	-	-
Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս)	-	-	-
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)	(22,035)	7,323	8,155
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	-	-	-
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)	248,255	-	-
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	863,174	406,974	335,357
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	(119,986)	(71,463)	(53,686)
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	743,188	335,511	281,671

ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

Ցուցանիշի անվանումը	2025	2024	2023
	<i>Աուդիտ անցած</i>	<i>Աուդիտ անցած</i>	<i>Աուդիտ անցած</i>
Հիմնական միջոցներ	312,319	143,069	188,338
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	918,372	104,000	112,355
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	-	-	-
Ոչ նյութական ակտիվներ	80	-	-
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	-	-	-
Հետաձգված հարկային ակտիվներ	30,962	14,494	9,631
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	-	-	-



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	-	-	-
<i>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</i>	<i>1,261,733</i>	<i>261,563</i>	<i>310,324</i>
Պաշարներ	1,486,859	869,988	794,927
Տրված ընթացիկ կանխավճարներ	240,776	174,303	187,085
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	466,612	289,430	166,773
Պարտքային կորուստների համար պահուստ	(104,116)	(52,753)	(77,835)
Այլ դեբիտորական պարտքեր	2,338	101	549
Տրված փոխառություններ	787,383 ³	-	-
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	-	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	33,671	42,887	23,021
Այլ ընթացիկ ակտիվներ	-	-	-
<i>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</i>	<i>2,913,523</i>	<i>1,323,956</i>	<i>1,172,355</i>
<i>Ընդամենը ակտիվներ</i>	<i>4,175,256</i>	<i>1,585,519</i>	<i>1,482,679</i>
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	66,050	36,050	34,470
Էմիսիոն եկամուտ	-	-	-
Կուտակված շահույթ	668,906	521,718	217,931
Պահուստային կապիտալ	-	-	-
Սեփական կապիտալի այլ տարրեր	-	-	-
<i>Ընդամենը սեփական կապիտալ</i>	<i>734,956</i>	<i>557,768</i>	<i>252,401</i>
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	1,037,959	-	23,130

³ Ընթացիկ փոխառությունները տրամադրվել են կապակցված կողմերին, մասնավորապես՝ «ԷյԷմԹԻՍԻ» ՍՊԸ -ին և Արթուր Մելքոնյանին, որոնք ենթակա են մարման մինչև 2026թ.-ի ավարտը: Փոխառությունները տրամադրվել են տարեկան 7% տոկոսադրույքով:



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

Վարձակալության գծով պարտավորություններ	595,186	53,058	72,042
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	148,173	-	-
<i>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</i>	<i>1,781,318</i>	<i>53,058</i>	<i>95,172</i>
Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	480,837	42,878	279,038
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	571,611	691,903	509,686
Ստացված ընթացիկ կանխավճարներ	99,879	157,791	277,322
Այլ կրեդիտորական պարտքեր	206,086	23,269	17,702
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն	108,546	39,867	33,518
Վարձակալության գծով պարտավորություններ	192,023	18,985	17,840
Այլ ընթացիկ պարտավորություններ	-	-	-
<i>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</i>	<i>1,658,982</i>	<i>974,693</i>	<i>1,135,106</i>
<i>Ընդամենը պարտավորություններ</i>	<i>3,440,300</i>	<i>1,027,751</i>	<i>1,230,278</i>
<i>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</i>	<i>4,175,256</i>	<i>1,585,519</i>	<i>1,482,679</i>

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	2025	2024	2023
	<i>Աուդիտ անցած</i>	<i>Աուդիտ անցած</i>	<i>Աուդիտ չանցած</i>
<i>Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին</i>	42,887	23,021	137,519
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զույգ հոսքեր</i>	210,663	336,743	291,282



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զույգ հոսքեր	(843,627)	(3,281)	(20,561)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զույգ հոսքեր	622,225	(313,313)	(385,077)
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	33,671	42,887	23,021

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	2025 Աուդիտ անցած	2024 Աուդիտ անցած	2023 Աուդիտ չանցած
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	743,188	335,511	281,671
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	115.0%	82.8%	111.6%
Ակտիվների շահութաբերություն (ROA)	25.8%	21.9%	19.0%
Զուտ շահույթի մարժա (NPM)	38.1%	18.5%	14.4%
Կապիտալի համարժեքության գործակից	0.18	0.35	0.17
Ֆինանսական կախվածության գործակից	4.68	1.84	4.87
Բացարձակ իրացվելիության գործակից	0.02	0.04	0.02
Ընթացիկ իրացվելիության գործակից	0.39	0.47	0.33
Ընդհանուր իրացվելիության գործակից	1.76	1.36	1.03
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	5.16	6.78	7.98
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	70.70	53.85	45.72
Պաշարների շրջանառելիության գործակից	1.03	1.45	1.75
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	355.04	252.57	208.09
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	1.38	1.43	1.73



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	263.70	254.51	210.65
---	--------	--------	--------

Ամփոփ Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են Հավելված 1-ում:

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

Ամփոփաթերթը պետք է դիտվի որպես «ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Թողարկող կամ Ընկերություն) պարտատոմսերի Ազդագրի (այսուհետ՝ Ազդագիր) ներածական համառոտ նկարագրություն, և առաջարկվող պարտատոմսերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական Ազդագրի վրա:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում: Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը թղթային տարբերակով Թողարկողի և/կամ Տեղաբաշխողի գլխամասային գրասենյակում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ վերջիններիս ինտերնետային կայքերում՝ www.ptest.am, www.dimension.am:



ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9. Ռիսկային գործոններ

Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ առողջապահության և բժշկական ծառայությունների ոլորտում գործունեություն իրականացնող ընկերությունների պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ: Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը:

Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության վրա բացասական ազդեցություն ունեցող ռիսկերի հետևանքով պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը կապված գնի անկման և շուկայում իրացվելիության հետ: Թողարկված պարտատոմսերը շրջանառության ժամկետի ընթացքում կարող են բացասական փոփոխությունների ենթարկվել տնտեսական վիճակի անբարենպաստ փոփոխությունների հետևանքով, ուստի Թողարկողը չի կարող երաշխավորել, որ ներդրողը ցանկացած պահի կարող է իրացնել պարտատոմսերը երկրորդային շուկայում իր համար շահավետ գնով:

Հնարավոր ռիսկերի շարքում կարելի է նշել.

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկ: Այն կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան ձեռքբերման գինն էր:



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖԵՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

Կազմակերպությունը պարտատոմսերի իրացվելիության բարձրացման համար նախատեսում է վերջիններիս օժտել որոշակի ներդրումային որակներով, այն է՝ շուկա ստեղծողի (market maker) միջոցով ապահովել պարտատոմսերի իրացվելիությունը: Այնուամենայնիվ, Թողարկողը չի կարող երաշխավորել, որ իր կողմից թողարկված պարտատոմսերը դրանց շրջանառության ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար ֆինանսապես շահավետ գնով: Ինչպես նաև ցանկանում ենք տեղեկացնել, որ շուկա ստեղծողի մշտական առկայության ապահովման ռիսկ ևս կա, ինչը կարող է ուղղակիորեն ազդել պարտատոմսերի իրացվելիության վրա:

Արտարժույթային ռիսկ: Ներդրողը կարող է կրել նաև փոխարժեքների տատանման հետ կապված կորուստներ ՀՀ դրամի և արտարժույթի փոխանակման ժամանակ: Սույն ռիսկը, հատկապես առնչվելի է այն ներդրողների համար, ովքեր պարտատոմսերի ձեռք բերման և մարման դիմաց ստացվող գումարները փոխանակելու են մեկ արժույթից մեկ այլ արժույթի:

Տոկոսադրույքի ռիսկ: Շուկայում գործող տոկոսադրույքների փոփոխությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ պարտատոմսերի գնի և եկամտաբերության վրա, քանի որ պարտատոմսի գինն ու եկամտաբերությունը գտնվում են միմյանցից հակադարձ կախվածության մեջ:

Կենտրոնական բանկի կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի հնարավոր բարձրացումը կարող է հանգեցնել թողարկված պարտատոմսերի գրավչության նվազմանը, ինչը, իր հերթին, կարող է բացասաբար ազդել դրանց իրացվելիության և ներդրողների սպասվող եկամտաբերության վրա:

Շուկայական ռիսկ: Պարտատոմսերի պահանջարկը և, համապատասխանաբար, դրանց շուկայական գինը կարող են կարճաժամկետ կամ երկարաժամկետ ժամանակահատվածում



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

փոփոխվել՝ պայմանավորված ներքին և միջազգային ֆինանսական շուկաներում տնտեսական իրավիճակով, տոկոսադրույքների մակարդակով, ներդրումային սպասումներով և այլ գործոններով: Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ պարտատոմսերի շուկայական գինը կարող է ժամանակի ընթացքում ինչպես նվազել, այնպես էլ աճել:

Միաժամանակ, ներդրողները պետք է նկատի ունենան, որ անկախ պարտատոմսերի շուկայական գնի տատանումներից՝ Թողարկողի կողմից վճարվող արժեկտրոնային եկամուտների և պարտատոմսերի մարման պահին վճարման ենթակա գումարների չափը, արտահայտված թողարկման արժույթով, մնում է անփոփոխ:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում Թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, արժեկտրոնային վճարումները կատարելու կամ պարտատոմսերն անվանական արժեքով մարելու անհնարինության և Թողարկողի հնարավոր սնանկացման հետ:

Գնաճի կամ գնողունակության ռիսկ: Թողարկողի կողմից իր Պարտատոմսերի դիմաց առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը գնահատելիս ներդրողները պետք է հաշվի առնեն, որ Հայաստանում գնաճի առկայության պարագայում Պարտատոմսերի իրական եկամտաբերությունը կարող է լինել անվանական արժեկտրոնային եկամտաբերությունից ավելի ցածր:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Ընկերության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և արդյունքում նաև իրացվելիության վրա:



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

Համաձայն գործող օրենսդրության՝ 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված տոկոսները կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտները, ազատվում են եկամտային հարկից: Ապագա օրենսդրական փոփոխությունները կարող են վերացնել կամ սահմանափակել այս արտոնությունը, ինչի հետևանքով պարտատոմսերի եկամուտը կարող է ենթարկվել եկամտային հարկման՝ նվազեցնելով դրանց գրավչությունը և իրացվելիությունը:

Թողարկողը հարկ է համարում ընդձեռն, որ Ազդագիրը չպետք է դիտարկել որպես հարկային որլորտի խորհրդատվություն. այս առումով, ներդրողին հորդորում ենք ստանալ հարկային որլորտի մասնագետի խորհրդատվություն:

10. Հիմնական տեղեկատվություն

Ընկերության արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման հիմնական նպատակն է հանդիսանում կապիտալի շուկայից միջոցների ներգրավումը:

Թողարկողի կողմից անվանական պարտատոմսերի թողարկման և հետագա տեղաբաշխման արդյունքում ներգրավվող միջոցները նախատեսվում է ուղղել ընկերության ծառայությունների շրջանակի ընդլայնմանը և նոր մասնաճյուղերի բացմանը: Մասնավորապես, նախատեսվում է ձեռք բերել երկու տարածք՝ Արտաշատ և Հրազդան քաղաքներում, որտեղ կմատուցվեն բազմապրոֆիլ ախտորոշիչ ծառայություններ: Վերջիններս հնարավորություն կտան ավելացնել սպասարկվող հիվանդների թիվը և ընդլայնել մատուցվող ծառայությունների շրջանակը: 2027թ.-ին նախատեսվում է սպասարկել շուրջ 400 հիվանդ:

Հրազդանում Ընկերությունը ձեռք է բերել նախնական պայմանավորվածություն տարածքի



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման

ձեռքբերման կապակցությամբ, որը բավարարում է հեմոդիալիզի և ախտորոշման կլինիկայի գործարկման համար անհրաժեշտ բոլոր պայմաններին: Նշված տարածքում իրականացվելու է միայն կոսմետիկ վերանորոգում և բժշկական սարքավորումներով կահավորում:

Արտաշատում Ընկերությունը ևս նախատեսում է ձեռք բերել տարածք և գործարկել հեմոդիալիզի և ախտորոշման կենտրոն, սակայն տվյալ քաղաքում Ընկերությունը դեռևս իրականացնում է համապատասխան տարածքի որոնում:

Միաժամանակ պլանավորվում է ընդլայնել մասնաճյուղերի ցանկը Երևանում: Նախատեսվում է նաև ձեռք բերել վերջին սերնդի մագնիսառեզոնանսային տոմոգրաֆ, ինչպես նաև այլ ախտորոշիչ սարքավորումներ:

11. Առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) արժեթղթերի հետ կապված տեղեկատվություն

Կազմակերպության կողմից թողարկվող պարտատոմսերն անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային են, որոնց շուրջ ծագող վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Պարտատոմսերի ռեեստրը վարվելու է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից:

11.1 Պարտատոմսերի պայմանները

Պարտատոմսերի տեսակը	Անվանական, արժեկտրոնային
Պարտատոմսերի ձևը	ոչ փաստաթղթային
Պարտատոմսերի փոխարկելիությունը	ոչ փոխարկելի
Արժեթղթի	թողարկվող պարտատոմսերը դեռևս չունեն տարբերակիչ



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման

տարբերակիչ ծածկագիրը (ISIN)	ծածկագիր
Պարտատոմսերի թողարկման արժույթը	ՀՀ դրամ
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
Պարտատոմսերի քանակը	15,000 (տասնհինգ հազար)
Պարտատոմսերի թողարկման ծավալը	1,500,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ
Պարտատոմսերի ռեեստրը	Պարտատոմսերի ռեեստրը ենթակա է վարման «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից
Պարտատոմսերի ապահովվածությունը	առաջարկվող պարտատոմսերն ապահովված չեն
Տեղաբաշխման ձևը	Չերաշխավորված
Տեղաբաշխող	«Դայմենշն» ՓԲԸ-ն, համաձայն Թողարկողի և «Դայմենշն» ՓԲԸ-ի միջև 11.05.2026թ.-ին կնքված պարտատոմսերի չերաշխավորված տեղաբաշխման վերաբերյալ պայմանագրի:
Շուկա Ստեղծող	Ընկերությունը նախատեսում է օգտվել Շուկա ստեղծողի ծառայություններից:
Պարտատոմսերի տեղաբաշխումը	Արտաբորսայական եղանակով:
Պարտատոմսերի թողարկման (տեղաբաշխման) օրը	Հրապարակային առաջարկը (տեղաբաշխումը) սկսվելու է սույն Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցելու օրվան հաջորդող 5-րդ աշխատաքային օրը և տևելու է մինչև 40 օրացուցային օր: Թողարկման օր է համարվում տեղաբաշխման առաջին օրը:



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

Պարտատոմսերի շրջանառության ժամկետը	36 ամիս (3 տարի) Եթե պարտատոմսերի մարման օրը ոչ աշխատանքային օր է, ապա պարտատոմսերի մարումը կատարվում է մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը:
Պարտատոմսերի տարեկան արժեկտրոնի եկամտաբերությունը	13%
Արժեկտրոնների վճարման պարբերականությունը	Եռամսյակային, Արժեկտրոնները պարտատոմսերի սեփականատերերին և/կամ անվանատերերին վճարվելու են արժեկտրոնների հաշվարկման օրը: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:
Արժեկտրոնների հաշվարկման օրեր	Արժեկտրոնների հաշվարկման օր է համարվելու Պարտատոմսերի տեղաբաշխումն սկսելու օրվան հաջորդող 3-րդ, 6-րդ, 9-րդ, 12-րդ, 15-րդ, 18-րդ, 21-րդ, 24-րդ, 27-րդ, 30-րդ, 33-րդ և 36-րդ ամիսների համապատասխան օրերը:
Օրերի հաշվարկման պայմանականությունը	<p style="text-align: center;">փաստացի/փաստացի</p> DCS=Օրերի փաստացի քանակը, D2M2Y2 - D1M1Y1 DCC=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D1M1Y1 DSN=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D2M2Y2 որտեղ՝ D1M1Y1 գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է. D2M2Y2 գործարքի կատարման ամսաթիվն է.



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման

	<p>D3M3Y3 գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:</p>
<p>Արժեկտրոնի կուտակումը</p>	$AI = FV * \frac{C}{f} * \frac{DCC}{DCC}$ <p style="text-align: center;">որտեղ</p> <p>AI - կուտակված տոկոս, FV - պարտատոմսերի անվանական արժեք, C - արժեկտրոնի տարեկան անվանական տոկոսադրույք, f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (f=4՝ եռամսյակային վճարումների դեպքում: Արժեկտրոնի կուտակումը սկսում է հաշվարկվել պարտատոմսերի թողարկման օրվանից,</p>
<p>Պարտատոմսերի գինը</p>	<p>Պարտատոմսերի գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով</p> $DP = \frac{C}{f} \sum_{i=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{i-1+\tau}} + \frac{FV}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}}$ $\tau = \frac{DSN}{DCC}$ <p>որտեղ՝</p> <p>DP - Պարտատոմսի գինն է, DSN - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է, DCC -գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է, f -արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (4 - եռամսյակային վճարումների համար),</p>



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

	<p>N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը</p> <p>C - միավոր պարտատոմսի տարեկան արժեկտրոնը</p> <p>y - մինչև մարում եկամտաբերություն,</p> <p>i – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոխվում է կախված տվյալ պահից մինչև վերջնական մարումը մնացած արժեկտրոնների վճարումների քանակից,</p> <p>FV- պարտատոմսի անվանական արժեք:</p>
<p>Պարտատոմսերի եկամտաբերությունը</p>	<p>Պարտատոմսերի եկամտաբերությունը հաշվարկվում է նախորդ կետում ներկայացված բանաձևի միջոցով:</p>
<p>Արժեկտրոնների վճարումը և պարտատոմսերի մարումը</p>	<p>Արժեկտրոնների վճարումը իրականացվելու է ՀՀ դրամով: Պարտատոմսերի մարումը իրականացվելու է ՀՀ դրամով:</p> <p>Արժեկտրոնների վճարումները և պարտատոմսերի մարումն իրականացվում է արժեկտրոնի վճարման օրվան և/կամ պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրվա վերջի (Ժամը 24:00–ի) դրությամբ Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ցուցակի հիման վրա, համաձայն որի Կազմակերպությունը մարման օրը հանձնարական է տալիս իր սպասարկող բանկին՝ համապատասխան վճարումները փոխանցելու Պարտատոմսերի սեփականատերերի՝ ՀՀ տարածքում գործող բանկերում բացված բանկային հաշիվներին: Վճարումներն իրականացվում են անկանխիկ ձևով: Վճարումները չեն փոխանցվում այն սեփականատերերին (անվանատերերին), որոնց բանկային հաշվի մասին տեղեկությունները բացակայում են Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ցուցակում և Կազմակերպությունը այլ կերպ չի տիրապետում այդ տեղեկությանը: Այս դեպքում այդ սեփականատերերի վճարումները երեք աշխատանքային օրվա ընթացքում փոխանցվում են նոտարի դեպոզիտ:</p>



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

Պարտատոմսերի մարման կատարում և/կամ արժեկտրոնների վճարում	Պարտատոմսերի մարման օրը և/կամ արժեկտրոնների վճարման օրը պարտատոմսի սեփականատիրոջ բանկային հաշվին համապատասխան վճարումների մուտքագրում:
Ցուցակումը	Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Կազմակերպությունը սահմանված կարգով դիմում է Բորսա՝ պարտատոմսերի շրջանառությունը կարգավորվող շուկայում ապահովելու նպատակով: Շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթն արգելվում է վաճառել տվյալ շուկայից դուրս, բացառությամբ ՀՀ ԿԲ (այսուհետ նաև՝ ԿԲ) նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերի:

11.2 Երկիրը

Պարտատոմսերը թողարկվելու են ՀՀ տարածքում՝ համաձայն ՀՀ օրենսդրության: Վեճերի և դատական գործընթացների առկայության դեպքերում վերջիններս կարգավորվելու են ՀՀ օրենսդրության համաձայն:

11.3 Առաջարկվող արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվությունը հետևյալն է.

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 70-րդ հոդվածի՝ Թողարկողի լուծարման դեպքում նրան պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ.

1. առաջին հերթին բավարարվում են լուծարվող իրավաբանական անձի գույքի գրավով ապահովված պարտավորությունների մասով պարտատերերի պահանջները,
2. երկրորդ հերթին բավարարվում են այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև լուծարվող իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում նրանց կյանքի կամ



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

առողջությունը վնաս պատճառելու համար համապատասխան պարբերական վճարումների կապիտալացման միջոցով,

3. երրորդ հերթին վճարվում է աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց արձակման նպաստների, աշխատավարձի և հեղինակային պայմանագրերով վարձատրությունը,

4. չորրորդ հերթին մարվում է պետական բյուջե կատարվող պարտադիր վճարների պարտքը,

5. հինգերորդ հերթին հաշվարկներ են կատարվում մնացած պարտատերերի հետ՝ բացառությամբ ստորադաս փոխառություններով պարտատերերի,

6. վեցերորդ հերթին հաշվարկներ են կատարվում ստորադաս փոխառություններով պարտատերերի հետ:

Յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարելուց հետո: Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են հինգերորդ հերթին: Ընդ որում, Թողարկողի հետ փոխկապակցված անձանցից ներգրավված վարկերը և/կամ փոխառությունները ստորադաս են սույն Ազդագրի շրջանակներում թողարկված պարտատոմսերի նկատմամբ, և դրանց գծով պարտատերերի պահանջները ենթակա են բավարարման պարտատոմսերի սեփականատերերի պահանջներն ամբողջությամբ բավարարելուց հետո:

Եթե լուծարումը պայմանավորված է Թողարկողի սնանկությամբ, ապա պարտատերերի պահանջները բավարարվում են հիմք ընդունելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքը, մասնավորապես՝ չապահովված պահանջները բավարարվում են համաձայն վերոնշյալ օրենքի 82-րդ հոդվածի՝ հետևյալ հերթականությամբ.



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

ա) կառավարչի (ժամանակավոր կառավարչի) վարձատրությունը և վարչական ծախսերը, այդ թվում՝

- գույքի պահպանման և տնօրինման համար անհրաժեշտ ծախսերը (սնանկության դիմումը ներկայացնելու օրվանից մինչև ֆինանսական առողջացման ծրագրի նախագծի հաստատումն ընկած ժամանակահատվածում ֆինանսավորումները),

- վարչական աշխատողների աշխատավարձը, եկամտային հարկի վճարումները և պարտադիր սոցիալական վճարները,

- վարչական ապարատը պահպանելու համար այլ անհրաժեշտ ծախսերը,

- պարտադիր սոցիալական վճարները,

- աշխատավարձի, եկամտային հարկի և պարտադիր սոցիալական վճարների վերաբերյալ փաստաթղթերի արխիվացման ծախսերը.

բ) այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև պարտապանը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար՝ համապատասխան պարբերական վճարումների կապիտալացման հաշվարկի միջոցով, ինչպես նաև պարտապան քաղաքացու նկատմամբ ալիմենտների գծով պահանջները (երեխա, անաշխատունակ ծնող, անաշխատունակ ամուսին).

գ) աշխատանքային պայմանագրերից բխող պահանջները (ներառյալ՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև լուծարումն առաջացած), բայց ոչ ավելի, քան պարտապանին սնանկ ճանաչելու պահին նախորդող վեց ամիսը, հեղինակային պայմանագրերով վարձատրությունների վճարումները և նույն



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

ժամանակահատվածում առաջացած եկամտային հարկի, սոցիալական վճարի և դրոշմանիշային վճարի գումարները.

դ) դատական ծախսերը.

ե) պարտապանին սնանկ ճանաչելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո պարտապանի գույքի իրացումից ծագող հարկային պարտավորությունները.

ե.1) չապահովված պահանջները, որոնք առաջացել են պարտապանի կողմից «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 3.1-ին մասով սահմանված դեպքում ստանձնած պարտավորությունների նկատմամբ.

զ) չապահովված պահանջները, որոնք առաջացել են պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի սահմանված կարգով իրականացված գործառնությունների (այդ թվում՝ գործունեության վերսկսման) հետևանքով.

է) չապահովված պարտատերերի պահանջները, ներառյալ՝ պարտադիր սոցիալական վճարները և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ առաջացած՝ հարկերի և (կամ) վճարների, վարչարարությունից ծագած տուգանքների գծով պարտավորությունները, ինչպես նաև «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված իրավասու մարմնի պահանջները, սնանկ ճանաչված պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով քաղաքացիական, վարչական կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում գտնված կամ պարտապանին այլ սնանկության գործով սնանկ ճանաչելու հիմքով՝ կարճված



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

կամ ավարտված գործով դատական ծախսերի գումարը, բացառությամբ ստորադաս չապահովված պարտատերերի պահանջների.

ը) ստորադաս չապահովված պարտատերերի պահանջները՝ համաձայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածի.

թ) պարտապանի հիմնադիրների (մասնակիցների, բաժնետերերի, անդամների կամ գործընկերների) պահանջները:

Թողարկողի կողմից պարտատոմսերով ստանձնած պարտավորությունների մարման հերթականության վերադասակարգում նախատեսված չէ:

11.4 Արժեթղթերից բխող իրավունքները

Պարտատոմսերից բխող իրավունքներն են՝

1. Ստանալ պարտատոմսերով նախատեսված արժեկտրոնային եկամուտները և մարման գումարը՝ ըստ Ազդագրով սահմանված կարգի: Արժեկտրոնային եկամտի ստացման և շրջանառության ժամկետի վերջում պարտատոմսերի մարման գումարի ստացման իրավունքի իրականացման համար ներդրողներից լրացուցիչ գործողությունների կատարում չի պահանջվում և արժեկտրոնային եկամուտը/պարտատոմսի մարման գումարը փոխանցվում է ներդրողի բանկային հաշվին,

2. Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենսդրությամբ թույլատրվող գործողություններ,

3. Գրավադրել պարտատոմսերը օրենսդրությամբ սահմանված կարգով,



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

4. Իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը բացառապես Հայաստանի ֆոնդային բորսա ԲԲԸ-ում (այսուհետ նաև՝ **Բորսա**) (ֆոնդային բորսայում առևտրի թույլտվություն ստացած և/կամ ցուցակված լինելու դեպքում) «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ **Օրենք**) սահմանված կարգով: Ընդ որում, ներդրողները պետք է հաշվի առնեն, որ Օրենքով արգելվում է կարգավորվող շուկայից (Բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթեր,

5. Օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

11.5 Արժեկտրոնի տոկոսադրույքը և դրա վճարման պայմանները

Պարտատոմսերի դիմաց հաշվարկվելու և վճարվելու է արժեկտրոնային, անվանական եկամուտ՝ 13%:

Պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային անվանական եկամուտը վճարվելու է եռամսյակային պարբերականությամբ՝ պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերության $\frac{1}{4}$ (մեկ չորրորդի) չափով:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային, անվանական եկամուտը վճարվելու է եռամսյակային պարբերականությամբ:

Պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտը հաշվարկվելու և վճարվելու է ՀՀ դրամով:

Արժեկտրոնները պարտատոմսերի սեփականատերերին և/կամ անվանատերերին վճարվելու են արժեկտրոնների հաշվարկման օրը: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

Արժեկտրոնների հաշվարկման օր է համարվելու Պարտատոմսերի տեղաբաշխումն սկսելու օրվան հաջորդող 3-րդ, 6-րդ, 9-րդ, 12-րդ, 15-րդ, 18-րդ, 21-րդ, 24-րդ, 27-րդ, 30-րդ, 33-րդ և 36-րդ ամիսների համապատասխան օրերը:

Արժեկտրոնները (տոկոսագումարները) ստանալու իրավունք ունեն պարտատոմսերի արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա վերջի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը):

Թողարկողը պարտավոր է մինչև պարտատոմսերի հերթական արժեկտրոնների հաշվարկման օրը մինչև ժամը 12:00 վարվող համապատասխան բանկային դրամական հաշվի վրա ապահովել հերթական արժեկտրոնների վճարման համար անհրաժեշտ ամբողջ գումարը: Արժեկտրոնային վճարումների համար նախատեսվող գումարներն անվանատերերին և/կամ սեփականատերերին վճարվում են մինչև 0.1 ՀՀ դրամ (ընդ որում, կլորացումը իրականացվում է թվաբանական կլորացման կանոնների համաձայն՝ մինչև ամենամոտ ամբողջ տասնավոր (հարյուրավոր) թիվը): Թվաբանական կլորացման կանոնի ներքո հարկ է հասկանալ կլորացման այն մեթոդը, որի դեպքում միավորի ամբողջ թիվը չի փոխվում, եթե կլորացման ենթակա տասնորդական (հարյուրերորդական) միավորը հավասար է 0-ից 4-ի և փոխվում է՝ մեծանալով մեկ միավորով, եթե կլորացման ենթակա տասնորդական (հարյուրերորդական) միավորը հավասար է 5-ից 9-ի:

Թողարկողը արժեկտրոնի գումարները վճարելու է անկանխիկ ձևով առևտրային բանկում թողարկման նպատակով բացված համապատասխան հաշվից: Դրամական միջոցների այն մասը, որը հնարավոր չի լինի փոխանցել արժեթղթերի սեփականատիրոջը և/կամ անվանատիրոջը Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

պարտատոմսի սեփականատերերի ռեեստրի փակման օրվա դրությամբ ռեեստրում նշված բանկային հաշիվների բացակայության կամ դրանց ճշտման անհնարինության պատճառով՝ մեկ շաբաթվա ընթացքում Թողարկողը կգործադրի իրենից կախված բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողին հայտնաբերելու ու նրան վճարման ենթակա գումարը փոխանցելու ուղղությամբ: Ներդրողին հայտնաբերելու անհնարինության դեպքում Թողարկողը վճարման ենթակա գումարը վճարելու է նոտարի կամ դատարանի (<< օրենսդրությամբ սահմանված դեպքերում) դեպոզիտ համաձայն << օրենսդրության:

Արժեկտրոնի գումարի հաշվարկման համար հիմք է ընդունվում հետևյալ բանաձևը՝

$$ԱԳ=(FV \times C) / k,$$

որտեղ՝

ԱԳ-ն արժեկտրոնի գումարն է,

FV-մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,

C-տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,

k-ն մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է (արժեկտրոնների եռամսյակային վճարման դեպքում $k=4$)

Արժեկտրոնի կուտակումն իրականացվելու է հետևյալ բանաձևով՝

$$AI=FV \times C / k \times DCS / DCC$$

AI-կուտակված արժեկտրոնային եկամուտն է,

FV-մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

C-տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,

k – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը,

(արժեկտրոնների եռամսյակային վճարման դեպքում $k=4$),

Օրերի հաշվարկման պայմանականությունը համարվում է Actual/Actual-ը, ընդ որում՝

DCS-գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D2M2Y2-D1M1Y1],

DCC- արժեկտրոնային փուլի օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D3M3Y3-D1M1Y1],

D1M1Y1- գործարքի կատարման օրվա նախորդող արժեկտրոնի մարման/ արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է,

D2M2Y2- գործարքի կատարման ամսաթիվն է,

D3M3Y3- գործարքի կատարման օրվա հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:

11.6 Արժեթղթերի մարման ժամկետը և արժեքը

Հրապարակային առաջարկը սկսվելու է սույն Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցելու օրվան հաջորդող 5-րդ աշխատանքային օրը և տևելու է մինչև 40 օրացուցային օր:

Թողարկման օր է համարվում տեղաբաշխման առաջին օրը:



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման մեկնարկի օրը մինչույն օրն է:

Մեկ դրամային պարտատոմսի անվանական արժեքը 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ է: Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը փակվում է պարտատոմսերի մարման օրվա նախորդող օրը: Պարտատոմսերի մարման գումարն իրավունք ունեն ստանալ մինչև ռեեստրի փակման պահը պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք:

Թողարկողը պարտավոր է մինչև մարման գումարների վճարման օրվա ժամը 12:00 վարվող համապատասխան բանկային դրամական հաշվի վրա ապահովել վճարման համար անհրաժեշտ ամբողջ գումարը:

Պարտատոմսերի մարման գումարները պարտատոմսերի սեփականատերերին/անվանատերերին վճարվում են պարտատոմսերի մարման օրը /մինչև աշատանքային օրվա վերջը: Եթե մարման օրը ոչ աշխատանքային օր է, ապա մարման գումարները վճարվում են մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը:

Թողարկողը մարման գումարները վճարելու է անկանխիկ ձևով: Դրամական միջոցների այն մասը, որը հնարավոր չի լինի փոխանցել արժեթղթերի սեփականատիրոջը և/կամ անվանատիրոջը Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում պարտատոմսի սեփականատերերի ռեեստրի փակման օրվա դրությամբ ռեեստրում նշված բանկային հաշիվների բացակայության կամ դրանց ճշտման անհնարինության պատճառով՝ կպահպանվի Թողարկողի համապատասխան բանկային հաշվին: Այնուհետև Թողարկողը կգործադրի իրենից կախված բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողին հայտնաբերելու ու նրան վճարման ենթակա գումարը փոխանցելու ուղղությամբ: Ներդրողին հայտնաբերելու անհնարինության դեպքում Թողարկողը վճարման ենթակա գումարը վճարելու է նոտարի կամ



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

դատարանի (ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում) դեպոզիտ համաձայն ՀՀ օրենսդրության:

Թողարկված դրամային պարտատոմսերի մարման դիմաց վճարումները կատարվելու են ՀՀ դրամով:

11.7 Թողարկողի նախաձեռնությամբ պարտատոմսերի հետզնում և/կամ վաղաժամկետ մարում

Պարտատոմսերի քոլ/փուֆ օպցիոններ կամ վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

11.8 Արժեթղթերի տարեկան եկամտաբերությունը

Պարտատոմսերի դիմաց հաշվարկվելու և վճարվելու է տարեկան արժեկտրոնային եկամուտ՝ 13%:

Պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային անվանական եկամուտը վճարվելու է եռամսյակային պարբերականությամբ՝ պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերության $\frac{1}{4}$ (մեկ չորրորդի) չափով:

11.9 Նոր թողարկման մասին տեղեկատվություն

Պարտատոմսերի թողարկման վերաբերյալ որոշումն ընդունվել է Թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովի 2026թ.-ի մայիսի 18-ի որոշմամբ: Միևնույն որոշմամբ սահմանվել են նաև պարտատոմսերի թողարկման պայմանները:

Հրապարակային առաջարկը սկսվելու է սույն Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցելու օրվան հաջորդող 5-րդ աշխատանքային օրվանից սկսած և տևելու է մինչև 40 օրացուցային օր:



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

11.10 Արժեթղթերի ազատ շրջանառելիության սահմանափակումների նկարագրությունը

Պարտատոմսերի ազատ շրջանառության հետ կապված, Թողարկողի կանոնադրությամբ կամ պարտատոմսերի թողարկման մասին Թողարկողի համապատասխան ժողովի որոշմամբ պարտատոմսերի թողարկման, ինչպես նաև պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ որևէ սահմանափակումներ չեն սահմանվում, բացի տեղաբաշխման ընթացքում մեկ ներդրողի նկատմամբ կիրառվող ձեռք բերվող պարտատոմսերի ծավալի սահմանափակումից, եթե նման որոշում կայացվի Թողարկողի ժողովի կողմից, ինչպես նաև Արժեթղթերի շուկայի մասին օրենքի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերի:

Սույն Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցվելուց և պարտատոմսերը տեղաբաշխելուց հետո Թողարկողը գործադրելու է լավագույն ջանքերը պարտատոմսերը կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն ստանալու և միևնույն ժամանակ ՀՀ ֆոնդային բորսայի կանոններին համապատասխանալու դեպքում նաև ցուցակման համար:

Ներդրողները կարող են իրենց ցանկությամբ օտարել պարտատոմսերը Բորսայում (առևտրի թույլտվություն ստանալու և/կամ ցուցակված լինելու դեպքում) Օրենքով սահմանված կարգով, ընդ որում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում կարգավորվող շուկայից (Բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված կորպորատիվ արժեթղթեր, բացառություն են կազմում ՀՀ ԿԲ կողմից կնքվող գործարքները (ՀՀ ԿԲ և ֆինանսական. շուկայի մասնագիտացված ընկերությունների միջև հնարավոր գործարքներ, թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքներ):



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

11.11 Պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման կարգը և նկարագիրը

Կարևոր ծանուցում: Չնայած այն հանգամանքին, որ Թողարկողը, իրականացնելով իր լավագույն ջանքերը և առկա գիտելիքները, սույն բաժնում ներկայացնում է արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման մոտեցումները ՀՀ-ում, այնուամենայնիվ Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ ներդրողներն այն չպետք է համարեն հարկային խորհրդատվություն և ներդրումներ անելիս հիմնվեն միայն այս բաժնում ներկայացված նյութի վրա: Թողարկողը չի երաշխավորում, որ ներդրողի կողմից Ազդագրի ստացման և ծանոթացման պահին հարկային օրենսդրությունը կհամապատասխանի ներկայացվածին, կամ համարժեքորեն կիրառություն կունենա ՀՀ հարկային մարմինների կողմից և ցանկացած պարագայում խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվության ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով զերծ է մնում ցանկացած ներդրողի հնարավոր պահանջներից կապված հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների փոփոխության արդյունքում առաջացած լրացուցիչ ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից:

Պարտատոմսերից ստացված եկամուտը ենթակա է հարկման ըստ հետևյալ հարկատեսակների.

1. **Շահութահարկ** (Իրավաբանական անձանց դեպքում),
2. **Եկամտային հարկ** (Ֆիզիկական անձանց դեպքում):

Պարտատոմսերից կարելի է եկամուտ ստանալ հետևյալ տեսքով.

1. Տոկոսային եկամուտ (պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը)
2. Կապիտալի հավելված (ձեռքբերման պահից հետո պարտատոմսի գնի աճը, հաշվարկվում է որպես մինչև մարման օրը պարտատոմսի վաճառքի և գնման գնի դրական տարբերություն):



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

Շահութահարկ

Շահութահարկ վճարողներ են համարվում ՀՀ գործող ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք: Հարկվող շահույթը հարկատուի՝ ՀՀ հարկային օրենսգրքի համապատասխան հոդվածներով սահմանված համախառն եկամտի և սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Այս պահին շահութահարկի դրույքը 18 տոկոս է:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց շահութահարկի դրույքաչափը պարտատոմսերում ներդրումներից ստացված եկամտի համար կազմում է 10 տոկոս: Թողարկողի պարտատոմսերում ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ ներդրողների համար Թողարկողը հանդիսանում է հարկային գործակալ:

Շահութահարկի վճարումից ազատվում են ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերի՝ մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ օտարումից, մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ այլ արժեթղթերով փոխանակումից կամ մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ կատարվող նման այլ գործարքներից ստացված եկամուտների մասով:

Եկամտային հարկ

Եկամտային հարկ վճարողներ են համարվում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ֆիզիկական անձանց համար պարտատոմսերից ստացված միայն տոկոսային եկամուտն է ենթակա հարկման, իսկ հարկման դրույքաչափը ներկայումս սահմանված է 10%: Թողարկողի պարտատոմսերում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ ներդրողների համար Թողարկողը հանդիսանում է հարկային գործակալ:



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

Եկամտային հարկով չեն հարկվում Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված տոկոսները կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտները, բացառությամբ բանկերի թողարկած այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց: Այս արտոնությունը չի գործի այն դեպքում, երբ պարտատոմսերը արտաբորսայական տեղաբաշխումից հետո չեն թույլատրվում առևտրին կամ չեն ցուցակվում Հայաստանի ֆոնդային բորսայում:

12. Առաջարկի ժամկետները և պայմանները

Առաջարկի պայմանները, առաջարկի վիճակագրությունը, ակնկալվող ժամանակացույցը և այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են առաջարկից օգտվելու համար:

Առաջարկի ընդհանուր ծավալը

Դրամային պարտատոմսերի թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմում է 1,500,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ:

Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը

Հրապարակային առաջարկը սկսվելու է սույն Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցելու օրվան հաջորդող 5-րդ աշխատանքային օրը և տևելու է մինչև 40 օրացուցային օր:



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

Թողարկողի կողմից պարտատոմսերի առաջարկը, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքում (Ֆորս մաժոր):

Եթե Թողարկողը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է Ազդագրի լրացում, որը կապված է Ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա նա ներդրողի պահանջով պարտավոր է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և հետ վերադարձնել տեղաբաշխման ընթացքում նրանից ստացված միջոցները կամ հետ գնել մինչև լրացման ներկայացումը ներդրողին վաճառված արժեթղթերը՝ առնվազն նրա կողմից արժեթղթերի ձեռքբերման գնով: Սահմանված հետգնման պահանջը պետք է Տեղաբաշխողին ներկայացվի գրավոր: Հետգնման պահանջի ներկայացման ժամկետը չի կարող ավելի կարճ լինել, քան 10 (տասը) աշխատանքային օրը՝ Ազդագրի լրացման հրապարակումից հետո:

Եթե առկա են հետ վերադարձման ենթակա դրամական միջոցներ, ապա դրանք վերադարձվում են Տեղաբաշխողի կողմից հետաձգման կամ չեղյալ հայտարարման որոշումն ընդունելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով:

Տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշման կայացման և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները ներդրողներին վերադարձվում են կուտակված արժեկտրոնային եկամուտների հետ միասին: Արժեկտրոնային եկամուտը նման դեպքում հաշվարկվում է տեղաբաշխման առաջին օրվա և այն դադարեցնելու մասին որոշման կայացման օրերի միջև ընկած ժամանակամիջոցի համար: ԿԲ-ն իր որոշմամբ կարող է կասեցնել պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքը՝ Օրենքի համաձայն:



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍՏ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն ԿԲ համաձայնությամբ՝ առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրով: Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղաբաշխումը չի շարունակվում, ապա Տեղաբաշխողը պարտավոր է կայացնել տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշում և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն արժեթղթերը ձեռք բերած անձանց Օրենքով սահմանված կարգով՝ կասեցման ժամկետի ավարտից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

13. Վերջնական պայմաններին վերաբերվող տեղեկությունները

13.1 Վերջնական պայմանների հրապարակում

Պարտատոմսերի հրապարակային առաջարկը սկսվելու է սույն Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցելու օրվան հաջորդող 5-րդ աշխատանքային օրը և տևելու է մինչև 40 օրացուցային օր: Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսելու օրը կհրապարակվի տեղաբաշխումը սկսելուց առնվազն 2 օր առաջ Ընկերության պաշտոնական ինտերնետային հասցեում՝ www.ptest.am:

13.2 Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացը

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն և պատշաճ կերպով Թողարկողին ներկայացնեն պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը, և որով այդ պայմանները կդառնան ներդրողների համար պարտադիր:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականները կհրապարակվեն Տեղաբաշխողի և/կամ Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքերում:



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

Հայտ-հանձնարարականում պարտադիր լրացման դաշտ է համարվում ներդրողի արժեթղթերի հաշվի համարը և արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը: Այդ նպատակով ներդրողները պարտավոր են որևէ հաշվի օպերատորի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական արժեթղթերի հաշիվ և կրել վերջինիս հետ կապված ծախսերը:

Հետևյալ հղումով ներդրողը կարող է տեսնել այն պահառուների անվանումները և գտնվելու վայրերը, բացառությամբ Կենտրոնական Բանկի, որտեղ կարելի է արժեթղթերի հաշիվ բացել՝ [CDA](#) :

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի լրացումից և պատշաճ կերպով Թողարկողին առաքումից հետո պարտատոմսերի ձեռքբերման համար համապատասխան դրամական միջոցները ներդրողների կողմից պետք է մուտքագրվեն թողարկման նպատակով բացված հաշվեհամարին մինչև հայտ-հանձնարարականի ձեռքբերման օրվա ավարտը: Հայտ-հանձնարարականը կհամարվի վավեր պատշաճ առաքման և համապատասխան վճարի կատարման հիմքով:

Ընկերությունը դրամական միջոցների հավաքագրման և պարտատոմսերի տեղաբաշխման նպատակով «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում բացել է հետևյալ հաշվեհամարը՝ 2050022849041001 (AMD): Սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ստացման օրվա ավարտից հետո, ինչպես նաև պարտատոմսերի տեղաբաշխման նախատեսված վերջնաժամկետից հետո Թողարկման հաշվեհամարին ստացված գումարները ենթակա են ետ վերադարձման, իսկ դրանց համապատասխան հայտ-հանձնարարականները չեն կարող բավարարվել:

Տեղաբաշխման նպատակով Ընկերության անունով բացված բանկային համապատասխան հաշվեհամարին դրամական միջոցների ստացումից և պարտատոմսերի ձեռքբերման հայտը



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖԵՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

ստանալուց անմիջապես հետո Տեղաբաշխողը Դեպոզիտարիա է ներկայացնում պարտատոմսերի տեղաբաշխման հանձնարարական Թողարկողի տեղաբաշխման հաշվից համապատասխան քանակի պարտատոմսերի փոխանցման և ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ արժեթղթերի հաշվին հաշվեգրման համար: Դեպոզիտարիայից ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ դեպո հաշվին պարտատոմսերի փոխանցման վերաբերյալ համապատասխան հաստատում ստանալուց անմիջապես հետո Թողարկողը տեղաբաշխման նպատակով բացված համապատասխան բանկային հաշվեհամարից իր օգտագործման համար մատչելի է դարձնում համապատասխան հայտում նշված դրամական միջոցները:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտը կհամարվի պատշաճ կերպով առաքված Թողարկողին, եթե այն առաքվել է Թողարկողի հետ միայն ներքոնշյալ կապի միջոցներից որևէ մեկի միջոցով (կամ առձեռն՝ գրասենյակ այցելելով) և ստացվել է հասցեատիրոջ կողմից առաքման ստացման հաստատում՝ լրացնելով համապատասխան հայտը:

Թողարկողի հետ կապի միջոցներն են. հասցե՝ ՀՀ, 0078, ք. Երևան, Աջափնյակ, Հ. Մարգարյան Փ., Շ. 6/1, ԲՆ.3 Բ/Կ, էլ. փոստ՝ profstestllc@gmail.com, ինտերնետային կայք՝ www.ptest.am, հեռ. (+374 95) 595858:

Ֆիզիկական անձ ներդրողների համար հայտի ձևը ներկայացված է Ազդագրի Հավելված 2-ում: Իրավաբանական անձ ներդրողների համար հայտի ձևը ներկայացված է Ազդագրի Հավելված 3-ում: Հայտին կից ներկայացվում են.

- Ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի (առկայության դեպքում սոցիալական քարտի կամ հանրային ծառայության համարանիշ պարունակող փաստաթղթի) պատճենները (կամ տեղեկանք հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ)



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

- իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականը (ՀՀ պետական ռեգիստրում գրանցված ռեգիդենտ իրավաբանական անձի, ոչ ռեգիդենտ իրավաբանական անձանց ՀՀ-ում ստեղծված մասնաճյուղերի և ներկայացուցչությունների դեպքում նաև գործող ղեկավարի գրանցման ներդիրը) կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածքը, լիազորված անձի դեպքում նաև լիազորագիրը:

13.3 Առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորությունը

Տեղաբաշխման ընթացքում առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորություն չի նախատեսվում Թողարկողի ժողովի կողմից:

Տեղաբաշխման ժամանակ հայտ–հանձնարարականի մասնակի բավարարման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին ետ վերադարձման գումար, ապա տեղաբաշխման ավարտից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում նշված գումարը Թողարկողի կողմից ենթակա է վերադարձման, ինչն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ համապատասխան ներդրողի բանկային հաշվի փոխանցմամբ:

13.4 Նվազագույն և առավելագույն գումարները, որոնք կարող են նշվել ձեռքբերման (բաժանորդագրության) հայտերում:

Թողարկման, ինչպես նաև թողարկվող պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ պարտատոմսերի ձեռքբերման քանակական և գումարային սահմանափակումներ առկա չեն, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

13.5 Հայտը հետ կանչելու ժամանակաշրջանը

Հայտի ներկայացումից հետո սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտերը համարվում են անվավեր և չեն մասնակցում



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

տեղաբաշխմանը: Բացի վերոնշյալ դեպքերից, ներդրողները պարտատոմսերի հայտերը պատշաճ կերպով առաքելուց, Բանկի կողմից հայտի ստացման հաստատումը/ծանուցումը ստանալուց և համապատասխան վճարումը կատարելուց հետո դրանք չեն կարող ետ կանչել:

13.6 Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները

Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձիք վճարումը կատարում են թողարկման նպատակով բացված դրամային բանկային հաշվեհամարին: Համապատասխան հայտերը բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից՝ Թողարկողից իրենց հայտերի բավարարման մասին տեղեկացվելուց հետո:

Ընկերությունը դրամական միջոցների հավաքագրման և պարտատոմսերի տեղաբաշխման նպատակով «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում բացել է հետևյալ հաշվեհամարը՝ 2050022849041001 (AMD):

«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ը հաշվի օպերատորի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները գանձվում են համաձայն հաշվի օպերատորի կողմից հաստատված սակագների, որոնց հետ ներդրողը կարող է ծանոթանալ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով՝ www.cda.am :

13.7 Առաջարկի արդյունքների հրապարակման ձևը և ժամկետները

Տեղաբաշխման արդյունքները կհրապարակվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում: Հրապարակային տեղաբաշխումն սկսելու պահից յուրաքանչյուր 30-րդ օրվա ավարտից հետո ոչ ուշ, քան 15-րդ օրը, ինչպես նաև տեղաբաշխման ավարտից հետո՝ 30 օրվա



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

ընթացքում, Թողարկողը պարտավոր է ԿԲ ներկայացնել հաշվետվություն՝ տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին՝ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով և կարգով:

13.8 Նախապատվության իրավունքի իրականացման կարգը

Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխման ժամանակ պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է ըստ պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականների և դրանց դիմաց կատարված վճարման ստացման հերթականության, այսինքն առաջնահերթություն ունի ներդրողը, ում հայտ-հանձնարարականի համաձայն վճարումը ավելի վաղ է ստացվել:

Թողարկվող պարտատոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեցող անձինք չկան:

14. Տեղաբաշխման պլանը

14.1 Ներդրողների խմբերը

Առաջարկն արվում է ՀՀ-ում և ուղղված է ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանց, նաև ներդրումային ֆոնդերին:

14.2 Հայտերի բավարարման մասին տեղեկացումը

Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում ներդրողները Թողարկողից տեղեկացվում են իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին մինչև հայտ-հանձնարարականի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը: Հայտ-հանձնարարականների բավարարման մասին ներդրողին տեղեկացումը տրամադրվում է այն



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

կապի միջոցով, որով ներդրողը Թողարկողին է ներկայացրել պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականները:

15. Առաջարկի գինը

15.1 Արժեթղթերի գինը

Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$DP = \frac{C}{f} \sum_{t=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{t-1+\tau}} + \frac{100}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}}$$

որտեղ՝

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

DP - Պարտատոմսի գինն է,

DSN - գործարքի կատարման օրից (settlement/trade date) մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

f- արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,

N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,

C - տարեկան արժեկտրոնը մեկ պարտատոմսի անվանական արժեքի դիմաց,

Y - մինչև մարում եկամտաբերություն:



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

Ներդրողները պարտավոր են որևէ հաշվի օպերատորի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական արժեթղթերի հաշիվ և կրել վերջինիս հետ կապված ծախսերը:

Հետևյալ հղումով ներդրողը կարող է տեսնել այն պահառուների անվանումները և գտնվելու վայրերը, բացառությամբ Կենտրոնական Բանկի, որտեղ կարելի է արժեթղթերի հաշիվ բացել՝ [CDA](#):

16. Տեղաբաշխումը

16.1 Չերաշխավորված տեղաբաշխման պայմանագիրը

Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնելու կապակցությամբ Թողարկողը կնքել է «Արժեթղթերի չերաշխավորված տեղաբաշխման» պայմանագիր «Դայմենշն» փակ բաժնետիրական ներդրումային ընկերության հետ (գրանցված ԿԲ-ի կողմից, գրանցման համար 14, լիցենզիա 0014, գրանցման հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 2, 27/1 ոչ բնակելի տարածք):

Համաձայն կնքված պայմանագրի՝ «Դայմենշն» ՓԲԸ-ն պարտավորվել է լավագույն ջանքերի գործադրմամբ տեղաբաշխել Թողարկողի կողմից թողարկվող անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային պարտատոմսերը:

16.2 Տեղաբաշխման պայմանները

Տեղաբաշխման վճարը սահմանված է Թողարկողի և Տեղաբաշխողի միջև կնքված «Արժեթղթերի չերաշխավորված տեղաբաշխման» պայմանագրով և կազմում է տեղաբաշխված ծավալի 2 տոկոսը:

Տեղաբաշխումը իրականացվելու է արտաբորսայական եղանակով, իսկ պարտատոմսերի դիմաց անհրաժեշտ է վճարում կատարել թողարկման նպատակով «ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից բացված բանկային հաշվեհամարին:



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումն ու (կամ) գրանցումն (սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի վարում) իրականացվելու է Դեպոզիտարիայի միջոցով, որը հանդես է գալու որպես անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրավար՝ վերջինիս համակարգում գործող որևէ Հաշվի օպերատորի միջնորդությամբ:

Պարտատոմսերը կարող են հաշվառվել նաև ԿԲ կողմից լիցենզավորված որևէ պահառուի կողմից (այսուհետ նաև՝ **Դեպոզիտարիայի ենթապահառու**)՝ այդ պահառուի մոտ պարտատոմսերի սեփականատիրոջ/անվանատիրոջ համար արժեթղթերի հաշիվ բացելու և վարելու միջոցով:

Դեպոզիտարիայի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, Էրեբունի Պլազա բիզնես կենտրոն, 5-րդ հարկ (հեռ.՝ +374 60 615 555, +374 10 543 321):

Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը ներդրողները պարտավոր են Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշիվ:

17. Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

Սույն Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցվելուց և պարտատոմսերը տեղաբաշխելուց հետո Թողարկողը գործադրելու է լավագույն ջանքերը պարտատոմսերը կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն ստանալու համար և մինչև ստանալ ՀՀ ֆոնդային բորսայի կանոններին համապատասխանալու դեպքում նաև ցուցակման համար: Ընդ որում պարտատոմսերը կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն ստանալու և/կամ ցուցակելու դիմումը կարող է չբավարարվել Բորսայի կողմից:

Այս պահին Թողարկողի կողմից սույն Ազդագրով գրանցվող պարտատոմսերը թույլատրված չեն իրապարակային առևտրի ոչ մի շուկայում:



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

Թողարկողը մասնագիտացված անձանց հետ դեռ չի կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի (մարքեթ մեյքերի) ծառայություններից օգտվելու վերաբերյալ պայմանագիր:

Տեղաբաշխողի կողմից տեղաբաշխված պարտատոմսերը առևտրի թույլտվություն ստանալու և/կամ ցուցակելու դեպքում Թողարկողը նախատեսում է մասնագիտացված անձանց հետ կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագիր:

Թողարկողը պարտավորվում է մասնագիտացված անձանց հետ երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագրի կնքումից հետո ողջամիտ ժամկետում տեղեկացնել իր պարտատոմսերի սեփականատերերին և անվանատերերին նման պայմանագրի ուժի մեջ մտնելու վերաբերյալ:

18. Լրացուցիչ տեղեկատվություն

Բացի սույն Ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից (2024, 2025 թվականների համար), որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն Ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների պատճենները ներկայացված են հավելված 4-ում:

18.1 Խորհրդատուներ

Սույն Ազդագրի պատրաստման ընթացքում Թողարկողը չի օգտվել երրորդ անձ խորհրդատուների ծառայություններից՝ բացի Տեղաբաշխողի կողմից մատուցվող տեղաբաշխման ծառայությունից:



18.2 Փորձագետների մասնագիտական կարծիքը և այլ անձանցից ստացված տեղեկությունները

Թողարկողը չի օգտվել երրորդ անձ փորձագետի կամ խորհրդատուի ծառայություններից և չի օգտագործել վերջիններիս մասնագիտական կարծիքը սույն Ազդագրում:

18.3 Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների երաշխավորողի վերաբերյալ տեղեկություններ

Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների երաշխավորող չկա, քանի որ տեղաբաշխվող պարտատոմսերն առանց ապահովման են:

18.4 Թողարկողի վարկանիշը

Թողարկողը և թողարկվող պարտատոմսերը չեն ստացել վարկանիշ որևէ վարկանշող կազմակերպության կողմից:



ԲԱԺԻՆ 3.ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

19. Անկախ աուդիտորները

Կազմակերպության 2025 և 2024 թվականների անկախ աուդիտորական ստուգումն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, որը գրանցվել է ՀՀ-ում 2010 թվականին (գրանցման համար՝ 264.120.09235):

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հասցեն է՝ ՀՀ ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի փող. 9, 0015, Երևան Պլազա բիզնես կենտրոն, հեռ.՝ +374 (10) 50 09 64/61, ինտերնետային կայքի հասցեն է՝ <https://www.grantthornton.am/>:

Աուդիտորական կազմակերպության տնօրենն է Արմեն Հովհաննիսյանը:

Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ ֆինանսական հաշվետվությունների էական անճշտություններից զերծ լինելու և միջազգային ստանդարտներին համապատասխանելու մասին: Աուդիտորական կազմակերպության եզրակացությունները ներկայացված են կից Հավելվածներում:

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի ընթացքում թողարկողի աուդիտն իրականացրած անկախ աուդիտորը անդամակցել է «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» մասնագիտական կառույցին: Թողարկողի աուդիտն իրականացրած անկախ աուդիտորը այլ մասնագիտական կառույցներին անդամակցություն չունի:

20. Ռիսկային գործոններ

Գոյություն ունեն Թողարկողին և վերջինիս գործունեության ոլորտին հատուկ մի շարք գործոններ, որոնք կարող են ուղղակի կամ անուղղակի ձևով ազդեցություն ունենալ թողարկված արժեթղթերի ռիսկայնության մակարդակի վրա:



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

Ներդրողները պետք է որոշում կայացնեն՝ լիովին գիտակցելով ներդրումների բնույթն ու դրանցից բխող հիմնական ռիսկերը՝ ելնելով իրենց փորձից, նպատակներից, ֆինանսական ռեսուրսներից, ռիսկերի նկատմամբ հակվածության աստիճանից և այլ գործոններից:

Ներդրողները պետք է հասկանան նաև, որ Ազդագիրը չի կարող ներկայացնել Թողարկողի գործունեության հետ կապված բոլոր ռիսկերը: Թողարկողին առնչվող ռիսկերը կապված են նրա ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների հետ և արտահայտվում են ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու հանգամանքով: Թողարկողի բնականոն գործունեությանը սպառնացող ռիսկեր կարող են առաջացնել նաև արտաքին գործոնները: Թողարկողի գործունեությանն առնչվող ռիսկերը կարող են հանգեցնել պարտատոմսերի գնի նվազմանը:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը: Ընկերության համար վարկային ռիսկը կամ դեֆոլտի ռիսկը այն ռիսկն է, որ ընկերությունը չի կարողանա կատարել իր ֆինանսական պարտավորությունները, ինչպիսիք են վարկերի կամ պարտատոմսերի մարումը, ֆինանսական դժվարությունների կամ անվճարունակության պատճառով: Վերոնշյալ խնդիրները կարող են սահմանափակել ընկերության գործառնական ծրագրերը և նվազեցնել ներդրողների վստահությունը, ինչի հետևանքով կարող է թուլանալ շուկայական դիրքը:

Ընկերության վարկային ռիսկը պայմանավորված է ֆինանսական լներիջի մակարդակով, որը արտահայտվում է Ընկերության ընդհանուր պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցությամբ: 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական լներիջի գործակիցը կազմել է 4.68 (ընդ որում կարճաժամկետ և երկարաժամկետ վարկերի և փոխառությունների մասնաբաժինը ընդհանուր պարտավորություններում կազմում է 44.15%): Ցուցանիշը ցույց է տալիս, որ Ընկերության



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
 պարտատոմսերի թողարկման**

Ֆինանսավորման կառուցվածքում պարտավորությունների մասնաբաժինը գերակշռում է սեփական կապիտալին, ինչը պահանջում է պարտքային բեռի և վճարունակության շարունակական վերահսկողություն:

Ընկերության 2024 և 2025 թվականների դրությամբ կարճաժամկետ և երկարաժամկետ վարկերի և փոխառությունների կառուցվածքը ներկայացված է ստորև.

<i>(արտահայտված հազար հայկական (<<)) դրամով)</i>	31 դեկտեմբերի 2025թ .	31 դեկտեմբերի 2024թ.
<i>Ոչ ընթացիկ</i>		
Բանկային վարկեր և վարկային գծեր/օվերդրաֆտեր	1,037,959	-
	1,037,959	-
<i>Ընթացիկ</i>		
Բանկային վարկեր և վարկային գծեր/օվերդրաֆտեր	372,437	23,130
Կապակցված կողմերից չապահովված փոխառություններ	108,400	19,748
	480,837	42,878
Ընդամենը վարկեր և փոխառություններ	1,518,796	42,878

Բանկային վարկերն ունեն 5 տարի մարման ժամկետ և տարեկան 7% միջին տոկոսադրույք (2024թ.՝ 9.6% տոկոսադրույք:)

Կապակցված կողմերից չապահովված փոխառությունները կարճաժամկետ, անտոկոս փոխառություններ են:

Վարկերն ապահովված են ընկերությանը պատկանող տրանսպորտային միջոցներով և սարքավորումներով:

Իրացվելիության ռիսկ: Իրացվելիության ռիսկի հետևանքով դժվարություններ կարող են առաջանալ Ընկերության ակտիվներն արագ և շուկայական գնով իրացնելու ժամանակ,



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

հետևաբար նաև խնդիրներ կարող են առաջանալ պայմանագրային պարտավորությունները ժամանակին և ամբողջությամբ կատարելու հետ կապված:

Ընկերության ընդհանուր իրացվելիության գործակիցը, որը հաշվարկվում է որպես ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների հարաբերակցություն, արտացոլում է ընկերության կարճաժամկետ պարտավորությունները փակելու ունակությունը: 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ընդհանուր իրացվելիության գործակիցը կազմել է 1.36, իսկ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1.76:

Գործակցի աճը վկայում է Ընկերության կարճաժամկետ վճարունակության բարելավման մասին: 2025 թվականի վերջի դրությամբ ընթացիկ ակտիվները 1.76 անգամ գերազանցել են ընթացիկ պարտավորությունները, ինչը ցույց է տալիս, որ Ընկերությունն ունի բավարար ռեսուրսներ իր կարճաժամկետ պարտավորությունները ժամանակին կատարելու համար և իրացվելիության ռիսկը գտնվում է վերահսկելի մակարդակում:

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները: Խումբը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չգեղջված դրամական հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Խումբը ստիպված կլինի մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական հոսքերը:



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

2025թ.	Անտոկոս	Պարտավորություն ֆինանսական վարձակալության գծով	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		11.29%	7%	
Մինչև 1 տարի	847,372	192,024	372,437	1,411,833
1-5 տարի	-	558,754	878,809	1,457,563
Ավելի քան 5 տարի	-	36,431	139,150	175,581
	847,372	787,209	1,410,396	3,044,977

Խումբն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Խմբի դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերն էականորեն ցածր են անհրաժեշտ դրամական արտահոսքերից: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերից դրամական հոսքերը պայմանագրով ենթակա են ստացման 1-2 ամսվա ընթացքում: Խումբը մտադիր է մարել պարտավորությունները տարեվերջի դրությամբ առկա պաշարների վաճառքից եկամտի հաշվին:

Շուկայական ռիսկ: Շուկայական ռիսկը այն ռիսկն է, երբ շուկայական գործոնների փոփոխությունները, մասնավորապես՝ տոկոսադրույքների, արտարժույթի փոխարժեքների և շուկայական գների տատանումները, կարող են բացասաբար անդրադառնալ Ընկերության ֆինանսական գործիքների արժեքի, ապագա դրամական հոսքերի, ֆինանսական արդյունքների և ընդհանուր ֆինանսական կայունության վրա: Շուկայական պայմանների փոփոխությունները, առողջապահական ոլորտում պահանջարկի տատանումները, պետական գնումների ծավալների փոփոխությունը կամ բժշկական կենտրոնների ներդրումային



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման

ակտիվության նվազումը կարող են ազդել Ընկերության վաճառքների և ֆինանսական արդյունքների վրա:

Արտարժույթային ռիսկ: Խումբը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Խմբի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Խմբի՝ արտերկրյա վաճառքներից և ձեռքբերումներից, տրամադրված և ստացված փոխառություններից, վարկերի և վարձակալությունների գծով պարտավորություններից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով, ռուբլիով և եվրոյով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Խմբին ենթարկում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացույցված գումարները փոխարկվում են հայկական դրամի՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով:

31 դեկտեմբերի 2025թ. <i>(արտահայտված հազար հայկական (<<) դրամով)</i>	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի
Ֆինանսական ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	910	221
Փոխառություններ	-	420,902	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	708	1,059	2,894
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	708	422,871	3,115

Ֆինանսական պարտավորություններ



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման

Բանկային վարկեր և փոխառություններ	22,752	1,452,815	-
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	-	658,307	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	348,887	99,794	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	371,639	2,210,916	-
Զուտ արդյունք	(370,931)	(1,788,045)	3,115

Պարտքային ռիսկ: Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ընկերության համար պարտքային ռիսկը հիմնականում առաջանում է դեբիտորական պարտքերից, ժամկետային ավանդներից, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներից և այլ ֆինանսական ակտիվներից:

Խմբի ղեկավարությունը զգուշորեն կառավարում է պարտքային ռիսկը: Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Խմբի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից: Ռիսկերի կառավարման նպատակով պարտքային ռիսկի գնահատումը ներառում է մոդելների օգտագործում, քանի որ ռիսկը տատանվում է՝ կախված շուկայական պայմաններից, դրամական միջոցների ակնկալվող հոսքերից և ժամանակի ընթացքից:

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

(արտահայտված հազար հայկական (<<) դրամով)

31 դեկտեմբերի 2025թ.

31 դեկտեմբերի 2024թ.



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման

Անորոշագրված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Տրամադրված փոխառություններ	787,383	-
Առևտրային դեբիտորական պարտքեր	362,496	236,677
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	33,671	42,887
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	1,183,550	279,564

Առևտրային դեբիտորական պարտքեր

Պարտքային ռիսկի գծով կենտրոնացումը սահմանափակ է՝ Խմբի հաճախորդների բազայի մեծության և միմյանց հետ կապակցված չլինելու պատճառով:

Երբ հավանական չէ առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրումը, դրանք դուրս են գրվում (ապաճանաչվում են): Վճարում չկատարելը և Խմբի հետ այլընտրանքային վճարման վերաբերյալ համաձայնության չգալը համարվում է գումարի վերադարձման վերաբերյալ խելամիտ սպասումներ չունենալու համար հայտանիշ:

Ելնելով վերը նկարագրվածից՝ առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների մնացորդները ներկայացված են հետևյալ աղյուսակներում.

<i>31 դեկտեմբերի 2025թ (արտահայտված հազար հայկական (<<) դրամով)</i>	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում		
	Ակնկալվող պարտքային կորուստ	Համախառն հաշվեկշռային արժեք	պարտքային կորուստների ճանաչում
Մինչև 1 ամիս	1.70%	206,039	3,510
1 ամսից 2 ամիս	2.69%	59,603	1,603
2 ամսից 3 ամիս	5.37%	31,352	1,684
3 ամսից 6 ամիս	10.38%	70,647	7,333
6 ամսից մինչև 1 տարի	28.61%	12,587	3,601
1 տարուց ավելի	100%	86,384	86,384



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման

	466,612	104,116
<p><i>31 դեկտեմբերի 2024թ (արտահայտված հազար հայկական (<<) դրամով)</i></p>		
	Ակնկալվող պարտքային կորուստ	Համախառն հաշվեկշռային արժեք
		Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում
Մինչև 1 ամիս	2.25%	183,433
1 ամսից 2 ամիս	2.69%	7,188
2 ամսից 3 ամիս	5.37%	27,876
3 ամսից 6 ամիս	10.38%	24,225
6 ամսից մինչև 1 տարի	28.61%	3,209
1 տարուց ավել	100%	43,499
		289,430
		52,753

Ղեկավարության համոզմամբ անհուսալի և կասկածելի դեբիտորական պարտքերի գծով սովորական պահուստից առավել այլ պարտքային ռիսկի պահուստ չի պահանջվում:

Հոլդինգային կառուցվածքին բնորոշ ռիսկ: Թողարկողը հանդիսանում է հոլդինգային կազմակերպություն, և նրա ֆինանսական վիճակը որոշակիորեն կախված է դուստր ընկերության գործունեության արդյունքներից և ֆինանսական կայունությունից: Դուստր ընկերության գործունեության արդյունավետության նվազումը, ֆինանսական ցուցանիշների վատթարացումը կամ այլ անբարենպաստ զարգացումները կարող են բացասաբար ազդել Թողարկողի ֆինանսական արդյունքների, դրամական հոսքերի և իր պարտավորությունները կատարելու կարողության վրա:

Ոլորտի կարգավորման դաշտի փոփոխությունների հետ կապված ռիսկ: Առողջապահության ոլորտը Հայաստանում ենթակա է խիստ պետական կարգավորման: Թողարկողը ենթակա է առողջապահական ոլորտը կարգավորող ազգային և տեղական նորմերի պահպանմանը, այդ



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

թվում՝ լիցենզավորման և գործունեության ստանդարտների պահանջներին: Կարգավորող շրջանակի փոփոխությունները, ինչպես նաև լիցենզիաների տրամադրման կամ վերանայման գործընթացների հնարավոր ձգձգումները կամ սահմանված պահանջներին չհամապատասխանելը կարող են հանգեցնել տուգանքների, գործառնական սահմանափակումների, ինչպես նաև հեղինակության վնասի:

Միաժամանակ, բժշկական սարքավորումների ներմուծման, սերտիֆիկացման, գրանցման և լիցենզավորման պահանջների, ինչպես նաև բժշկական ծառայությունների մատուցման կանոնների փոփոխությունները կարող են առաջացնել լրացուցիչ ծախսեր և ազդել գործունեության կազմակերպման վրա: Մասնավորապես, հեմոդիալիզի ծառայությունների մատուցման ոլորտում կարգավորող պահանջների խստացումը կամ լիցենզավորման պայմանների փոփոխությունները կարող են բացասաբար անդրադառնալ Ընկերության գործունեության վրա:

Հիվանդների անձնական և բժշկական տեղեկատվության ոչ պատշաճ կառավարումը կարող է առաջացնել իրավական և ֆինանսական հետևանքներ: Ընկերությունը նվազեցնում է վերոնշյալ ռիսկերի առաջացման հավանականությունը՝ համապատասխան մասնագիտական կարողություններ ունեցող աշխատակիցների ներգրավմամբ և ներքին գործընթացներում համապատասխանության ապահովման մեխանիզմների կիրառմամբ:

Հարկային դաշտի փոփոխություններով պայմանավորված ռիսկ: Հարկային օրենսդրության, ինչպես նաև հարկային մարմինների որոշումների հնարավոր փոփոխությունները կարող են նշանակալիորեն ազդել Ընկերության գործունեության արդյունավետության և դրամական հոսքերի վրա:

Մրցակցային ռիսկ: Թողարկողի գործունեության՝ բժշկական սարքավորումների և պարագաների շուկայում առկա մրցակցային միջավայրը, ինչպես նաև դրա հնարավոր սրացումները, կարող են առաջացնել ռիսկեր, որոնք բացասաբար կանդրադառնան



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

Ընկերության գործառնական և/կամ ֆինանսական արդյունքների վրա: Մրցակցությունը կարող է ուժեղանալ ինչպես գործող մասնակիցների ակտիվացման, այնպես էլ նոր ընկերությունների մուտքի արդյունքում: Մրցակիցների կողմից գների նվազեցումը, նոր ապրանքանիշերի ներմուծումը կամ ավելի շահավետ պայմանների առաջարկումը կարող է հանգեցնել Թողարկողի հաճախորդների թվի նվազման և/կամ վաճառքների ծավալների կրճատման, ինչը, իր հերթին, կարող է բացասաբար անդրադառնալ Ընկերության շուկայական մասնաբաժնի և ֆինանսական ցուցանիշների վրա:

Ընկերության մրցակցային դիրքը հիմնված է միջազգային ճանաչում ունեցող արտադրողների արտադրատեսակների ներկայացման, առաջարկվող լուծումների որակի և մասնագիտական փորձառության վրա: Մրցակցային առավելություններն առավել մանրամասն ներկայացված են Ազդագրի 23.2 բաժնում:

Տնտեսական և քաղաքական ռիսկ: Հայաստանի Հանրապետության տնտեսական իրավիճակի վատթարացումը, առողջապահական ծախսերի կրճատումը, գնաճը և ֆինանսական շուկաների անկայունությունը կարող են բացասաբար անդրադառնալ Ընկերության գործունեության և ֆինանսական արդյունքների վրա:

Ներքին և արտաքին քաղաքական զարգացումները, պետական քաղաքականությունների փոփոխությունները, ինչպես նաև միջազգային հարաբերությունների հնարավոր լարվածությունները կարող են նույնպես բացասաբար ազդել Ընկերության գործունեության վրա:

Գործառնական ռիսկ: Ընկերության գործունեությունը ներառում է բժշկական սարքավորումների սպասարկում, հեմոդիալիզի կենտրոնների շահագործում և բժշկական ծառայությունների կազմակերպում: Սարքավորումների տեխնիկական խափանումները, մասնագիտական անձնակազմի պակասը, տեղեկատվական համակարգերի աշխատանքի խափանումները կամ բժշկական ծառայությունների մատուցման գործընթացում առաջացող այլ խնդիրները կարող են հանգեցնել գործունեության ընդհատման և ֆինանսական կորուստների:



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

Ավելին, տվյալների պաշտպանության պահանջների խստացումը կամ դրանց խախտումները, ինչպես նաև հիվանդների անձնական և բժշկական տեղեկատվության ոչ պատշաճ մշակումը կարող են առաջացնել իրավական և ֆինանսական հետևանքներ:

Ընկերության գործառնական ռիսկերը կարող են նաև պայմանավորված լինել դուստր ընկերության գործունեությամբ, ներառյալ դրանց գործառնական գործընթացների խափանումները կամ կառավարման դժվարությունները, որոնք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ընդհանուր գործունեության և ֆինանսական արդյունքների վրա:

Ընկերությունը նպատակ ունի նվազեցնել նշված ռիսկերը՝ համապատասխան մասնագիտական կարողությունների ներգրավման և ներքին վերահսկողական ու համապատասխանության մեխանիզմների կիրառման միջոցով:

Արտաքին հանգամանքներով պայմանավորված ռիսկ: Ընկերությունը կարող է բախվել արտաքին գործոններից բխող այնպիսի ռիսկերի, որոնք չեն կարող կառավարվել կամ կանխատեսվել: Շատ հանգամանքներ, որոնք պայմանավորված են պետական քաղաքականությամբ, միջազգային զարգացումներով, առողջապահական կամ այլ արտակարգ իրավիճակներով, գտնվում են ընկերության վերահսկողությունից դուրս: Օրինակ՝ Ընկերությունը չի կարող կանխատեսել, թե ապագայում ինչ որոշումներ կընդունի կառավարությունը՝ արտակարգ դրության, բնական աղետների, համաճարակների, տնտեսական անկման կամ այլ նմանատիպ իրավիճակների դեպքում:

Տրանսպորտային և լոգիստիկ գործընթացների ռիսկ: Նման ռիսկ կարող է առաջանալ սահմանային անցակետերում ուշացումների, փոխադրումների հետ կապված վարչարարական խափանումների կամ տրանսպորտային միջոցների տեխնիկական խնդիրների հետևանքով: Այսպիսի խոչընդոտները կարող են ժամանակավորապես դադարեցնել ապրանքների մատակարարումը, ավելացնել ծախսերը և խախտել մատակարարման ժամանակացույցը, ինչը անմիջական ազդեցություն ունի եկամուտների և հաճախորդների վստահության վրա:



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍՏ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

Կորպորատիվ կառավարման ռիսկ: Ընկերության կորպորատիվ կառավարման կառուցվածքը, ներառյալ դուստր ընկերության գործունեության համակարգումը, պահանջում է արդյունավետ վերահսկողություն, հստակ հաշվետվողականություն և պատշաճ կորրեկցիան: Կառավարման գործընթացներում հնարավոր թերությունները կամ ոչ արդյունավետ որոշումների ընդունումը կարող են հանգեցնել գործառնական ծախսերի աճի, նախագծերի իրականացման ձգձգումների կամ ֆինանսական արդյունքների վատթարացման:

Հեմոդիալիզի կենտրոնների ընդլայնման ռիսկ: Ընկերությունը իրականացնում է հեմոդիալիզի նոր կենտրոնների գործարկման ծրագիր: Նոր կենտրոնների բացման գործընթացում կարող են առաջանալ շինարարական, տեխնիկական, լիցենզավորման կամ ֆինանսավորման հետ կապված դժվարություններ, որոնք կարող են հանգեցնել ծրագրերի իրականացման ուշացումների, ծախսերի աճի կամ ակնկալվող արդյունքների/եկամուտների չապահովման:

21. Տեղեկատվություն Թողարկողի մասին

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ՊՐՈՖՏԵՍՏ» սահմանափակ պարասխանադրությամբ ընկերություն

ռուսերեն՝ "ПРОФТЕСТ" Общество с Ограниченной Ответственностью

անգլերեն՝ "PROFTEST" Limited Liability Company

Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ՊՐՈՖՏԵՍՏ» ՍՊԸ

ռուսերեն՝ ООО "ПРОФТЕСТ"

անգլերեն՝ "PROFTEST" LLC

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝

Թողարկողը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում,
Հայաստանի Հանրապետություն, 0078, ք. Երևան, Աջափնյակ, Հ. Մարգարյան Փ., Շ. 6/1, ԲՆ. 3
Բ/Կ



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖԵՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

Պետական գրանցման համարը՝ 264.110.748777

Թողարկողի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0078, ք. Երևան, Աջափնյակ,
Հ. Մարգարյան Փ., Շ. 6/1, ԲՆ. 3 Բ/Կ
ՀՎՀՀ 00120301

Կապի միջոցները

Հեռ՝ (+374 95) 595858

Էլ. փոստ՝ proftestllc@gmail.com

Ինտերնետային կայք՝ www.ptest.am

Թողարկողի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

Ընկերության գրասենյակը գտնվում է ք. Երևան, Շենգավիթ, Հրանտ Վարդանյան 7 հասցեում:

22. Ներդրումները

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի ընթացքում և դրանից հետո՝ մինչև ազդագիրը գրանցման ներկայացնելու պահը, Ընկերության կողմից իրականացվել են ներդրումներ՝ ուղղված բժշկական կենտրոնների հիմնմանը: Մասնավորապես՝ շուրջ 200 մլն դրամի ներդրում է կատարվել Երևան, Մարգարյան 6/1 հասցեում հեմոդիալիզի կենտրոն հիմնելու նպատակով, ինչպես նաև 150 մլն դրամի ներդրում՝ ք. Գյումրի, Իսահակյան 41 հասցեում բժշկական կենտրոն հիմնելու համար:

Ապագայում Ընկերությունը մտադիր է իր ներդրումային միջոցներն ուղղել հետևյալ նպատակներին.

- Մասնաճյուղերի ցանցի ընդլայնում՝ ծառայությունների հասանելիության բարձրացման նպատակով.



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

- Սարքավորումների արդիականացում՝ տեխնիկական վերազինման և ծառայությունների որակի ապահովման նպատակով.
- Նոր տարածքների ձեռքբերում՝ գործունեության ընդլայնման և ենթակառուցվածքների զարգացման նպատակով:

23. Բիզնեսի նկարագիրը

23.1 Հիմնական գործունեությունը

Ընկերության գործունեության հիմնական ուղղությունը բժշկական սարքավորումների և պարագաների մեծածախ ու մանրածախ առևտուրն է: Ընկերությունը հանդիսանում է մի շարք ընկերությունների ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետությունում (ինչպիսիք են՝ Abbott, Merit Medical, Medtronic, Baxter, Adeor):

Հիմնական ապրանքատեսակնին է.

- Էնդովասկուլյար վիրահատությունների համար կիրառվող պարագաներ՝ սրտի և պերիֆերիկ ստենտեր, բալուններ և կաթետրներ,
- Նեյրովիրաբուժական պարագաներ,
- Հեմոդիալիզի սարքեր և պարագաներ,
- Բժշկական տեխնիկա:

Ընկերության մրցակցային դիրքը հիմնված է պրեմիում դասի ապրանքանիշերի ներկայացման և որակյալ ծառայությունների մատուցման վրա:

Ընկերության գործունեության մյուս առանցքային ուղղությունը հեմոդիալիզի ծառայությունների մատուցումն է: Ներկայումս Ընկերությունն ունի 3 գործող կենտրոն, ևս 2-ը գտնվում են գործարկման փուլում:



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

23.2 Հիմնական շուկաները

Ներկայումս Ընկերության գործունեության հիմնական շուկան Հայաստանի Հանրապետությունն է, որտեղ Ընկերությունը համագործակցում է գրեթե բոլոր պետական և մասնավոր բժշկական կենտրոնների հետ: Իրականացվում է արտահանում միայն դեպի Ռուսաստանի Դաշնություն, սակայն դրա մասնաբաժինը չի գերազանցում ընկերության ընդհանուր իրացման 3%-ը:

Մրցակցային դիրքի նկարագրությունը:

Ընկերության մրցակցային դիրքը հիմնված է պրեմիում դասի ապրանքանիշերի ներկայացման և որակյալ ծառայությունների մատուցման վրա:

Ընկերությունը ներկայացնում է Abbott Vascular ընկերությունը, որը համաշխարհային մակարդակով հանդիսանում է կարդիովասկուլյար միջամտությունների ընթացքում կիրառվող արտադրատեսակների առաջատար արտադրողներից մեկը: Ընկերության կողմից արտադրվող սրտային ստենտները լայնորեն կիրառվում են ամբողջ աշխարհում և համարվում են ոլորտի առաջատարներից: Տվյալ ուղղությամբ շուկայում գործում են երկու հիմնական պրեմիում մրցակիցներ:

Ընկերությունը հանդիսանում է նաև Medtronic ընկերության ներկայացուցիչը, որը ևս համաշխարհային առաջատարներից է բժշկական սարքավորումների և արտադրատեսակների ոլորտում:

Ներկայացված ընկերությունների հիմնական մրցակիցներն են չինական և հնդկական ծագման ավելի ցածրարժեք արտադրատեսակները: Միաժամանակ, առկա են մի շարք ունիկալ արտադրատեսակներ, որոնք չունեն համարժեք այլընտրանքներ, ինչպես նաև պահպանվում են էական որակական տարբերություններ:




ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման

24. Թողարկողի կառուցվածքը

Ընկերության միակ մասնակիցն Արթուր Մելքոնյանն է՝ 100% բաժնեմասով:

Ստորև ներկայացված է Ընկերության ներքին վարչակազմակերպական կառուցվածքը:



25. Թողարկողի հիմնական միջոցները

Կազմակերպությունն իր բնականոն գործունեության ապահովման նպատակով ձեռք է բերել հիմնական միջոցներ: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության հիմնական միջոցները կազմել են 312,319 հազար ՀՀ դրամ:

Կազմակերպության կողմից իր հիմնական միջոցների օգտագործումը սահմանափակող հանգամանքներ առկա չեն:

Կազմակերպության հիմնական միջոցներն ունեցել են հետևյալ կազմը և կառուցվածքը:

հազ. ՀՀ դրամ

31.12.2025	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ, Արտադրական գույք, գործիքներ և այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք	244,085	245,834	489,919
Կուտակված մաշվածություն	103,924	73,676	177,600



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

Հաշվեկշռային արժեք	140,161	172,158	312,319
--------------------	---------	---------	---------

Բանկային վարկերը և փոխառություններն ապահովելու նպատակով Խումբը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրավադրել է 56,904 հազար ՀՀ դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 67,623 հազար ՀՀ դրամ) հաշվեկշռային արժեք ունեցող հիմնական միջոցներ:

26. Զարգացման վերջին միտումները

Առողջապահության համընդհանուր ապահովագրության ներդրմանը զուգահեռ՝ Ընկերությունն արձանագրել է վաճառքի ծավալների էական աճ: Ըստ Ընկերության կանխատեսումների՝ իրացման ծավալների դրական դինամիկան կրելու է շարունակական բնույթ: Հաշվի առնելով, որ Ընկերության կողմից վաճառվում են արեմիում որակի և ոչ մասսայական ապրանքներ, շուկայում առկա մրցակցային միջավայրը զգալի ազդեցություն չի ունենում վաճառքի ծավալների և գնագոյացման քաղաքականության վրա: Սա թույլ է տալիս պահպանել կայուն շուկայական դիրք և գործառնական արդյունավետություն:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ակտիվները կազմել են ավելի քան 4.1 միլիարդ ՀՀ դրամ՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի համեմատ աճելով մոտ 2.5 միլիարդ ՀՀ դրամով կամ 163.3%-ով:

Կազմակերպության սեփական կապիտալը 2025թ. դեկտեմբերի 31-ի համեմատ աճել է 177.2 միլիոն ՀՀ դրամ կամ 31.8%-ով և կազմել մոտ 734.9 միլիոն ՀՀ դրամ:


2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտավորությունների ծավալը 2024թ. դեկտեմբերի 31-ի համեմատ աճել է մոտ 234.7%-ով և կազմել մոտ 3.4 միլիարդ ՀՀ դրամ:

Կազմակերպության ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի դինամիկաները 2023 ից մինչև 2025 թվականը ներկայացված են ստորև.



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
 պարտատոմսերի թողարկման**

Հազ. ՀՀ դրամ



Կազմակերպության գործունեության ցուցանիշների վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելու համար պոտենցիալ ներդրողները կարող են ծանոթանալ Կազմակերպության տարեկան և կիսամյակային հաշվետվություններին, որոնք տեղադրված են Կազմակերպության պաշտոնական կայքում (www.ptest.am):

27. Թողարկողի կառավարման մարմինները

Ըստ կազմակերպության կանոնադրության Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը մասնակիցների ընդհանուր ժողովն է, որն ունի կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Ընկերության ընթացիկ գործերի ղեկավարումն իրականացնում է ընդհանուր ժողովի կողմից ընտրված գործադիր մարմինը՝ տնօրենը:

Ընկերությունը 2026 թվականի ապրիլի 30-ի դրությամբ ունի 44 աշխատակից:



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

Ընդհանուր ժողով

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Կազմակերպության ընդհանուր ժողովի բացառիկ լիազորություններն են՝

- Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ինչպես նաև կազմակերպություններ հիմնադրելու կամ նրանց մասնակցելու հարցերը,
- Ընկերության կանոնադրության հաստատումը և Ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոփոխումը,
- Ընկերության գործադիր մարմնի և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- Տարեկան հաշվետվությունների և տարեկան հաշվեկշռի հաստատումը,
- Ընկերության շահույթն Ընկերության մասնակիցների միջև բաշխելու մասին որոշումն ընդունելը,
- Ընկերության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի ընդունումը (հաստատումը),
- Ընկերության կողմից արժեթղթերի թողարկման մասին որոշում ընդունելը,
- Ընկերության աուդիտի իրականացման որոշումն ընդունելը,
- Ընկերության վերակազմակերպման և լուծարման մասին որոշում ընդունելը,
- օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

Գործադիր մարմին՝ Տնօրեն

Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության Տնօրենը, ով ընտրվում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից: Ընկերության Տնօրենը՝

- Առանց լիազորագրի գործում է Ընկերության անունից և ներկայացնում այն ՀՀ-ում և արտերկրում,
- տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
- աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին,
- բացում է հաշվարկային և այլ հաշիվներ բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում, ինչպես դրամով, այնպես էլ արտարժույթով,
- աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
- իրականացնում է Ընկերության կանոնադրությամբ սահմանված ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:

28. Թողարկողի կառավարման մարմինների անդամները և գործունեությունը

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն է: Ընկերության միակ մասնակիցն Արթուր Մելքոնյանն է՝ 100% բաժնեմասով: Ընկերության տնօրենը Արթուր Մարտիրոսյանն է:



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

<i>N</i>	<i>Անուն, Ազգանուն</i>	<i>Զբաղեցրած պաշտոնը</i>	<i>Բնակության վայր</i>	<i>Իրավասություններն ու պարտականությունները</i>	<i>Կազմակերպության գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը</i>	<i>Փորձառություն</i>
<i>1</i>	<i>Արթուր Մելքոնյան</i>	Միակ մասնակից	ՀՀ, ք. Երևան, Արմենուի Տիգրանյան 12/2	Ընկերության զարգացման ռազմավարության որոշում	Չի իրականացնում	30 տարի
<i>2</i>	<i>Արթուր Մարտիրոսյան</i>	Գործադիր մարմնի ղեկավար (Տնօրեն)	ՀՀ, ք. Երևան, Կիելյան 26 շենք, բնկարան 37	Ընկերության ընթացիկ կառավարում	Չի իրականացնում	15 տարի
<i>3</i>	<i>Սեդա Քոչարյան</i>	Ավագ հաշվապահ	ՀՀ, ք. Երևան, Արաբկիր 39 փ.1Ա	Հաշվապահների թիմի ղեկավարում, Հաշվապահական հաշվեկշիռների և հաշվետվությունների կազմում, ստուգում և ներկայացում	Չի իրականացնում	Ավելի քան 10 տարի



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

Ընկերության և նրա կառավարման մարմինների անդամների միջև սույն փաստաթղթի ներկայացման պահի դրությամբ շահերի բախման դեպքեր և հիմքեր չկան:

Ազդագրի ներկայացման պահին Թողարկողը չի բավարարում ՀՀ-ում ընդունված կորպորատիվ կառավարման սկզբունքներին: Միևնույն ժամանակ, Թողարկողը գիտակցում է, որ արժեթղթերի շուկա մուտք գործելուց հետո անհրաժեշտ է լինելու ամբողջությամբ բավարարել նշված սկզբունքներին:

Ընկերությունը նախատեսում է 2026թ.-ի օգոստոսին ընդունել՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի հուլիսի 30-ի N 1955-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքին միանալու մասին որոշում, ձևավորել Ընկերության խորհուրդ, ներդնել կորպորատիվ քարտուղարի ինստիտուտ, ինչպես նաև նախաձեռնել Ընկերությունում կորպորատիվ կառավարման սկզբունքների գործարկմանն ուղղված այլ քայլեր:

29. Հսկող անձինք

Թողարկողի հսկող անձն է Արթուր Մելքոնյանը կանոնադրական կապիտալում 100% մասնակցության ուժով:

30. Տեղեկատվություն Թողարկողի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին

Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Ընկերության 2024 և 2025 թվականների անկախ աուդիտորական եզրակացությամբ հաստատված հաշվետվությունները ներկայացված են սույն Ազդագրի Հավելված 4-ում: Ցանկության դեպքում ներդրողները Ընկերության ֆինանսական հաշվետվություններին կարող են ծանոթանալ Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.ptest.am:



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

Ընկերությունը վճարել է շահաբաժին 2025 թվականին 596,000 հազ. ՀՀ դրամ, 2024 թվականին 31,724 հազ. ՀՀ դրամ:

2026թ-ի մարտի 24-ին գրանցվել է Ընկերության կանոնադրության նոր փոփոխությունը, համաձայն որի Ընկերության կանոնադրական կապիտալը կազմել է 306,050 հազար ՀՀ դրամ: 2025 թվականի դեկտեմբերի 31-ից մինչև ՀՀ ԿԲ-ի կողմից Ազդագիրը գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում Թողարկողի ֆինանսական վիճակի այլ էական փոփոխություն տեղի չի ունեցել:

Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամսվա ընթացքում Ընկերությունը ներգրավված չէ ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա էական ազդեցություն ունեցող դատական, արբիտրաժային և (կամ) վարչական վարույթներում:

31. Լրացուցիչ տեղեկատվություն

31.1. Կանոնադրական կապիտալը

Ընկերության կանոնադրական կապիտալը 2024թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 36,050 հազար ՀՀ դրամ:

2025թ.-ի հունիսի 23-ին Արթուր Մելքոնյանը կատարել է 30,000 հազար ՀՀ դրամի կանոնադրական կապիտալի ավելացում և 2025թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ վերջինս կազմել է 66,050 հազար ՀՀ դրամ:

2026թ-ի մարտի 24-ի դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմել է 306,050 հազար ՀՀ դրամ, որը բաժանված է 1 բաժնեմասերի, մեկ բաժնեմասի անվանական արժեքը



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

կազմում է 306,050 հազար ՀՀ դրամ և սեփականության իրավունքով պատկանում է Արթուր Խաչատուրի Մելքոնյանին:

Ընկերության բոլոր 1 բաժնեմասերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և պատկանում են Ընկերության միակ մասնակից Արթուր Մելքոնյանին:

31.2 Կանոնադրությունը

Համաձայն Թողարկողի կանոնադրության Հոդված 1.1-ի՝ Ընկերության գործունեության նպատակը առևտրային գործունեություն իրականացնելու միջոցով շահույթի ստացումն է:

31.3 Շահաբաժիններ

2025թ. մայիսի 14-ին մասնակցին վճարվել է 596,000 հազար ՀՀ դրամ շահաբաժին, իսկ 2024թ.-ի ընթացքում՝ 31,724 հազար ՀՀ դրամ:

32. Էական պայմանագրերը

Ընկերությունում առկա չեն Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 1 տարվա ընթացքում Ընկերության կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող պայմանագրեր, որոնց գինը գերազանցում է Ընկերության վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5 տոկոսը:

33. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը

Այլ անձանց մասնագիտական կարծիք կամ երրորդ անձանցից վերցված տեղեկատվություն ներկայացվող Ազդագրում չի օգտագործվել:

Բացի Ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից, որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, Ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել



ԱԶԴԱԳԻՐ
**«ՊՐՈՖՏԵՍՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման**

աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Որպես սույն բաժնում ներկայացված տեղեկատվության ստացման աղբյուր, երրորդ անձինք ներգրավված չեն:

34. Այլ տեղեկատվություն

Ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում Կազմակերպության կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, տարեկան անկախ աուդիտորական եզրակացությունները մշտապես հասանելի են հանրությանը ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային ձևով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Կազմակերպության պաշտոնական կայքում՝ www.ptest.am հասցեով, իսկ թղթային տարբերակով ստանալու համար ներդրողները կարող են դիմել Թողարկողի գրասենյակ՝ ՀՀ, ք.Երևան, 0078, Աջափնյակ, Հ. Մարգարյան Փ., Շ. 6/1, ԲՆ.3 Բ/Կ



Բաժին 4. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը

Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Բաժնետոմսերի միջին կշռված թիվը

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) = (Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Սեփական կապիտալի միջին մեծություն) x 100

Ակտիվների շահութաբերություն (ROA) = (Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն) x 100

Զուտ շահույթի մարժա (NPM) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ

Կապիտալի համարժեքության գործակից = Սեփական կապիտալ / Ընդհանուր ակտիվներ

Ֆինանսական կախվածության գործակից = Ընդամենը պարտավորություններ / Սեփական կապիտալ

Բացարձակ իրացվելիության գործակից = (Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ + Ընթացիկ ֆինանսական ներդրումներ) / Ընթացիկ պարտավորություններ

Ընթացիկ իրացվելիության գործակից = (Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ + Ընթացիկ ֆինանսական ներդրումներ + Ընթացիկ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ) / Ընթացիկ պարտավորություններ

Ընդհանուր իրացվելիության գործակից = Ընթացիկ ակտիվներ / Ընթացիկ պարտավորություններ

Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից = Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ / Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի միջին արժեքը

Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Արտադրանքի,



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ / Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի միջին արժեքը)

Պաշարների շրջանառելիության գործակից = Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Պաշարների միջին արժեքը

Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Պաշարների միջին արժեքը)

Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից = Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը

Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը)



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

ՀԱՎԵԼՎԱԾ 2: Հայտ ֆիզիկական անձ ներդրողների համար

**«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ -ի թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի
ձեռքբերման Հայտ**

(ֆիզիկական անձանց համար)

Հայտի ներկայացման ամսաթիվը և
ժամանակը

_____ (օր, ամիս, տարի, ժամ, րոպե)

Ֆիզիկական անձի անվանումը

_____ (Անուն, Ազգանուն)

Էլ. փոստի հասցեն, հեռախոսահամարը

ՀԾՀ

Ռեզիդենտությունը

_____ (ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)

Սույն Հայտի ներկայացմամբ ընդունում եմք «ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) առաջարկը, որով և ցանկություն եմք հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Պարտավորումների ձեռքբերման ամսաթիվը

_____ (օր, ամիս, տարի)

Ձեռք բերվող պարտավորումների արժույթը

ՀՀ դրամ

Ձեռք բերվող պարտավորումների քանակը՝
հատ

_____ քանակը թվերով (տառերով)



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

Ձեռք բերվող պարտատոմսերի միավորի ձեռքբերման գինը

գինը թվերով

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը

ընդհանուր գումարը թվերով (տառերով)

Անձի բանկային հաշվի համարը

Բանկի անվանումը

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը

Արժեթղթերի հաշվի համարը

Սույն Հայտով, հավաստում ենք, որ Հայտը ներկայացնելուց առաջ ծանոթացել ենք պարտատոմսի Ազդագրին, պարտատոմսերի պայմաններին, ընդունում և համաձայն ենք դրանցում նշված պայմաններին և պատրաստակամ ենք ստանձնել Ընկերության թողարկած պարտատոմսերում ներդրումների հետ կապված հնարավոր ռիսկերը:

Հաստատում ենք, որ Ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Ընկերությանը ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Հաստատում ենք, որ սույն Հայտի բավարարման դեպքում Հայտը կհանդիսանա մեր և Ընկերության միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ մեր կողմից պարտատոմսերի ձեռքբերման (առքի) վերաբերյալ:

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները «ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի անունով բացված ՀՀ դրամային 2050022849041001 հաշվին են մուտքագրվում մինչև պարտատոմսերի ձեռքբերման օրվա ժամը 14:00-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են ԿՎԿՅԿ աշխատանքային օրը 14:00-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման

ՀԱՎԵԼՎԱԾ 3: Հայտ իրավաբանական անձ ներդրողների համար

«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ -ի թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման Հայտ

(իրավաբանական անձանց համար)

Հայտի ներկայացման ամսաթիվը և ժամանակը

_____ (օր, ամիս, տարի, ժամ, րոպե)

Իրավաբանական անձի անվանումը

_____ (ֆիրմային անվանում, կազմակերպարավական ձև)

Պետոճեզիստրի գրանցման տվյալները

_____ (գրանցման վկայականի համար, ամսաթիվ)

Գրանցման վայրի հասցեն, էլ. փոստի հասցեն, հեռախոսահամարը

ՀՎՀՀ

Ռեզիդենտությունը

_____ (ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)

Սույն Հայտի ներկայացմամբ ընդունում եմք «ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) առաջարկը, որով և ցանկություն եմք հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Պարտավորումների ձեռքբերման ամսաթիվը

_____ (օր, ամիս, տարի)

Ձեռք բերվող պարտավորումների արժույթը

ՀՀ դրամ

Ձեռք բերվող պարտավորումների քանակը՝ հատ

_____ քանակը թվերով (տառերով)



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

Ձեռք բերվող պարտավորումների միավորի ձեռքբերման գինը

գինը թվերով

Ձեռք բերվող պարտավորումների ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը

ընդհանուր գումարը թվերով (տառերով)

Անձի բանկային հաշվի համարը

Բանկի անվանումը

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը

Արժեթղթերի հաշվի համարը

Սույն Հայտով, հավաստում ենք, որ Հայտը ներկայացնելուց առաջ ծանոթացել ենք պարտատոմսի Ազդագրին, պարտատոմսերի պայմաններին, ընդունում և համաձայն ենք դրանցում նշված պայմաններին և պատրաստակամ ենք ստանձնել Ընկերության թողարկած պարտատոմսերում ներդրումների հետ կապված հնարավոր ռիսկերը:

Հաստատում ենք, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Ընկերությանը ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Հաստատում ենք, որ սույն Հայտի բավարարման դեպքում Հայտը կհանդիսանա մեր և Ընկերության միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ մեր կողմից պարտատոմսերի ձեռքբերման (առքի) վերաբերյալ:

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտավորումների ձեռքբերման համար դրամական միջոցները «ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի անունով բացված ՀՀ դրամային 2050022849041001 հաշվին են մուտքագրվում մինչև պարտավորումների ձեռքբերման օրվա ժամը 14:00-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են փվյալ աշխատանքային օրը 14:00-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:



ԱԶԴԱԳԻՐ
«ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային
պարտատոմսերի թողարկման

ՀԱՎԵԼՎԱԾ 4: Ֆինանսական հաշվետվություններ

**Համախմբված ֆինանսական
հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն**

«Պրոֆտեստ» ՍՊԸ

31 դեկտեմբերի 2025թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն	6
Համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	9
Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

«Պրոֆտեստ» ՍՊԸ-ի մասնակցին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի («Մայր ընկերություն») և նրա դուստր ընկերության (միասին՝ «Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական հոսքերը՝ համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «*Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «*Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի*» (ներառյալ՝ *Անկախության միջազգային ստանդարտները*) («ՀՀՄՍԽ կանոնագրք») և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են համախմբված ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում: Մենք նաև կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված պահանջների և ՀՀՄՍԽ կանոնագրքի համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՀՀՄԽ կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումների գերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Խումբը լուծարելու կամ Խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2025թ.	2024թ.
Հասույթ	6	1,951,642	1,809,941
Վաճառքի ինքնարժեք	7	(1,211,495)	(1,203,014)
Համախառն շահույթ		740,147	606,927
Այլ եկամուտ	8	408,974	41,928
Պետական շնորհից եկամուտ	9	62,680	19,639
Վաճառքի և իրացման ծախսեր	8	(95,426)	(72,116)
Վարչական ծախսեր	11	(251,318)	(140,345)
Այլ ծախսեր	12	(124,210)	(46,443)
Գործառնական գործունեությունից շահույթ		740,847	409,590
Բիզնես միավորման ձեռքբերումից օգուտ	5	248,255	-
Ֆինանսական եկամուտ	13	31,363	43
Ֆինանսական ծախսեր	13	(135,256)	(9,982)
Փոխարժեքային տարբերությունից զուտ (վնաս)/ օգուտ	14	(22,035)	7,323
Շահույթ մինչև հարկերը		863,174	406,974
Շահութահարկի գծով ծախս	15	(119,986)	(71,463)
Տարվա շահույթ		743,188	335,511
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		743,188	335,511

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ համախմբված ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 51-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ


	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	16	312,399	143,069
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	17	918,372	104,000
Հետաձգված հարկային ակտիվներ	18	30,962	14,494
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		1,261,733	261,563
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	19	1,486,859	869,988
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	20	605,610	411,081
Տրամադրված փոխառություններ	21	787,383	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	22	33,671	42,887
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		2,913,523	1,323,956
Ընդամենը ակտիվներ		4,175,256	1,585,519

Համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)


Հազար ՀՀ դրամ	Շանթթ.	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Սեփական կապիտալ	23		
Կանոնադրական կապիտալ		66,050	36,050
Կուտակված շահույթ		668,906	521,718
Ընդամենը սեփական կապիտալ		734,956	557,768
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Պետական շնորհ	24	148,173	-
Վարկեր և փոխառություններ	25	1,037,959	-
Վարձակալության գծով պարտավորություններ	17	595,186	53,058
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		1,781,318	53,058
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	25	480,837	42,878
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	26	877,576	872,963
Վարձակալության գծով պարտավորություններ	17	192,023	18,985
Ընթացիկ հարկային պարտավորություն		108,546	39,867
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		1,658,982	974,693
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		4,175,256	1,585,519

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ. մայիսի 25-ին:

Արթուր Մարտիրոսյան
Գործադիր տնօրեն



Սեդա Քոչարյան
Ավագ հաշվապահ



Համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 51-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդ	34,470	217,931	252,401
Տարվա շահույթ	-	335,511	335,511
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	335,511	335,511
Կանոնադրական կապիտալի ավելացում	1,580	-	1,580
Շահաբաժիններ	-	(31,724)	(31,724)
Գործարքներ սեփականատերերի հետ	1,580	(31,724)	(30,144)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդ	36,050	521,718	557,768
Տարվա շահույթ	-	743,188	743,188
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	743,188	743,188
Կանոնադրական կապիտալի ավելացում	30,000	-	30,000
Շահաբաժիններ	-	(596,000)	(596,000)
Գործարքներ սեփականատերերի հետ	30,000	(596,000)	(566,000)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդ	66,050	668,906	734,956

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 51-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2025թ.	2024թ.
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր			
Տարվա շահույթ		743,188	335,511
Ճշգրտումներ՝			
Մաշվածություն և անորտիզացիա		85,015	48,471
Հիմնական միջոցների օտարումից վնաս		-	8,477
Կասկածելի դեբիտորական պարտքերի պահուստի շարժ		51,363	(25,082)
Պետական շնորհից եկամուտ		(62,680)	(19,639)
Բիզնես միավորման ձեռքբերումից օգուտ		(248,255)	-
Ֆինանսական ծախսեր, զուտ		103,893	9,939
Շահութահարկի գծով ծախս		119,986	71,463
Փոխարժեքային տարբերությունից վնաս/(օգուտ)		22,035	(7,323)
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները		814,545	421,817
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն		50,319	(40,496)
Պաշարների փոփոխություն		(74,909)	(55,422)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն		(441,264)	83,152
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ		348,691	409,051
Վճարված տոկոսներ		(70,253)	(2,331)
Վճարված շահութահարկ		(67,775)	(69,977)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		210,663	336,743

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2025թ.	2024թ.
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր			
Հիմնական միջոցների ձեռքբերում		(18,669)	(3,324)
Տրամադրված փոխառություններ		(932,030)	(28,000)
Տրամադրված փոխառությունների մարում		93,769	28,000
Ձեռքբերումից դրամական միջոցների ավելացում		13,114	-
Ստացված տոկոսներ		189	43
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		(843,627)	(3,281)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական հոսքեր			
Կանոնադրական կապիտալի ավելացում		30,000	1,580
Վարկերից և փոխառություններից մուտքեր	27	1,556,698	233,145
Վարկերի, փոխառությունների և վարձակալական պարտավորությունների մարում	27	(368,443)	(516,314)
Վճարված շահաբաժիններ		(596,000)	(31,724)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ		622,225	(313,313)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/ աճ		(10,709)	20,149
Արտաթույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա		1,493	(283)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում		42,887	23,021
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում		33,671	42,887

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 51-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Պրոֆտեստ ՍՊԸ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար
հայկական (<<) դրամով)

1 Գործառնությունների բնույթը

«Պրոֆտեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը («Մայր ընկերություն», դուստր ընկերության հետ միասին՝ «Խումբ») հիմնադրվել է 2013թ.-ին: Մայր ընկերության գործունեության հիմնական ուղղությունը բժշկական պարագաների և սարքավորումների վաճառքն է Հայաստանի Հանրապետությունում:

«Պրոֆտեստ» ՍՊԸ-ն հանդիսանում է մի շարք միջազգային առաջատար արտադրող ընկերությունների պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում: Մայր ընկերությունը հիմնականում իրականացնում է մեծածախ վաճառք և համագործակցում է Հայաստանի գրեթե բոլոր բուժաստատությունների հետ:

Վաճառվող հիմնական ապրանքատեսակներն ներառում է.

- սրտի ինվազիվ և անոթային վիրահատությունների համար նախատեսված պարագաներ,
- վիրաբուժական գործիքներ,
- հեմոդիալիզի սարքեր և պարագաներ,
- ինչպես նաև դիագնոստիկ սարքեր՝ ԿՏ, ՄՌՏ և այլ բժշկական տեխնիկա:

Մայր ընկերությունն իրականացնում է նաև հեմոդիալիզի ծառայությունների մատուցում: Ներկայումս գործում են երեք հեմոդիալիզի կենտրոններ, որտեղ սպասարկվում է շուրջ 150 հիվանդ: Գործարկման փուլում են գտնվում նաև ք.Երևան, Մարգարյան 6/1 և ք. Գյումրի, Իսահակյան 41 հասցեներում տեղակայված նոր կենտրոնները: Գյումրիում բացվող կենտրոնը գործելու է ոչ միայն որպես հեմոդիալիզի կենտրոն, այլև որպես բազմապրոֆիլ բժշկական ախտորոշիչ կենտրոն:

Մայր ընկերության զարգացման ռազմավարության շրջանակում նախատեսվում է մինչև 2026 թ.-ի ավարտը ձեռք բերել տարածքներ Արտաշատ և Հրազդան քաղաքներում, ինչը հնարավորություն կտա ավելացնել սպասարկվող հիվանդների թիվը և ընդլայնել մատուցվող ծառայությունների շրջանակը: 2027թ.-ին նախատեսվում է սպասարկել շուրջ 400 հիվանդ:

Մայր ընկերությունն ունի մեկ դուստր ընկերություն՝ «Պրոմ-Տեստ» ՍՊԸ (Դուստր ընկերություն), որի բաժնեմասն ամբողջությամբ իրեն է պատկանում:

«Պրոմ-Տեստ» ՍՊԸ-ն Հայաստանի մոլեկուլային կենսաբանության և բարձր տեխնոլոգիական ախտորոշման ոլորտների առաջատար կազմակերպություններից է՝ հիմնադրված 1998թ.-ին: Դուստր ընկերությունը ներդրել է մի շարք նորարարական տեխնոլոգիաներ, այդ թվում՝ ՊՇՌ ախտորոշում, գենետիկական հետազոտություններ և սեքվենավորում: Այն կարևոր դեր է ունեցել ինչպես մասնագիտացված բժշկական ծառայությունների զարգացման, այնպես էլ համաճարակաբանական ծրագրերի իրականացման գործում: «Պրոմ-Տեստ» ՍՊԸ-ն շարունակաբար զարգացնում է իր կարողությունները՝ ապահովելով ժամանակակից և հուսալի ախտորոշում: Դուստր ընկերությունը հանդիսանում է մի շարք աշխարհահռչակ ընկերությունների պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում, ինչպիսիք են. Abbott Laboratories: Abbott Diabetes Care, Abbott Molecular, Abbott Vascular, Abbott Diagnostics; Euroimmun, Beckman Coulter և այլն:

2 Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն

Մայր ընկերության հիմնադիրը և միակ բաժնետերը՝ 100% բաժնեմասով, հանդիսանում է Արթուր Խաչատուրի Մելքոնյանը: Մայր ընկերության գրանցման և հիմնական գործունեության վայրն է՝ ք. Երևան, Հ. Մարգարյան փողոց, 6/1 շենք:

Դուստր Ընկերությունը գրանցված է ք. Երևան, Կոմիտասի/Շ/58/12բն. Արաբկիր 0014 հասցեում:

Խմբի աշխատակիցների միջին թվաքանակը 2025թ. կազմել է 63 մարդ (2024թ.՝ 41 մարդ):

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները համախմբվում են Մայր ընկերություն կողմից:

Դուստր ընկերություններ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված են հետևյալ դուստր ընկերությունը.

Դուստր ընկերություն	Մասնաբաժին %	Գրանցման երկիր	Հիմնական գործունեություն	Գրանցման ամսաթիվ	Ձեռք-բերման ամսաթիվ
«Պրոմ-Տեստ» ՍՊԸ	100%	Հայաստան	Լաբորատոր անալիզի և ծառայությունների մատուցում	7/11/2025թ.	7/11/2025թ.

Համապատասխանություն և անընդհատություն

Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (<<ՄՍՄ) կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ Խումբն ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, կապիտալի նկատմամբ իրավական պահանջները և ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Խմբի շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

Գործարար միջավայր

2025թ. Հայաստանի գործարար միջավայրը շարունակում է գտնվել աշխարհաքաղաքական լարվածության, տարածաշրջանային անվտանգության ռիսկերի և գլոբալ տնտեսության փոփոխվող պայմանների ազդեցության տակ:

Ընթացիկ տարում տնտեսական ցուցանիշները տարբեր ոլորտներում անհավասար են եղել: Շարունակական աճը հիմնականում ապահովվել է առևտրի, ծառայությունների և շինարարության ոլորտներում՝ արտացոլելով մասնավոր սպառման և ներդրումային ակտիվության կայունությունը: Թեպետ նախկինում որոշակի ենթաճյուղերի կրճատումից կրած ազդեցության՝ արդյունաբերական արտադրությունը վերջին հաշվետու ժամանակաշրջանում ցուցաբերել է կայունություն և չափավոր բարելավում՝ նպաստելով արտադրական որոշակի գործունեության վերականգնմանը:

Ֆինանսական ոլորտը կայուն է մնացել՝ բանկային համակարգի բավարար կապիտալացվածությամբ և բանկային համակարգի պատշաճ վերահսկողությամբ պայմանավորված: Չնայած արտաքին ռիսկերի առկայությանը՝ կարգավորող վերահսկողությունը և վերահսկողական պրակտիկան շարունակաբար ապահովել են ֆինանսական հաստատությունների իրացվելիությունը, վճարունակությունը և գործառնական կայունությունը: 2025թ. Հայաստանի տնտեսական աճը կազմել է 5.1%, իսկ 2026թ. կանխատեսվում է 5.4%:

3 Նոր կամ վերանայված ստանդարտներ կամ մեկնաբանություններ

3.1 2025թ. հունվարի 1-ի դրությամբ ընդունված նոր ստանդարտներ

Ընթացիկ տարում Խումբն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2025թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի և ՖՀՄՍ մեկնաբանությունների կոմիտեի կողմից:

ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ» ստանդարտի փոփոխությունը՝ կապված «Փոխանակելիության բացակայության» հետ առաջին անգամ կիրառվել է 2025թ., որը սահմանում է պահանջներ՝ գնահատելու, թե երբ է արժույթը փոխարկելի այլ արժույթի նկատմամբ, և երբ՝ ոչ: Ստանդարտի այս փոփոխության ընդունումը ազդեցություն չի ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

3.2 Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

- ՀՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»

2024թ. ապրիլին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՀՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում» ստանդարտը, որը փոխարինում է ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտը: Չնայած ՀՀՄՍ 18-ը ներառում է ՀՀՄՍ 1-ի բազմաթիվ պահանջներ, այն ներկայացնում է նոր պահանջներ՝ ֆինանսական հաշվետվությունների կառուցվածքը բարելավելու և ներդրողներին ավելի մանրամասն ու օգտակար տեղեկատվություն տրամադրելու նպատակով, ներառյալ՝

- շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում երկու նոր ենթագումարի սահմանում՝ գործառնական շահույթ և շահույթ կամ վնաս մինչև ֆինանսավորումը և հարկերը
- շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտների և ծախսերի դասակարգում հետևյալ հինգ կատեգորիաներից մեկում՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, հարկեր և ընդհատված գործառնություններ
- ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափանիշների բացահայտման նոր պահանջ
- ֆինանսական հաշվետվություններում և կից ծանոթագրություններում ներկայացվող տեղեկատվության միավորման և տարանջատման սկզբունքների բարելավում

Նախկինում ՀՀՄՍ 1-ում ներառված որոշ բացահայտման պահանջներ տեղափոխվել են ՀՀՄՍ 8՝ առանց էական փոփոխությունների: Սա հատկապես վերաբերում է հաշվապահական հաշվառման քաղաքականության և գնահատման անորոշության աղբյուրների բացահայտումներին: Այս փոփոխությունների արդյունքում ՀՀՄՍ 8-ը կվերանվանվի «Ֆինանսական հաշվետվությունների պարաստման հիմունքներ»:

Ի հավելումն, ՀՀՄՍ 7 «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ստանդարտում կատարվել են սահմանափակ փոփոխություններ, որոնք ներառում են անուղղակի մեթոդով պատրաստված հաշվետվության գործառնական գործունեությունից դրամական հոսքերի որոշման մեկնարկային կետի փոփոխությունը «շահույթ կամ վնասից» «գործառնական շահույթ կամ վնաս» և շահաբաժիններից և տոկոսներից դրամական հոսքերի դասակարգման ընտրանքի վերացումը: Բացի այդ, կան հետևողական փոփոխություններ մի շարք այլ ՀՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներում:

ՀՀՄՍ 18-ը ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ ավելի վաղ կիրառման հնարավորությամբ: ՀՀՄՍ 18-ը կկիրառվի հետընթաց՝ կիրառելով հատուկ անցումային դրույթներ:

Խումբը ներկայումս գնահատում է ՖՀՄՍ 18-ի ազդեցությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների և համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա:

Ղեկավարության գնահատմամբ չի ակնկալվում, որ այլ նոր ստանդարտները, փոփոխությունները և մեկնաբանությունները, որոնք չեն կիրառվել ընթացիկ տարում, էական ազդեցություն կունենան Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- «Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ) (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- «Բնությունից կախված էլեկտրաէներգիային հղումով պայմանագրեր» (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ) (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների տարեկան բարեփոխումներ - Հատոր 11 (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- ՖՀՄՍ 19 «Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվեպրոդակսանության. բացահայտումներ» (ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական հոդվածներ

4.1 Պատրաստման հիմքերը

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք չափվել են իրական արժեքով:

4.2 Համախմբման հիմքեր

Խմբի ֆինանսական հաշվետվությունները համախմբում են մայր ընկերության և իր դուստր ընկերության՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները: Դուստր ընկերության հաշվետու ամսաթիվը դեկտեմբերի 31-ն է:

Համախմբման ժամանակ Խմբի ընկերությունների միջև բոլոր գործարքները և մնացորդները բացառվում են, ներառյալ Խմբի ընկերությունների միջև գործարքների արդյունքում չվաստակած օգուտները և չկրած վնասները: Երբ ակտիվի ներխմբային վաճառքից առաջացող չկրած վնասը համախմբման ժամանակ հակադարձվում է, հիմքում ընկած ակտիվը նաև ենթարկվում է արժեզրկվածության գծով ստուգման՝ Խմբի տեսանկյունից:

Տարվա ընթացքում ձեռք բերած դուստր ընկերության շահույթը ճանաչվում է ձեռքբերման ամսաթվից:

4.3 Կլիմային առնչվող հարցեր

Խումբը և նրա հաճախորդները ապագայում կարող են բախվել կլիմայի հետ կապված զգալի ռիսկերի: Այս ռիսկերը կարող են ֆինանսական կորուստների և անբարենպաստ ոչ ֆինանսական ազդեցությունների պատճառ հանդիսանալ, որոնք կարող են բխել կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական և բնապահպանական արձագանքներից: Կլիմայական ռիսկերի հիմնական աղբյուրները սահմանվել են որպես ֆիզիկական և անցումային ռիսկեր:

Ֆիզիկական ռիսկերն առաջանում են եղանակային կտրուկ իրադարձությունների հետևանքով, ինչպիսիք են փոթորիկները, ջրհեղեղները և անտառային հրդեհները, ինչպես նաև կլիմայական պայմանների երկարաժամկետ փոփոխությունները, ինչպիսիք են կայուն բարձր ջերմաստիճանը, ջերմային ալիքները, և երաշտը:

Անցումային ռիսկերը կարող են առաջանալ զրոյական արտանետումներով տնտեսության անցնելու հետևանքով, ինչպիսիք են օրենքների և կանոնակարգերի փոփոխությունները, դատական գործընթացները՝ կապված վնասի չեզոքացման կամ մեղմացման հետ և որոշակի ապրանքների, արտադրանքների և ծառայությունների առաջարկի և պահանջարկի փոփոխությունների հետևանքով՝ կապված սպառողների վարքագծի և ներդրողների պահանջարկի փոփոխության հետ:

Այս ռիսկերը ստանում են աճող կարգավորիչ, քաղաքական և հասարակական վերահսկողություն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով: Թեև որոշ ֆիզիկական ռիսկեր կարող են կանխատեսելի լինել, կան զգալի անորոշություններ դրանց դրսևորման չափի և ժամանակի վերաբերյալ: Անցումային ռիսկերի առումով անորոշությունը պահպանվում է առաջիկա կարգավորող և քաղաքական փոփոխությունների, սպառողների պահանջարկի և մատակարարման շղթաների փոփոխությունների հետ կապված:

Խումբը գիտակցում է հետագա ջանքերի անհրաժեշտությունը՝ կլիմայական գործոնները Խմբի ռիսկերի կառավարման գնահատականներում և արձանագրություններում ամբողջությամբ ինտեգրելու գործում:

4.4 Արժույթ

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (<< դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Խմբի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: << դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

Արտարժույթով գործարքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (<< ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ << ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը:

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
<< դրամ/1 ԱՄՆ դոլար	381.36	396.56
<< դրամ/1 եվրո	449.01	413.89

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը):

4.5 Բիզնեսի միավորումներ և գույվիլ

Բիզնես միավորումների հաշվառման ժամանակ Խումբը կիրառում է գնման մեթոդը: Դուստր ընկերության նկատմամբ վերահսկողություն ձեռք բերելու համար փոխանցված հատուցումը հաշվառվում է որպես փոխանցված ակտիվների, առաջացած պարտավորությունների և ընկերության թողարկած սեփական կապիտալի բաժնեմասերի՝ ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրական արժեքների հանրագումար, որը ներառում է պայմանական հատուցման համաձայնությունից առաջացող ցանկացած ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը: Ձեռքբերման ծախսերը ծախսագրվում են տեղի ունենալուն զուգընթաց:

Ձեռք բերված ակտիվները և ստանձնած պարտավորությունները սովորաբար չափվում են ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրենց իրական արժեքով:

Գուդվիլն առաջանում է բիզնես միավորումների արդյունքում և ներկայացնում է ձեռքբերված որոշելի ակտիվների, ստանձնած պարտավորությունների ու պայմանական պարտավորությունների ձեռքբերման արժեքի ավելցուկը ընկերության բաժնեմասի իրական արժեքի նկատմամբ: Գուդվիլը ճանաչվում է որպես ակտիվ՝ սկզբնական արժեքով և բաշխվում է դրամաստեղծ միավորին՝ հիմնվելով յուրաքանչյուր դրամաստեղծ միավորի կամ դրամաստեղծ միավորների խմբի վրա, որոնք, ըստ ակնկալության, օգուտներ կստանան ձեռքբերման սիներգիզմներից:

Սկզբնական ճանաչումից հետո գուդվիլը ենթարկվում է արժեզրկման ստուգմանը տարեկան գոնե մեկ անգամ, կամ երբ հանգամանքները կամ իրադարձությունները վկայում են, որ այս արժեքի մասով կարող է անորոշություն լինել: Գուդվիլի գծով արժեզրկումը գնահատվում է դրամաստեղծ միավորի մակարդակում: Դրամաստեղծ միավորը գուդվիլի պարագայում այն նվազագույն մակարդակն է, որում գուդվիլը մոնիտորինգի է ենթարկվում ներքին կառավարման նպատակով: Այն դեպքում, երբ արժեզրկումը բացահայտված է, գուդվիլի հաշվեկշռային արժեքն անմիջապես գրանցվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հետագայում չի հակադարձվում:

4.6 Հասույթ

Հասույթը ձևավորվում է հիմնականում բժշկական պարագաների և սարքավորումների վաճառքից և հեմոդիալիզի և ախտորոշիչ ծառայությունների մատուցումից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Խումբն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1. Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
2. Բացահայտել կատարման պարտականությունները
3. Որոշել գործարքի գինը
4. Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
5. Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահի կամ ժամանակի ընթացքում, երբ Խումբը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

4.7 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 5 տարի համակարգչային ծրագրերի արտոնագրերի համար:

4.8 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Մեքենասարքավորումներ	- 8 տարի
Տրանսպորտային միջոցներ, տնտեսական գույք և այլն	- 8 տարի

Քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ, համապատասխան հաշվեկշռային արժեքը չի մաշվում:

4.9 Վարձակալված ակտիվներ

Խումբը՝ որպես վարձակալ

Խումբը հանդես է գալիս որպես վարձակալ և կնքում է վարձակալության պայմանագրեր հիմնականում հեռուդիալիզի ծառայությունների մատուցման և լաբորատոր ախտորոշման համար նախատեսված տարածքների, ինչպես նաև բժշկական սարքավորումների վարձակալության նպատակով:

Տարածքների վարձակալության պայմանագրերը, որպես կանոն, կնքվում են 5-ից 10 տարի ժամկետով: Բժշկական սարքավորումների վարձակալության պայմանագրերը սովորաբար ունեն 4-ից 5 տարի ժամկետ և պարունակում են անմիջապես վարձակալության ժամկետի ավարտին ձեռք բերելու հնարավորություն:

Խումբը չի կնքում վաճառքի և հետադարձ վարձակալության պայմանագրեր: Բոլոր վարձակալության պայմանագրերը կնքվում են անհատական հիմունքներով և պարունակում են տարբեր պայմաններ:

Խումբը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն պայմանագրի գործողության սկզբում: Վարձակալության պայմանագիրն իրավունք է տալիս որոշակի ժամանակահատվածում սահմանելու որոշակիացված ակտիվի օգտագործման ուղղությունները և ստանալու որոշակիացված ակտիվից բոլոր տնտեսական օգուտները՝ փոխհատուցման դիմաց:

Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Խումբը իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Խմբի կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Խումբը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար

Ճառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Խումբը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվն արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան:

Մեկնարկի ամսաթվին Խումբը չափում է վարձակալության գծով պարտավորությունն այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Խմբի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Խումբը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

4.10 Մաշվող ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ճառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորուստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ:

4.11 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ հաշվի առած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով չափվող,
- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,

- իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Խմբի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամտում կամ փոխարժեքային տարբերությունից օգուտում կամ վնասում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որն արտացոլված է այլ ծախսերում : Խմբի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են Ծանոթագրություն 30-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունն աննշան է, զեղչում չի կատարվում:

Ներկայացված ժամանակաշրջաններում Խումբն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ չունի:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»:

ՖՀՄՍ 9-ին համապատասխան՝ Խումբը ճանաչում է ակնկալվող պարտքային կորուստների պահուստ՝ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով: Ակնկալվող պարտքային կորուստները դրամական պակասությունների ներկա արժեքն են, որն իրենից ներկայացնում է պայմանագրին համապատասխան Խմբին հասանելի բոլոր պայմանագրային դրամական հոսքերի և Խմբի կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունը: Դրամական պակասությունները զեղչվում են ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով (կամ պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքով՝ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվի համար):

ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջների կիրառման մանրամասն վերլուծության համար տե՛ս Ծանոթագրություն 31.2-ը:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ հաշվի առած գործարքի հետ կապված ծախսումները, եթե Խումբը ֆինանսական պարտավորությունը չի դասակարգել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Իրական արժեքի և անվանական արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացի բաժնետերերից շուկայականից ցածր տոկոսադրույքով ստացված անտոկոս փոխառություններից:

Հետագայում ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Տոկոսների հետ կապված ծախսերը և շահույթում կամ վնասում գրանցված գործիքի իրական արժեքում փոփոխությունները, եթե այդպիսիք կան, ներառվում են ֆինանսական ծախսում կամ ֆինանսական եկամտում:

Ներկայացված ժամանակաշրջաններում Խումբն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություն չունի:

Խմբի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են Ծանոթագրություն 30-ում:

Սեփականատիրոջը տրամադրված/սեփականատիրոջից ստացված փոխառություններ

Սեփականատիրոջը տրամադրված/սեփականատիրոջից ստացված փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Փոխառության իրական արժեքի և անվանական արժեքի տարբերությունը ձևակերպվում է սեփական կապիտալում որպես կապիտալի համալրում կամ կապիտալի բաշխում:

Սկզբնական ճանաչումից հետո սեփականատիրոջը տրամադրված և սեփականատիրոջից ստացված փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ հաշվեկշռային արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:

Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը սեփականատիրոջը տրամադրված և սեփականատիրոջից ստացված և փոխառությունների սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի գնահատման վերաբերյալ բացահայտված է Ծանոթագրություն 32-ում:

Շուկայականից ցածր տոկոսադրույքով ստացված պետական վարկի օգուտի հաշվարկը բացահայտված է Ծանոթագրություն 4.14-ում:

4.12 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները, դրամական միջոցները՝ ճանապարհին: Դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով:

Բանկային օվերդրաֆտները՝ պարբերաբար տատանվող դրական և բացասական մնացորդներով, ենթակա են վերադարձման ըստ պահանջի և հանդիսանում են Խմբի դրամական միջոցների կառավարման անբաժանելի մասը, այդպիսով՝ դրամական միջոցների մասին համախմբված հաշվետվությունում ներառվում են դրամական միջոցների և դրանց համարժեքների կազմում: Քանի որ ՀՀՄՍ 32-ի հաշվանցման չափանիշները բավարարված չեն, ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում բանկային օվերդրաֆտները ներառված են պարտավորությունների կազմում:

4.13 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք՝ իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

4.14 Պետական շնորհներ

Պետական շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Խումբը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Պետական շնորհները, որոնց հիմնական պայմանը Խմբի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սխտեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ պետական շնորհները ճանաչվում են սխտեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Պետական շնորհը, որը հատկացվում է Խմբին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Շուկայականից ցածր տոկոսադրույքով ստացված պետական վարկ

Շուկայականից ցածր տոկոսադրույքով ստացված պետական վարկի օգուտը դիտվում է որպես պետական շնորհ: Վարկը ճանաչվում և չափվում է համաձայն ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտի: Շուկայականից ցածր տոկոսադրույքի օգուտը չափվում է որպես ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված վարկի սկզբնական հաշվեկշռային արժեքի և ստացված մուտքերի միջև տարբերություն: Օգուտը հաշվառվում է որպես պետական շնորհ: Հետագայում, շնորհը ճանաչվում է շահույթում կամ վնասում սխտեմատիկորեն այն ժամանակահատվածների ընթացքում, երբ Խումբը որպես ծախս է ճանաչում այն համապատասխան ծախսերը, որոնց համար շնորհները նախատեսված են փոխհատուցելու համար:

4.15 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, երբ Խումբն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

4.16 Շահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գույքի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Խումբը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Խումբը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Խումբը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

4.17 Սեփական կապիտալ և շահաբաժիններ

Խմբի կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Կանոնադրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնեմասերի անվանական արժեքը:

Կուտակված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

4.18 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ամբողջությամբ ենթակա են մարման տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

- (ա) աշխատավարձերը և պարգևավճարները,
- (բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Խմբին մատուցում են ծառայություններ, Խումբն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

- (ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղչված գումարը, Խումբը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,
- (բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

- (ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,
- (բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարզևավճարներ

Պարզևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Խումբն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Խումբը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

4.19 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են իրատեսական:

4.19.1 Գնահատման անորոշություն

Խումբն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Պաշարներ

Ղեկավարությունը գնահատում է պաշարների զուտ իրացման արժեքը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի ամենավտահեղի ապացույցները: Այս պաշարների ապագա իրացման վրա կարող են ազդեցություն ունենալ ապագա տեխնոլոգիաները կամ շուկայով առաջնորդվող այլ փոփոխությունները, որը կարող է նվազեցնել ապագա վաճառքի գները:

Իրական արժեքի չափումը

Այն պարագայում, երբ գործող շուկաների տվյալները բացակայում են, ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման մեթոդներ: Այս գործընթացն ընդգրկում է գնահատումների և ենթադրությունների մշակում, որոնք համահունչ են այն բանի հետ, թե ինչպես շուկայի մասնակիցները կգնահատեին գործիքը: Ղեկավարությունն իր ենթադրությունների համար որպես հիմք է վերցնում դիտելի տվյալները, սակայն այդպիսի տեղեկատվությունը միշտ չէ, որ հասանելի է: Այս պարագայում ղեկավարությունն օգտագործում է հասանելի լավագույն տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել հաշվետու ամսաթվի դրությամբ իրական գներից, որոնք կարող են ստացվել պարզաձև ձեռքի գործարքի պարագայում:

Գնահատման մեթոդների կիրառմամբ չափված (օրինակ՝ զեղչված դրամական հոսքերի մոդելներ) ֆինանսական գործիքների դեպքում ղեկավարությունն առավելագույնի է հասցնում դիտելի ելակետային տվյալների օգտագործումը: Այնուամենայնիվ, երբ այդպիսի տվյալները հասանելի չեն, կիրառվում են ոչ դիտելի ելակետային տվյալներ: Ենթադրությունների փոփոխությունները՝ ներառյալ շուկայական տոկոսադրույքները, կրեդիտային սփրեդները, իրացվելիության պայմանները կամ փոփոխականությունները, կարող են էական ազդեցություն ունենալ ճանաչված իրական արժեքների վրա:

Գնահատման մեթոդների, հիմնական ելակետային տվյալների և իրական արժեքի հիերարխիայի մակարդակների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 32-ում:

Մաշվող ակտիվների օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները

Ղեկավարությունը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ վերանայում է մաշվող ակտիվների օգտակար ծառայության ժամկետների և մնացորդային արժեքների գնահատումները՝ հիմնվելով ակտիվների ակնկալվող օգտակարությունից: Այս գնահատումներում անորոշությունները կապված են տեխնոլոգիական հնության հետ, որը կարող է փոխել որոշակի ծրագրային ապահովման և SS սարքավորումների օգտակարությունը, ինչպես նաև բնապահպանական կանոնակարգերը, որոնք կարող են հանգեցնել աղտոտող ակտիվների ավելի արագ մաշվածությանը:

Մաշվող ակտիվների օգտակար ծառայության հետ կապված իրականացվել է վերանայում՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվի դրությամբ հայտնի կլիմայական փոփոխությունը և շրջակա միջավայրի կանոնակարգերը: Վերանայման արդյունքում համախմբված մաշվող ակտիվների հաշվեկշռային արժեքի վրա որևէ էական ազդեցություն չի հայտնաբերվել:

Մաշվող ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները վերանայվում են առնվազն տարեկան մեկ անգամ՝ հաշվի առնելով վերոհիշյալ գործոնները, ինչպես նաև համապատասխան կարևոր տեղեկությունները: Ղեկավարության համոզմամբ մաշվող ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե մաշվող ակտիվների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա համախմբված ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Վարձակալված ակտիվներ

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների և վարձակալության գծով պարտավորությունների արժեքը հիմնված է վարձակալության ժամկետների վերաբերյալ ղեկավարության գնահատումների և վարձակալական վճարների զեղչման համար կիրառվող լրացուցիչ փոխառության տոկոսադրույքի վրա:

Վարձակալության ժամկետը համապատասխանում է յուրաքանչյուր պայմանագրի վարձակալության չեղյալ չհայտարարվող ժամկետին, բացառությամբ այն դեպքերի, երբ հսումբը ողջամտորեն վստահ է, որ կիրառելու է երկարաձգման հնարավորությունը: Վարձակալության ժամկետները գնահատելիս ղեկավարությունը հաշվի է առնում բոլոր համապատասխան փաստերը և հանգամանքները, որոնք համար ստեղծում են տնտեսական խթաններ՝ վարձակալության ժամկետի երկարաձգման տարբերակը կիրառելու համար, ներառյալ վարձակալած հողատարածքում գտնվող ակտիվի օգտակար ծառայության ժամկետը և վարձակալությունը դադարեցնելու կամ նոր վարձակալական պայմանագիր կնքելու հետ կապված ծախսերը:

Բացի այդ, հսումբը չի կարող հեշտությամբ որոշել վարձակալության պայմանագրին ներհատուկ տոկոսադրույքը, հետևաբար, վարձակալության գծով պարտավորությունները չափելու համար օգտագործում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը (ԼՓՏ): ԼՓՏ-ն այն տոկոսադրույքն է, որը հսումբը պետք է վճարեր նմանատիպ ժամկետով և նմանատիպ գրավով փոխառություն վերցնելու համար, նմանատիպ տնտեսական միջավայրում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի նմանատիպ արժեքով ակտիվ ձեռք բերելու համար: Հետևաբար, ԼՓՏ-ն արտացոլում է այն, ինչ հսումբը «պետք է վճարեր», ինչը պահանջում է գնահատում, երբ առկա չեն դիտարկելի դրույքաչափեր կամ երբ դրանք պետք է ճշգրտվեն՝ արտացոլելու վարձակալության ժամկետներն ու պայմանները: Խումբը գնահատում է ԼՓՏ-ն՝ օգտագործելով դիտարկելի ելակետային տվյալները (օրինակ՝ շուկայական տոկոսադրույքները), երբ առկա է, և պահանջվում է կատարել կոնկրետ կազմակերպության համար որոշակի գնահատումներ:

Այս գործոնների փոփոխությունները կարող են ազդել վարձակալության գնահատված ժամկետի և օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ու վարձակալության պարտավորությունների հաշվեկշռային արժեքի վրա:

Ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ

Խումբն օգտագործում է դատողություն՝ գնահատելու ամորտիզացված արժեքով ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստները: Ակնկալվող պարտքային կորուստները չափվում են անաչառ և հավանականության միջին կշռված գումարով, դրամի ժամանակային արժեքով և խելամիտ ու հիմնավորված տեղեկությամբ հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ՝ կապված անցյալ իրադարձությունների, ներկա պայմանների և ապագա տնտեսական պայմանների կանխատեսումների հետ: Պահուստի դրույքաչափերը հաշվարկվում են՝ հիմնվելով հաճախորդների տարբեր սեգմենտների խմբավորումներից առաջացած ժամկետանց օրերի վրա, որոնք կորստի

նույնատիպ մոդել ունեն (օրինակ՝ ըստ աշխարհագրական դիրքի, ծառայության տեսակի, հաճախորդի տեսակի և վարկանիշի և պարտքային ապահովագրության տեսակների):

Ակնկալվող պարտքային կորուստները չափվում են որպես բոլոր դրամական միջոցների չվճարման հավանականության միջին կշռված ներկա արժեք յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի ակնկալվող գործողության ժամկետի ընթացքում: Ակնկալվող պարտքային կորուստները հիմնականում հաշվարկվում են՝ օգտագործելով վիճակագրական մոդելը, որը հիմնվում է ռիսկային երեք հիմնական պարամետրերի վրա. պարտազանցման հավանականություն, պարտազանցման ժամանակ վնասի և պարտազանցման դեպքում ռիսկի տակ գտնվող գումարը:

Սկզբնապես պահուստի մատրիցան հիմնված է Խմբի՝ պարտքը չվճարելու դիտարկված պատմական գործակիցների վրա: Խումբը ստուգել է պահուստի մատրիցան՝ պատմական պարտքային կորստի փորձառությունն ապագան կանխատեսող տեղեկության հետ ճշգրտելու համար: Այս տեղեկությունը ներառում է մակրոտնտեսական գործոնները (գործազրկության և գնաճի մակարդակը) և ապագա տնտեսական պայմանների կանխատեսումը: Տնտեսական պայմանների կանխատեսման ազդեցությունն ակնկալվող պարտքային կորուստների որոշման վրա աննշան է եղել: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում պարտքը չվճարելու դիտարկված պատմական գործակիցները թարմացվում են և փոփոխությունները վերլուծվում են ապագան կանխատեսող գնահատականներում:

Պարտքը չվճարելու դիտարկված պատմական գործակիցների, տնտեսական պայմանների կանխատեսման և ակնկալվող պարտքային կորուստների միջև հարաբերակցության գնահատումը նշանակալի է: Ակնկալվող պարտքային կորուստների արժեքը հանգամանքների և կանխատեսվող տնտեսական պայմանների նկատմամբ զգայուն է: Խմբի պատմական պարտքային կորստի փորձառությունը և տնտեսական պայմանների կանխատեսումը կարող են չարտահայտել հաճախորդի՝ ապագայում սպասվող պարտքը չվճարելու հավանականությունը:

Խմբի առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կարուստների վերաբերյալ տեղեկությունը բացահայտված է Ծանոթագրություն 31.2-ում:

5 Բիզնես միավորման ձեռքբերումներ

	Հիմնական գործունեություն	Ձեռքբերման ամսաթիվ	Ձեռքբերված բաժնեմաս	Ձեռքբերման ծախսեր
2025թ.				
	«Պրոմ-Տեստ» ՍՊԸ	Լաբորատոր ամստորոշիչ ծառայությունների մատուցում	7/11/2025թ.	100%
				-

2025թ. նոյեմբերի 7-ին «Պրոմֆտեստ» ՍՊԸ-ն ձեռք է բերել «Պրոմ-Տեստ» ՍՊԸ-ի բաժնեմասերի 100%-ը, որի արդյունքում «Պրոմ-Տեստ» ՍՊԸ-ն դարձել է Խմբի դուստր ընկերություն:

Ձեռքբերման ամսաթվի դրությամբ դուստր ընկերության որոշելի ակտիվներն ու պարտավորությունները ճանաչվել են իրենց իրական արժեքներով: Ձեռքբերված զուտ որոշելի ակտիվների իրական արժեքը կազմել է 340,225 հազար ՀՀ դրամ:

Ձեռքբերման գինը կազմել է 91,970 հազար ՀՀ դրամ, որը ներառված է առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի կազմում և ենթակա է մարման ձեռքբերման ամսաթվից մեկ տարվա ընթացքում:

Ձեռքբերված զուտ ակտիվների իրական արժեքի և ձեռքբերման գնի տարբերությունը՝ 248,255 հազար ՀՀ դրամ, ճանաչվել է որպես ձեռքբերումից օգուտ և ներառվել է շահույթի կամ վնասի մասին համախմբված հաշվետվությունում:

2025թ.

**Դուստր ընկերություն
 Ձեռքբերման իրական արժեք**

Ոչ ընթացիկ ակտիվներ

Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	159,058
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	646,248

Ընթացիկ ակտիվներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13,114
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	256,364
Պաշարներ	555,277
Տրամադրված փոխառություններ	10,170

Ոչ ընթացիկ պարտավորություններ

Վարկեր և փոխառություններ	8,924
Վարձակալության գծով պարտավորություններ	682,299

Ընթացիկ պարտավորություններ

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	397,096
Վարկեր և փոխառություններ	211,687

Որոշակիացվող զուտ ակտիվներ 340,225

Ձեռքբերման գին (91,970)

Ձեռքբերումից օգուտ 248,255

6 Հասույթ

	2025թ.	2024թ.
Ժամանակի մեջ ինչ որ պահի փոխանցվող ապրանքներ	1,237,517	1,356,577
Ժամանակի ընթացքում մատուցվող հեմոդիալիզի ծառայություններ	462,428	453,364
Ժամանակի ընթացքում մատուցվող լաբորատոր ախտորոշման ծառայություններ	251,697	-
	1,951,642	1,809,941

7 Վաճառքի ինքնարժեք

	2025թ.	2024թ.
Ապրանքների վաճառքի ինքնարժեք	802,892	903,979
Ծառայությունների մատուցման ինքնարժեք		
Նյութական ծախսումներ	240,101	205,014
Աշխատանքի վճարման ծախսեր	88,496	31,353
Մաշվածության ծախսեր	63,533	48,471
Բժշկական լաբորատոր ծառայություններ	16,473	14,197
	1,211,495	1,203,014

8 Այլ եկամուտ

	2025թ.	2024թ.
Կրեդիտորական պարտքերի ներումից եկամուտ	377,377	-
ԱԱՀ եկամտագրում	15,911	4,575
Հիմնական միջոցների վաճառքից ստացված եկամուտ	45	8,804
Ակնկալվող պարտքերի կորուստի գծով պահուստի հակադարձում (տե՛ս Ծանոթագրություն 20)	-	25,082
Այլ եկամուտ	15,641	3,467
	408,974	41,928

Կրեդիտորական պարտքերի ներումից ճանաչված եկամուտը հիմնականում ձևավորվել է մատակարարների տրամադրված առևտրային զեղչերի արդյունքում, մասնավորապես՝ Abbott Vascular Netherlands BV, Baxter AG և Global Medical Consulting LTD / Centre of Perinatal Medicine ընկերությունների կողմից:

9 Պետական շնորհից եկամուտ

	2025թ.	2024թ.
Պետական անվճար դեղորայքի տրամադրումից եկամուտ	16,069	19,639
Սուբսիդավորված վարկի տոկոսներից եկամուտ	46,611	-
	62,680	19,639

Սուբսիդավորված վարկի տոկոսներից եկամուտը ձևավորվել է «Ալբա Լիզինգ» ՎԿ ՓԲԸ-ի հետ կնքված լիզինգային պայմանագրերի շրջանակում կրած տոկոսների պետական ծրագրով նախատեսված փոխհատուցման արդյունքում: Տե՛ս Ծանոթագրություն 24:

10 Իրացման ծախսեր

	2025թ.	2024թ.
Աշխատանքի վճարման ծախսեր	67,910	55,513
Վառելիքի ծախս	15,966	4,133
Ավտոմեքենաների վարձակալության ծախսեր	8,800	1,800
Այլ իրացման ծախսեր	2,750	10,670
	95,426	72,116

11 Վարչական ծախսեր

	2025թ.	2024թ.
Աշխատանքի վճարման ծախսեր	122,735	58,575
Տեխնիկական սպասարկման ծառայություններ	25,412	7,425
Մաշվածության ծախս	18,712	-
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	21,426	13,843
Հաշվապահական ծառայության գծով ծախսեր	11,520	12,000
Խորհրդատվական ծախսեր	11,200	21,513
Վերանորոգման ծախսեր	8,463	3,213
Ապահովագրավճար	5,909	3,351
Ավտոմեքենաների վարձակալության ծախսեր	4,145	2,642
Գործուղման ծախսեր	2,813	865
Այլ վարչական ծախսեր	18,983	16,918
	251,318	140,345

12 Այլ ծախսեր

	2025թ.	2024թ.
Ակնկալվող պարտքերի գծով պահուստի ավելացում (տե՛ս Ծանոթագրություն 20)	51,363	-
Դեբիտորական պարտքերի և կանխավճարների դուրս գրում	38,677	-
Ժամկետանց դեդորայքի դուրսգրման ծախսեր	19,515	35,336
Արտարժույթի փոխանակումից ծախս	5,779	-
Պահատվության ծախս	3,960	2,876
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր	2,770	-
Այլ	2,146	8,231
	124,210	46,443

13 Ֆինանսական եկամուտ և ծախսեր

	2025թ.	2024թ.
Բանկային վարկերի և լիզինգով ձեռքբերումների գծով տոկոսային ծախսեր	61,929	2,331
Ֆինանսական վարձակալության գծով տոկոսային ծախսեր	62,645	7,651
Բանկային միջնորդավճարներ և երաշխիքային վճարներ	10,556	-
Այլ ֆինանսական ծախսեր	126	-
Ընդամենը ֆինանսական ծախսեր	135,256	9,982
Կապակցված կողմերին տրված վարկերից տոկոսային եկամուտ	31,174	-
Բանկային հաշիվներից տոկոսային եկամուտ	84	43
Այլ ֆինանսական եկամուտ	105	-
Ընդամենը ֆինանսական եկամուտ	31,363	43
Զուտ ֆինանսական ծախսեր	103,893	9,939

14 Փոխարժեքային տարբերությունից զուտ (վնաս)/ օգուտ

	2025թ.	2024թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	23,920	(9,187)
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	(45,955)	16,510
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ	(22,035)	7,323

15 Շահութահարկի գծով ծախս

	2025թ.	2024թ.
Ընթացիկ հարկ	136,454	76,326
Հետաձգված հարկ (տե՛ս Ծանոթագրություն 18)	(16,468)	(4,863)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	119,986	71,463

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

	2025թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2024թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների)	863,174		406,974	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2024թ.՝ 18%)	155,371	18.00	73,255	18.00
(Չհարկվող եկամուտ) չնվազեցվող ծախսեր, զուտ	(35,385)	4.10	(1,792)	(0.44)
Շահութահարկի գծով ծախս	119,986	13.90	71,463	17.56

16 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ, Արտադրական գույք, գործիքներ և այլ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	227,425	64,106	-	291,531
Ավելացում	2,610	714	-	3,324
Օտարում	(11,814)	-	-	(11,814)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	218,221	64,820	-	283,041
Ավելացում	2,794	15,875	-	18,669
Ձեռքբերումից ավելացում	23,070	135,905	83	159,058
Օտարում	-	(150)	-	(150)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	244,085	245,834	83	490,002
Կուտակված մաշվածություն և ամորտիզացիա				
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	73,748	38,902	-	112,650
Տարվա հաշվարկ	23,456	7,203	-	30,659
Օտարման հետևանքով դուրսգրում	(3,337)	-	-	(3,337)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	93,867	46,105	-	139,972
Տարվա հաշվարկ	10,057	27,721	3	37,781
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(150)	-	(150)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	103,924	73,676	3	177,603
Հաշվեկշռային արժեք				
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	124,354	18,715	-	143,069
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	140,161	172,158	80	312,399

Բանկային վարկերը և փոխառություններն ապահովելու նպատակով Խումբը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրավադրել է 56,904 հազար ՀՀ դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 67,623 հազար ՀՀ դրամ) հաշվեկշռային արժեք ունեցող հիմնական միջոցներ:

Մաշվածության գծով ծախսը բաշխվել և ճանաչվել է ինքնարժեքում, վարչական և այլ ծախսերում համապատասխանաբար 16,299 հազար ՀՀ դրամ, 18,712 հազար ՀՀ դրամ և 2,770 հազար ՀՀ դրամ չափով (2024թ.՝ ճանաչվել է ինքնարժեքում):

17 Վարձակալություն

Խումբը վարձակալել է տարածքներ, բժշկական սարքավորումներ և տրանսպորտային միջոցներ: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրածեք ակտիվների վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

	Տարածքներ	Կապիտալացվող ծախսեր	Բժշկական սարքավորումներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	82,921	8,837	58,118	149,876
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	82,921	8,837	58,118	149,876
Ավելացում	215,358	-	-	215,358
Ձեռքբերումից ավելացում	-	-	646,248	646,248
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	298,279	8,837	704,366	1,011,482
Կուրակված մաշվածություն				
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	20,347	1,326	6,391	28,064
Տարվա հաշվարկ	8,291	442	9,079	17,812
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	28,638	1,768	15,470	45,876
Տարվա հաշվարկ	23,072	442	23,720	47,234
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	51,710	2,210	39,190	93,110
Հաշվեկշռային արժեք				
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	54,283	7,069	42,648	104,000
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	246,569	6,627	665,176	918,372

Մաշվածության գծով ծախսը ճանաչվել է ծառայությունների մատուցման ինքնարժեքում:

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության գծով պարտավորությունները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում հետևյալ կերպ.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ոչ ընթացիկ	595,186	53,058
Ընթացիկ	192,023	18,985
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ	787,209	72,043

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Խումբը, քանի դեռ առկա չէ ակտիվն այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Բժշկական սարքավորումների գծով վարձակալության պայմանագրերը կնքվել են 4-5 տարի ժամկետով և պարունակում են անմիջապես վարձակալության ժամկետի ավարտին վարձակալված սարքավորումները ձեռք բերելու հնարավորություն:

Ապագա նվազագույն վարձավճարները 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտացոլված են ստորև.

	Նվազագույն վարձավճարներ	
	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Մեկ տարվա ընթացքում		
Վարձավճարներ	272,271	25,782
Ֆինանսական ծախս	(80,247)	(6,797)
	192,024	18,985
Երկրորդից հինգերորդ տարիների ընթացքում		
Վարձավճարներ	671,234	57,873
Ֆինանսական ծախս	(112,480)	(13,017)
	558,754	44,856
Հինգ տարվանից հետո		
Վարձավճարներ	37,739	9,007
Ֆինանսական ծախս	(1,308)	(805)
	36,431	8,202
Զուտ ներկա արժեք	787,209	72,043

Վարձակալության գծով վճարներ, որոնք չեն ճանաչվում որպես պարտավորություն

Խումբն ընտրել է կարճաժամկետ վարձակալությունների (12 ամիս կամ ավելի պակաս ակնկալվող ժամկետով) և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար չճանաչել վարձակալության գծով պարտավորություն: Նման վարձակալությունների համար կատարված վճարները ծախսագրվում են գծային հիմունքով:

Վարձակալության գծով պարտավորությունը չափելիս չներառած վճարներին վերաբերող ծախսերը ներկայացված են ստորև.

	2025թ.	2024թ.
Կարճաժամկետ ավտոմեքենաների վարձակալություն	12,945	1,800
Ընդամենը վարձակալության գծով վճարներ	12,945	1,800

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի կարճաժամկետ վարձակալությունների գծով ապագա պարտավորվածություններ, և այդ պարտավորվածությունների ընդհանուր գումարը կազմում է 18,934 հազար << դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ զրո << դրամ):

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարում վարձակալության գծով դրամական միջոցների ընդհանուր արտահոսքը կազմել է 57,701 հազար << դրամ (2024թ.՝ 26,749 հազար << դրամ):

18 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

	2025թ.	2024թ.
Տարեսկզբի մնացորդ	14,494	9,631
Շահույթում կամ վնասում ճանաչված փոխհատուցում (տե՛ս Ծանոթագրություն 0)	16,468	4,863
Տարեվերջի մնացորդ	30,962	14,494

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2025թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2025թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	11,555	38,319	49,874
Առևտրային դեբիտորական պարտքեր	9,496	9,245	18,741
Առևտրային կրեդիտորական պարտքեր	3,214	3,515	6,729
	24,265	51,079	75,344
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	9,771	34,611	44,382
	9,771	34,611	44,382
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	14,494	16,468	30,962

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2024թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	12,895	(1,340)	11,555
Առևտրային դեբիտորական պարտքեր	5,408	4,088	9,496
Առևտրային կրեդիտորական պարտքեր	2,591	623	3,214
	20,894	3,371	24,265
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	11,263	(1,492)	9,771
	11,263	(1,492)	9,771
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	9,631	4,863	14,494

19 Պաշարներ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Վաճառքի համար ապրանքներ	929,097	721,867
Հումք և նյութեր	538,409	77,765
Պահեստամասեր	16,021	68,403
Այլ	3,332	1,953
Ընդամենը պաշարներ	1,486,859	869,988

Տարվա ընթացքում ծախս ճանաչված պաշարների գումարը կազմում է 1,176,868 հազար << դրամ (2024թ.՝ 1,127,178 հազար << դրամ):

Պաշարները գրավադրված չեն:

20 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	466,612	289,430
Պարտքային կորուստների համար պահուստ (տե՛ս Ծանոթագրություն 26.2)	(104,116)	(52,753)
	362,496	236,677
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Տրված կանխավճարներ	240,776	174,303
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	2,338	101
	243,114	174,404
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	605,610	411,081

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ապրանքների վաճառքից և ծառայությունների մատուցումից առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 68 օր (2024թ.՝ 47 օր): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Իսմբի՝ համեմատական ժամանակաշրջանի բոլոր առևտրային և այլ դեբիտորական պարտքերը վերանայվել են արժեզրկման հայտանիշների առկայության ստուգման համար: Արժեզրկված առևտրային դեբիտորական պարտքերը հիմնականում բիզնես-բիզնես շուկայում աշխատող հաճախորդներից են, որոնք ունեն ֆինանսական դժվարություններ:

Ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի համադրումը ներկայացված է ստորև.

	2025թ.	2024թ.
Կորուստների գծով պահուստը, տարեսկզբի մնացորդ	52,753	77,835
Տարվա ընթացքում պահուստի ճանաչում (տե՛ս Ծանոթագրություն 12)	51,363	-
Տարվա ընթացքում չօգտագործված պահուստի հակադարձում (տե՛ս Ծանոթագրություն 8)	-	(25,082)
Կորուստների գծով պահուստը, տարեվերջի մնացորդ	104,116	52,753

Ծանոթագրություն 31.2-ում ներկայացված են պարտքային ռիսկի և ակնկալվող պարտքային ռիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները:

Տե՛ս Ծանոթագրություն 31.1-ը՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

21 Տրամադրված փոխառություններ

	2025թ.	2024թ.
Հունվարի 1-ի դրությամբ	-	-
Տրամադրված փոխառություններ	932,030	-
Ձեռքբերումից ավելացում	10,170	-
Վճարված փոխառություններ	(93,769)	-
Հաշվանցում ստացված փոխառությունների հետ	(74,802)	-
Արժեզրկում	(600)	-
Վերագնահատում	14,351	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	787,383	-

Ընթացիկ փոխառությունները տրամադրվել են կապակցված կողմերին, մասնավորապես՝ «ԷլԷմԹԻՍԻ» ՍՊԸ-ին և Արթուր Մելքոնյանին, որոնք ենթակա են մարման մինչև 2026թ.-ի ավարտը: Փոխառությունները տրամադրվել են տարեկան 7% տոկոսադրույքով:

22 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները դրամարկղում ու բանկերում՝ նվազեցված բանկային օվերդրաֆտի մնացորդով: Ֆինանսական տարվա վերջի դրությամբ դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված դրամարկղում և բանկերում մնացորդները կարող են համադրվել ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության հոդվածների հետ հետևյալ կերպ.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Կանխիկ միջոցներ	20,790	12,910
Բանկային հաշիվներ	12,881	29,977
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	33,671	42,887

Տե՛ս Ծանոթագրություն 31.1՝ դրամական միջոցների և դրանց համարժեքների արժույթների բացահայտման համար:

23 Սեփական կապիտալ

23.1 Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 66,050 հազար << դրամ (31 դեկտեմբերի 2024թ.՝ 36,050 հազար << դրամ), որը 100%-ով պատկանում է << ռեզիդենտ Արթուր Մելքոնյանին:

2025թ.-ի հունիսի 12-ին Արթուր Մելքոնյանը կատարել է 30,000 հազար << դրամի կանոնադրական կապիտալի ավելացումը:

23.2 Շահաբաժիններ

2025թ. մայիսի 14-ին մասնակցին վճարվել է 596,000 հազար << դրամ շահաբաժին, իսկ 2024թ.-ի ընթացքում՝ 31,724 հազար << դրամ:

24 Պետական շնորհ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ոչ ընթացիկ		
Սուբսիդավորված վարկի տոկոսներ	194,784	-
Պետական անվճար դեղորայքի ստացում	16,069	19,639
Շահույթ կամ վնասում ճանաչված եկամուտ	(62,680)	(19,639)
Ընդամենը	148,173	-

Խումբը «Ակբա Լիզինգ ՎԿ ՓԲԸ»-ի հետ կնքված լիզինգային պայմանագրերի շրջանակներում կրում է տոկոսային ծախսեր, որոնցից զգալի մասը ենթակա է փոխհատուցման պետության կողմից:

25 Վարկեր և փոխառություններ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ոչ ընթացիկ		
Բանկային վարկեր և վարկային գծեր/օվերդրաֆտներ	1,037,959	-
	1,037,959	-
Ընթացիկ		
Բանկային վարկեր և վարկային գծեր/օվերդրաֆտներ	372,437	23,130
Կապակցված կողմերից չապահովված փոխառություններ	108,400	19,748

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
	480,837	42,878
Ընդամենը վարկեր և փոխառություններ	1,518,796	42,878

Բանկային վարկերն ունեն 5 տարի մարման ժամկետ և տարեկան 7% միջին տոկոսադրույք (2024թ.՝ 9.6% տոկոսադրույք):

Կապակցված կողմերից չապահովված փոխառությունները կարճաժամկետ, անտոկոս փոխառություններ են:

Վարկերն ապահովված են ընկերությանը պատկանող տրանսպորտային միջոցներով և սարքավորումներով (տե՛ս Ծանոթագրություն 16):

Վարկերի և փոխառությունների իրական արժեքը հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին, քանի որ զեղչման ազդեցությունն էական չէ:

Տե՛ս Ծանոթագրություն 31.1՝ վարկերի և փոխառությունների արժույթների բացահայտման համար:

Խմբի արտարժույթային ռիսկերի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 31.1-ում:

26 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	571,611	691,903
Հաշվեգրված ծախսեր	167,361	17,469
	738,972	709,372
Ոչ ֆինանսական պարտավորություններ		
Հաճախորդներից կանխավճարներ	99,879	157,791
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	38,725	5,800
	138,604	163,591
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	877,576	872,963

Ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է 172 օր (2024թ.՝ 221 օր): Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Խումբն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

Խմբի արտարժույթային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 31.1-ում:

27 Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Խմբի պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

	Բանկային վարկեր	Կարճա-ժամկետ փոխառություններ	Վարձակալության գծով պարտավորություններ	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	71,868	230,300	89,882	392,050
Դրամային հոսքերից				
Ստացված գումար	26,400	206,745	-	233,145
Մայի գումարների մարումներ	(74,365)	(416,459)	(25,490)	(516,314)
Վճարված տոկոսներ	(1,291)	-	(1,040)	(2,331)
Ոչ դրամային հոսքերից				
Տոկոսի հաշվեգրում	1,291	-	8,691	9,982
Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)	(773)	(838)	-	(1,611)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	23,130	19,748	72,043	114,921
Դրամային հոսքերից				
Ստացված գումար	1,505,996	50,702	-	1,556,698
Մայի գումարների մարումներ	(180,255)	(106,274)	(81,914)	(368,443)
Վճարված տոկոսներ	(59,571)	-	-	(59,571)
Ոչ դրամային հոսքերից				
Տոկոսի հաշվեգրում	61,929	-	62,645	124,574
Իրական արժեք (տեղափոխություն պետական շնորհ)	-	-	(194,784)	(194,784)
Ձեռքբերումից ավելացում	-	220,611	682,299	902,910
Օգատգործման իրավունքով պարտավորության ավելացում	-	-	250,649	250,649
Հաշվանցում տրամադրված փոխառությունների հետ	-	(74,802)	-	(74,802)
Փոխարժեքային տարբերությունից վնաս	59,167	(1,585)	(3,729)	53,853
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,410,396	108,400	787,209	2,306,005

28 Կապակցված կողմեր

Խմբի կապակցված կողմերը ներառում են Մայր ընկերությունը, դուստր ընկերությունը և ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերությունները, իչպես նաև հիմնական ղեկավար անձնակազմը, ինչպես նկարագրված է ստորև:

28.1 Վերահսկողություն

Խումբը վերահսկվում է Արթուր Մելքոնյանի կողմից, որին պատկանում է Խմբի բաժնեմասերի 100%:

28.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Խմբի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Գործարքներ

	2025թ.	2024թ.
Մասնակցի հետ		
Ստացված փոխառություններ	257,762	206,745
Հաշվեգրված տոկոսային եկամուտ	1,480	-
Ստացված փոխառությունների մարում	175,276	416,459
Ստացված ծառայություններ	1,800	9,800
Փոխառությունների տրամադրում	172,152	28,000
Տրամադրված փոխառությունների մարում	146,789	28,000
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Ծառայությունների մատուցում	601	1,200
Ստացված ծառայություններ	5,432	13,024
Ստացված փոխառություններ	7,751	-
Փոխառությունների տրամադրում	770,117	-
Տրամադրված փոխառությունների մարում	21,782	-
Հաշվեգրված տոկոսային եկամուտ	29,694	-
Այլ		
Ստացված փոխառություններ	5,800	-
Ստացված փոխառությունների մարում	5,800	-
Ստացված ծառայություններ	4,000	-

Մնացորդներ

	2025թ.	2024թ.
Մասնակից		
Տրամադրված փոխառություններ	25,362	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,480	-
Վարկեր և փոխառություններ	100,773	19,748
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	95,837	-
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Տրամադրված փոխառություններ	762,021	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	63,028	67,653
Վարկեր և փոխառություններ	7,627	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,340	-
Այլ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	300	-

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Աշխատանքի վճարման ծախսեր» տողերում.

	2025թ.	2024թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	16,544	16,758
Ընդամենը	16,544	16,758

29 Պայմանականություններ

29.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Խումբը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Խմբի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

29.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

29.3 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարությունը համոզված է, որ Խումբը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Խումբը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

30 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են Ծանոթագրություն 4.11-ում: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև:

Ֆինանսական ակտիվներ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր ¹	362,496	236,677
Տրամադրված փոխառություններ	787,383	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	33,671	42,887
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	1,183,550	279,564
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	1,183,550	279,564

¹ այս գումարներն արտացոլում են միայն առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, որոնք հանդիսանում են ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական պարտավորություններ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	1,518,796	42,878
Վարձակալության գծով պարտավորություններ	787,209	72,043
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	738,972	709,372
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	3,044,977	824,293
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	3,044,977	824,293

Խմբի ֆինանսական գործիքների ռիսկերի նկարագրությունը՝ ներառյալ ռիսկի կառավարման նպատակները և քաղաքականությունը, արտացոլված են Ծանոթագրություն 31-ում:

31 Ֆինանսական գործիքների ռիսկ

Ռիսկի կառավարման քաղաքականությունը և նպատակները

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Խումբը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Խումբը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Խումբը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

31.1 Շուկայական ռիսկի վերլուծություն

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում էությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի:

Արտարժույթի ռիսկ

Խումբը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Խմբի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Խմբի՝ արտերկրյա վաճառքներից և ձեռքբերումներից, տրամադրված և ստացված փոխառություններից, վարկերի և վարձակալությունների գծով պարտավորություններից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով, ռուբլիով և եվրոյով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Խմբին ենթարկվում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարները փոխարկվում են հայկական դրամի՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով:

Հոդված

31 դեկտեմբերի 2025թ.	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի
Ֆինանսական ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	910	221
Փոխառություններ	-	420,902	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	708	1,059	2,894
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	708	422,871	3,115
Ֆինանսական պարտավորություններ			
Բանկային վարկեր և փոխառություններ	22,752	1,452,815	-
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	-	658,307	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	348,887	99,794	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	371,639	2,210,916	-
Զուտ արդյունք	(370,931)	(1,788,045)	3,115

Հոդված

31 դեկտեմբերի 2024թ.	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի
Ֆինանսական ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	2,981	9,813
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	183	1,006	203
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	183	3,987	10,016
Ֆինանսական պարտավորություններ			
Բանկային վարկեր և փոխառություններ	21,130	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	616,860	45,277	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	637,990	45,277	-
Զուտ արդյունք	(637,807)	(41,290)	10,016

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է համբի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի, ռուբլու և եվրոյի նկատմամբ դրամի 10% (2024թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով:

Դրամի արժևորումն ԱՄՆ դոլարի, ռուբլու և եվրոյի նկատմամբ 10%-ով (2024թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն		Ռուբլու ազդեցություն	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Շահույթ կամ վնաս	(37,093)	(63,781)	(178,805)	(4,129)	312	1,002

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված վարկային միջոցների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել համբի՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

31.2 Պարտքային ռիսկի վերլուծություն

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով հումբը կարող է ֆինանսական կորուստներ կրել:

Խմբի ղեկավարությունը զգուշորեն կառավարում է պարտքային ռիսկը: Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով համբի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից: Ռիսկերի կառավարման նպատակով պարտքային ռիսկի գնահատումը ներառում է մոդելների օգտագործում, քանի որ ռիսկը տատանվում է՝ կախված շուկայական պայմաններից, դրամական միջոցների ակնկալվող հոսքերից և ժամանակի ընթացքից:

Ակնկալվող պարտքային կորուստների մոտեցումն օգտագործում է երեք փուլ՝ արժեզրկումից կորուստների բաշխման համար:

Փուլ 1. Ակնկալվող պարտքային կորուստներ հաջորդ տասներկու ամսվա ընթացքում

Փուլ 1-ը ներառում է բոլոր այն պայմանագրերը, որոնց սկզբնական ճանաչումից ի վեր պարտքային ռիսկի նշանակալի աճ չկա, և սովորաբար պարունակում է նոր պայմանագրեր, որոնք ժամկետանց են 31 օրից պակաս: Ճանաչվում է ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որը վերաբերում է պարտազանցման դեպքերին, որոնք հնարավոր են առաջիկա 12 ամիսների ընթացքում:

Փուլ 2. գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ – պարտքային արժեզրկման բացակայություն

Եթե ֆինանսական ակտիվը սկզբնական ճանաչումից ի վեր ունի պարտքային ռիսկի զգալի աճ, սակայն դեռևս պարտքային արժեզրկում չի եղել, այն տեղափոխվում է փուլ 2 և չափվում գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորստի ժամանակ: Սա սահմանվում է որպես ակնկալվող պարտքային կորուստ, որը բխում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամանակահատվածի ընթացքում բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից:

Ամեն դեպքում, Խումբը գտնում է, որ տեղի է ունեցել պարտքային ռիսկի զգալի աճ, երբ պայմանագրային վճարումը ժամկետանց է ավելի քան 31 օր:

Փուլ 3. գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ – պարտքային արժեզրկման առկայություն

Եթե ֆինանսական ակտիվը սահմանվում է որպես պարտքային առումով արժեզրկված կամ պարտազանցման վիճակում գտնվող, այն տեղափոխվում է փուլ 3 և չափվում է գործողության ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորստի ժամանակ: Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվի օբյեկտիվ ապացույցները ներառում են 90 ժամկետանց օր, ինչպես նաև այլ տեղեկություններ, որոնք ցույց են տալիս պայմանագրային գործընկերոջ նշանակալի ֆինանսական դժվարությունները: Խումբը ֆինանսական ակտիվը համարում է պարտազանցման վիճակում, երբ հավանական չէ, որ պայմանագրային գործընկերն ամբողջությամբ կվճարի Խմբի նկատմամբ իր պարտավորությունները՝ առանց Խմբի կողմից այնպիսի գործողությունների դիմելու, ինչպիսին է երաշխիքի իրացումը:

Այն հանգամանքի որոշելը, թե արդյոք ֆինանսական ակտիվը կրել է պարտքային ռիսկի նշանակալի աճ, թե ոչ, հիմնված է պարտազանցման հավանականության գնահատման վրա, որը կատարվում է առնվազն ամսական մեկ անգամ՝ ներառելով արտաքին վարկանիշային տոկոսադրույքի վերաբերյալ տեղեկությունը, ինչպես նաև ֆինանսական ակտիվի պարտքային որակի վերաբերյալ ներքին տեղեկությունը:

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Անորոշիչացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Տրամադրված փոխառություններ	787,383	-
Առևտրային դեբիտորական պարտքեր	362,496	236,677
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	33,671	42,887
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	1,183,550	279,564

Առևտրային դեբիտորական պարտքեր

Պարտքային ռիսկի գծով կենտրոնացումը սահմանափակ է՝ Խմբի հաճախորդների բազայի մեծության և միմյանց հետ կապակցված չլինելու պատճառով:

Խումբը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ:

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ: Դրանք խմբավորվել են՝ ելնելով նմանատիպ կորստի ճնշումով հաճախորդների տարբեր սեգմենտների խմբավորման ժամկետանց օրերից: Ակնկալվող կորուստների դրույքաչափերը հաշվարկվել են՝ հիմնվելով նախորդ տարվա վաճառքի դիմաց ստացված վճարումների պատկերի վրա, ինչպես նաև հաշվի առնելով այդ ժամանակամիջոցում ձևավորված պատմական պարտքային կորուստները: Այս պատմական դրույքաչափերը ճշգրտվում են, որպեսզի արտացոլեն ընթացիկ և ապագային վերաբերող մակրոտնտեսական գործոններին, որոնք ազդեցություն ունեն հաճախորդի՝ չվճարված մնացորդը մարելու

կարողության վրա: Այնուամենայնիվ, հաշվի առնելով պարտքային ռիսկի կարճաժամկետ բնույթը՝ այս մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը հաշվետու ժամանակաշրջանում էական չի:

Երբ հավանական չէ առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրումը, դրանք դուրս են գրվում (սպաճանաչվում են): Վճարում չկատարելը և Խմբի հետ այլընտրանքային վճարման վերաբերյալ համաձայնության չգալը համարվում է գումարի վերադարձման վերաբերյալ խելամիտ սպասումներ չունենալու համար հայտանիշ:

Ելնելով վերը նկարագրվածից՝ առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների մնացորդները ներկայացված են հետևյալ աղյուսակներում.

31 դեկտեմբերի 2025թ.

	Ակնկալվող պարտքային կորուստ	Համախառն հաշվեկշռային արժեք	Գործողության ամբողջ ժամանակա- հատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում
Մինչև 1 ամիս	1.70%	206,039	3,510
1 ամսից 2 ամիս	2.69%	59,603	1,603
2 ամսից 3 ամիս	5.37%	31,352	1,684
3 ամսից 6 ամիս	10.38%	70,647	7,333
6 ամսից մինչև 1 տարի	28.61%	12,587	3,601
1 տարուց ավել	100%	86,384	86,384
		466,612	104,116

31 դեկտեմբերի 2024թ.

	Ակնկալվող պարտքային կորուստ	Համախառն հաշվեկշռային արժեք	Գործողության ամբողջ ժամանակա- հատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում
Մինչև 1 ամիս	2.25%	183,433	4,132
1 ամսից 2 ամիս	2.69%	7,188	193
2 ամսից 3 ամիս	5.37%	27,876	1,498
3 ամսից 6 ամիս	10.38%	24,225	2,513
6 ամսից մինչև 1 տարի	28.61%	3,209	918
1 տարուց ավելի	100%	43,499	43,499
		289,430	52,753

Ղեկավարության համոզմամբ անհուսալի և կասկածելի դեբիտորական պարտքերի գծով սովորական պահուստից առավել այլ պարտքային ռիսկի պահուստ չի պահանջվում:

Բանկային մնացորդներ

Բանկային մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է գումարները տարբեր բանկերում պահելու և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Բանկային մնացորդները ոչ ժամկետանց են, ոչ էլ արժեզրկված, և ակնկալվող պարտքային կորուստը համարվում է աննշան:

Տրամադրված փոխառություններ

Ղեկավարությունը եզրակացրել է, որ սկզբնական ճանաչումից հետո կապակցված կողմերին տրամադրված փոխառությունների գծով պարտքային ռիսկը ցածր է, և ակնկալվող պարտքային կորուստը համարվում է աննշան:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամորտիզացված արժեքով չափվող այլ դեբիտորական պարտքերի և պարտքային ներդրումների համար կորուստի գծով պահուստի տարեվերջի մնացորդը համադրվում է ամորտիզացված արժեքով չափվող այլ դեբիտորական պարտքերի և պարտքային ներդրումների համար կորուստի գծով պահուստի տարեսկզբի մնացորդի հետ հետևյալ կերպ.

	2025թ.	2024թ.
Կորուստների գծով պահուստը հունվարի 1-ի դրությամբ	52,753	77,835
Տարվա ընթացքում պահուստի ճանաչում	51,363	-
Տարվա ընթացքում չօգտագործված պահուստի հակադարձում	-	(25,082)
Կորուստների գծով պահուստը դեկտեմբերի 31-ի դրությամբ	104,116	52,753

31.3 Իրացվելիության ռիսկի վերլուծություն

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Խումբը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չգեղջված դրամական հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Խումբը ստիպված կլինի մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական հոսքերը:

2025թ.

	Անտոկոս	Պարտավորություն ֆինանսական վարձակալության գծով	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		11.29%	7%	
Մինչև 1 տարի	847,372	192,024	372,437	1,411,833
1-5 տարի	-	558,754	898,809	1,457,563
Ավելի քան 5 տարի	-	36,431	139,150	175,581
	847,372	787,209	1,410,396	3,044,977

2024թ.	Անտոկոս	Պարտավորություն ֆինանսական վարձակալության գծով	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		11.29%	9.6%	
Մինչև 6 ամիս	729,120	18,985	23,130	771,235
1-5 տարի	-	44,856	-	44,856
Ավելի քան 5 տարի	-	8,202	-	8,202
	729,120	72,043	23,130	824,293

Խումբն իրացվելիության դիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Խմբի դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերն էականորեն ցածր են անհրաժեշտ դրամական արտահոսքերը: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերից դրամական հոսքերը պայմանագրով ենթակա են ստացման 1-2 ամսվա ընթացքում: Խումբը մտադիր է մարել պարտավորությունները տարեվերջի դրությամբ առկա պաշարների վաճառքից եկամտի հաշվին:

32 Իրական արժեքի չափում

Խումբը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

32.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց համար իրական արժեքը բացահայտված է

Խմբի ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքները համարվում են իրական արժեքի խելամիտ գնահատում:

Առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները իրացվելի են կամ կարճաժամկետ են, ուստի ենթադրվում է, որ հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին:

Խմբի տոկոսային վարկերի և փոխառությունների իրական արժեքները որոշվում են զեղչված դրամական հոսքերի մեթոդի կիրառմամբ՝ օգտագործելով զեղչման տոկոսադրույքը, որն արտացոլում է թողարկողի փոխառության տոկոսադրույքը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Կապակցված կողմերին շուկայականից ցածր տոկոսադրույքով տրամադրված և կապակցված կողմերից ստացված փոխառությունների իրական արժեքը գնահատվում է զեղչված դրամական հոսքերի մեթոդով՝ կիրառելով այն շուկայական տոկոսադրույքները, որոնք Խումբը հաշվետու ամսաթվի դրությամբ պետք է

վճարեր համանման ժամկետում և ապահովվածությամբ փոխառություն ստանալու համար: Ամենազգալի փոփոխականը զեղչման տոկոսադրույքն է:

Խմբի ֆինանսական գործիքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 2 մակարդակում:

33 Կապիտալի ռիսկի քաղաքականություն և ընթացակարգեր

Խումբն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և մասնակցին բավարար եկամուտ մատակարարի:

Խմբի կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է կանոնադրական կապիտալը ու կուտակված շահույթը, որոնք բացահայտված են Ծանոթագրություն 21- ում:

Ղեկավարությունը գնահատում է Խմբի կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք՝ խուսափելով չափազանց մեծ լծակավորումից (լեվերիջ): Հաշվի են առնվում Խմբի վարկերի տարբեր դասերի ստորադասության մակարդակները: Խումբը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով Խումբը կարող է փոփոխել մասնակցին վճարվող շահաբաժնի գումարը, վերադարձնել կապիտալը մասնակցին, թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու համար:

Խումբը վերահսկում է կապիտալը՝ կիրառելով «զուտ պարտքի» և «ճշգրտված սեփական կապիտալի» հարաբերակցությունը.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Զուտ պարտք		
Վարկեր և փոխառություններ	1,518,796	42,878
Հանած՝ ստորադաս վարկ	108,400	19,748
Հանած՝ Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	33,671	42,887
	1,660,867	(19,757)
Ճշգրտված սեփական կապիտալ		
Ընդհանուր սեփական կապիտալ	734,956	557,768
Գումարած՝ ստորադաս վարկ	108,400	19,748
	843,356	577,516
Զուտ պարտքի և ճշգրտված սեփական կապիտալի հարաբերակցության գործակից	197%	(3%)

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Պրոֆտեստ» ՍՊԸ

31 դեկտեմբերի 2024թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

«Պրոֆտեստ» ՍՊԸ-ի մասնակցին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Պրոֆտեստ» ՍՊԸ (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփ նկարագրիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԿ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված պահանջների և ՀԷՄՍԿ կանոնագրքի համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ընկերության 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններն աուդիտի չեն ենթարկվել:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազմեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների

վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի
տնօրեն

Էմիլ Վասիլյան
Առաջադրանքի պատասխանատու

7 նոյեմբերի 2025թ.



Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2024թ.	2023թ. (Աուդիտ չարված)
Հասույթ	5	1,809,941	1,952,773
Վաճառքի ինքնարժեք	6	(1,203,014)	(1,394,363)
Համախառն շահույթ		606,927	558,410
Այլ եկամուտ	7	61,567	47,006
Իրացման ծախսեր	8	(72,116)	(77,341)
Վարչական ծախսեր	9	(140,345)	(125,736)
Այլ ծախսեր	10	(46,443)	(63,574)
Գործառնական գործունեությունից շահույթ		409,590	338,765
Ֆինանսական եկամուտ	11	43	72
Ֆինանսական ծախսեր	11	(9,982)	(11,635)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ	12	7,323	8,155
Շահույթ հարկերը		406,974	335,357
Շահութահարկի գծով ծախս	13	(71,463)	(53,686)
Տարվա շահույթ		335,511	281,671
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		335,511	281,671

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը 12-ից մինչև 42-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Մանր.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ. (Առաջիկա չարված)
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	14	152,526	188,338
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	15	94,543	112,355
Հետաձգված հարկային ակտիվներ	17	14,494	9,631
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		261,563	310,324
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	18	869,988	794,927
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	19	411,081	354,407
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	20	42,887	23,021
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		1,323,956	1,172,355
Ընդամենը ակտիվներ		1,585,519	1,482,679

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)


Հազար ՀՀ դրամ		31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ. (Առափառ չարված)
	Ծանոթ.		
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուսպներ	21		
Բաժնետիրական կապիտալ		36,050	34,470
Կուտակված շահույթ		521,718	217,931
Ընդամենը սեփական կապիտալ		557,768	252,401
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	16.2	-	23,130
Վարձակալության գծով պարտավորություն	15	53,058	72,042
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		53,058	95,172
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	16.2	42,878	279,038
Վարձակալության գծով պարտավորություն	15	18,985	17,840
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	22	872,963	804,710
Ընթացիկ հարկային պարտավորություն		39,867	33,518
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		974,693	1,135,106
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		1,585,519	1,482,679

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. նոյեմբերի 7-ին:

Արթուր Մարտիրոսյան
Գործադիր տնօրեն



Սեդա Քոչարյան
Ավագ հաշվապահ



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների
բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 42-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդ (Աուդիտ չարված)	20	624,516	624,536
Տարվա շահույթ	-	281,671	281,671
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	281,671	281,671
Թողարկված կանոնադրական կապիտալ	34,450	-	34,450
Շահաբաժիններ	-	(688,256)	(688,256)
Գործարքներ սեփականատերերի հետ	34,450	(688,256)	(653,806)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (Աուդիտ չարված)	34,470	217,931	252,401
Տարվա շահույթ	-	335,511	335,511
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	335,511	335,511
Կանոնադրական կապիտալի ավելացում	1,580	-	1,580
Շահաբաժիններ	-	(31,724)	(31,724)
Գործարքներ սեփականատերերի հետ	1,580	(31,724)	(30,144)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	36,050	521,718	557,768

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 42-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2024թ.	2023թ. (Աուդիտ չարված)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	335,511	281,671
<i>Ճշգրտումներ՝</i>		
Մաշվածություն	48,471	47,767
Հիմնական միջոցների օտարումից վնաս	8,477	12,311
Կասկածելի դեբիտորական պարտքերի պահուստի շարժ	(25,082)	30,046
Ֆինանսական ծախսեր, զուտ	9,939	11,563
Շահութահարկի գծով ծախս	71,463	53,686
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ	(7,323)	(8,155)
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	441,456	428,889
Պաշարների փոփոխություն	(75,061)	143,606
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(40,496)	(102,212)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	83,152	(31,264)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	409,051	356,232
Վճարված տոկոսներ	(2,331)	(3,979)
Վճարված շահութահարկ	(69,977)	(60,971)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	336,743	291,282

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

2023թ.
2024թ. (Աուդիտ չարված)

Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր

Հիմնական միջոցների ձեռքբերում	(3,324)	(70,633)
Տրամադրված փոխառություններ	(28,000)	-
Տրամադրված փոխառությունների մարում	28,000	50,000
Ստացված տոկոսներ	43	72
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(3,281)	(20,561)

Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր

Կանոնադրական կապիտալի ավելացում	1,580	34,450
Վարկերից և փոխառություններից մուտքեր	233,145	668,920
Վարկերի, փոխառությունների և վարձակալական պարտավորությունների մարում	(516,314)	(400,191)
Վճարված շահաբաժիններ	(31,724)	(688,256)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(313,313)	(385,077)

Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում)	20,149	(114,356)
Արտաբյուջե փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(283)	(142)
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա սկզբում	23,021	137,519
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա վերջում	42,887	23,021

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 42-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ճանապարհորդություններ

Պրոֆտեստ ՍՊԸ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված
հազար հայկական (<<) դրամով)

1 Գործառնությունների բնույթը

«Պրոֆտեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (Ընկերություն) հիմնադրվել է 2013թ.-ին: Ընկերության գործունեության հիմնական ուղղությունը բժշկական պարագաների և սարքավորումների վաճառքն է Հայաստանի Հանրապետությունում:

«Պրոֆտեստ» ՍՊԸ-ն հանդիսանում է մի շարք միջազգային առաջատար արտադրող ընկերությունների պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում: Ընկերությունը հիմնականում իրականացնում է մեծածախ վաճառք և համագործակցում է Հայաստանի գրեթե բոլոր բուժհաստատությունների հետ:

Վաճառվող հիմնական ապրանքատեսակներն ներառում է.

- սրտի ինվազիվ և անոթային վիրահատությունների համար նախատեսված պարագաներ,
- վիրաբուժական գործիքներ,
- հեմոդիալիզի սարքեր և պարագաներ,
- ինչպես նաև դիագնոստիկ սարքեր՝ ԿՏ, ՄՌՏ և այլ բժշկական տեխնիկա:

2019–2020թթ.-ից սկսած, Ընկերությունն ընդլայնել է իր գործունեությունը և սկսել է նաև հեմոդիալիզի ծառայությունների մատուցումը: Այս պահին գործում են երեք հեմոդիալիզի կենտրոններ, որտեղ սպասարկվում է շուրջ 150 հիվանդ:

Ընկերության զարգացման ռազմավարության շրջանակում նախատեսվում է մինչև 2025թ.-ի ավարտը բացել ևս երկու հեմոդիալիզի կենտրոն, և 2026թ.-ին սպասարկել շուրջ 300 հիվանդի:

2 Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՍ-ներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն

«Պրոֆտեստ» ՍՊԸ-ն հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում 2013թ.-ի հունվարի 15-ին: Ընկերության հիմնադիրը և միակ բաժնետերը՝ 100% բաժնեմասով, հանդիսանում է Արթուր Խաչատուրի Մելքոնյանը:

Գրանցման և հիմնական գործունեության վայրը՝ ք. Երևան, Հ. Մարգարյան փողոց, 6/1 շենք:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2024թ. կազմել է 41 մարդ (2023թ.՝ 36 մարդ):

Գործարար միջավայր

Հայաստանի գործարար միջավայրը բախվում է մարտահրավերների՝ կապված աշխարհաքաղաքական լարվածության, մասնավորապես՝ Ադրբեջանի կողմից շարունակվող ագրեսիայի և տարածաշրջանային անկայունության հետ: Ուկրաինայի պատերազմն էլ ավելի է բարդացրել իրավիճակը՝ առաջացնելով առևտրի խափանումներ, Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ և համաշխարհային գնաճ: Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից թուլացել է՝ ազդելով առևտրի, դրամական փոխանցումների և անվտանգության երաշխիքների վրա՝ դրդելով Հայաստանին դիվերսիֆիկացնել իր տնտեսական հարաբերությունները, թեև դա էլ իր ռիսկերն է պարունակում:

Հայկական դրամը սպասվածից ավելի ուժեղ գտնվեց՝ զսպելով գնաճը, բայց դժվարություններ ստեղծելով արտահանողների և արտարժույթային պարտավորություններ ունեցող ձեռնարկությունների համար: Համաշխարհային գնաճը և էներգայի աճող գները ճնշում են գործադրում Հայաստանի տնտեսության վրա՝ հատկապես ներմուծումից կախվածության պատճառով:

Չնայած այս մարտահրավերներին՝ ձեռնարկությունները դիվերսիֆիկացնում են մատակարարման շղթաները և ուսումնասիրում նոր շուկաներ, իսկ կառավարության բարեփոխումների ջանքերը երկարաժամկետ կայունության ուղի են ապահովում: Այնուամենայնիվ, Հայաստանի հաջողությունը կախված կլինի իր ձեռնարկատիրության՝ այդ ռիսկերը արդյունավետորեն նավարկելու կարողությունից:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ընկերության ղեկավարությունը շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

3 Նոր և վերանայված ստանդարտներ կամ մեկնաբանություններ

3.1 2024թ. հունվարի 1-ի դրությամբ ընդունված նոր ստանդարտներ

Ընթացիկ տարում Ընկերությունը ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (<<ՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2024թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- «Պարզավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ» (<<ՄՍ 1 փոփոխություններ),
- «Մարակարարման շղթայի ֆինանսավորման մեխանիզմներ» (<<ՄՍ 7 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)

3.2 Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (<<ՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- «Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (<<ՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)
- ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»

4 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Պատրաստման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

4.2 Արտաթույթ

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (ՀՀ դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

Արտաթույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտաթույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը:

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	396.56	404.79
ՀՀ դրամ/1 Եվրո	413.89	447.9

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը):

Արտաթույթով գործարքներից, ինչպես նաև արտաթույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

Հասույթ

Հասույթը ձևավորվում է հիմնականում բժշկական պարագաների և սարքավորումների վաճառքից և հեմոդիալիզի ծառայությունների մատուցումից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5-րդ պայմանագրի գործընթացով:

1. Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
2. Բացահայտել կատարման պարտականությունները
3. Որոշել գործարքի գինը
4. Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
5. Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

4.3 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Մեքենասարքավորումներ	- 8 տարի
Տրանսպորտային միջոցներ, տնտեսական գույք և այլն	- 8 տարի

Քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ, համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում:

4.4 Վարձակալված ակտիվներ

Ընկերությունը՝ որպես վարձակալ

Ընկերությունը կնքում է վարձակալական պայմանագրեր հիմնականում հեմոդիալիզային բժշկական սպասարկման ծառայությունների մատուցման տարածքներ ապահովելու համար, ինչպես նաև հեմոդիալիզի էլեկտրական աթոռների վարձակալության համար: Տարածքների գծով վարձակալական պայմանագրերը սովորաբար կնքվում են 5-ից 10 տարի ժամկետով: Հեմոդիալիզի էլեկտրական աթոռների վարձակալության պայմանագիրը կնքվել է 4 տարի ժամկետով և պարունակում է անմիջապես վարձակալության ժամկետի ավարտին ձեռք բերելու հնարավորություն:

Ընկերությունը չի կնքում վաճառքի և հետադարձ վարձակալության պայմանագրեր: Բոլոր վարձակալության պայմանագրերը կնքվում են անհատական հիմունքներով և պարունակում են տարբեր պայմաններ:

Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն պայմանագրի գործողության սկզբում: Վարձակալության պայմանագիրն իրավունք է տալիս որոշակի ժամանակահատվածում սահմանելու որոշակիացված ակտիվի օգտագործման ուղղությունները և ստանալու որոշակիացված ակտիվից բոլոր տնտեսական օգուտները՝ փոխհատուցման դիմաց:

Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունը իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Ընկերության կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Ընկերությունը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Ընկերությունը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվն արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան:

Մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունն այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք գեղջեղով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Ընկերությունը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

4.5 Հիմնական միջոցների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորուստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

4.6 Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը գործարքներ է կնքում միայն հիմնական ֆինանսական գործիքներով, որոնք հանգեցնում են ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ճանաչմանը, ինչպիսիք են՝ առևտրային և այլ դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, բանկերից և փոխկապակցված կողմերից ստացված վարկերը և փոխառությունները, դրամական միջոցները, ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները:

Ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են սկզբնական արժեքով և ամորտիզացված արժեքով, գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում արժեզրկման օբյեկտիվ ապացույցների դեպքում: Եթե հայտնաբերվում են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ, արժեզրկումից կորուստը ճանաչվում է Ֆինանսական գործունեության մասին հաշվետվությունում:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղջված գնահատված դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի տարբերություն:

Ինքնարժեք հանած արժեզրկումով չափվող ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և լավագույն գնահատման տարբերություն, որը մոտավոր է այն գումարի, որն Ընկերությունը կստանար ակտիվի համար, եթե այն վաճառվեր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, և զուտ գումարը ներկայացվում է Ֆինանսական գործունեության մասին հաշվետվությունում, երբ առկա է ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և կա մտադրություն զուտ հիմունքներով մարել կամ ակտիվն իրացնել և պարտավորությունը միաժամանակ մարել:

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՄ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- Ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որն

արտացոլված է այլ ծախսերում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են Ծանոթագրություն 16-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող)։

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունն աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են առևտրային դեբիտորական պարտքերը, որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն:

Պարտքային կորուստների ճանաչումն այլևս կախված չէ Ընկերության՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Ընկերությունը դիտարկում է ավելի ընդլայնված տեղեկատվություն ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Ապագայամետ գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ն ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընկերությունը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվներն՝ օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու

հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Ընկերությունն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Ընկերությունը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից: ՖՀՄՍ 9-ի՝ արժեզրկմանը ներկայացվող պահանջների կիրառման մանրամասն վերլուծությունն արտացոլված է Ծանոթագրություն 26.1-ում:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները: Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են Ծանոթագրություն 16-ում:

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունը իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է վարձակալության գծով պարտավորությունը:

Մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունն այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

4.7 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումների: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք՝ իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

4.8 Պետական շնորհներ

Պետական շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Պետական շնորհները, որոնց հիմնական պայմանը Ընկերության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սխտեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ պետական շնորհները ճանաչվում են սխտեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Պետական շնորհը, որը հատկացվում է Ընկերությանը՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

4.9 Շահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գույքի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Ընկերությունը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

4.10 Սեփական կապիտալ, պահուստներ և շահաբաժինների վճարումներ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նոմինալ արժեքը:

Կուտակված շահույթ ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Սեփականատերերի հետ բոլոր գործարքներն առանձին-առանձին գրանցված են սեփական կապիտալում:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

4.11 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

- (ա) աշխատավարձերը և պարգևավճարները,
- (բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցում են ծառայություններ, Ընկերությունն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղջված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

- (ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղջված գումարը, Ընկերությունը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,
- (բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

- (ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,
- (բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Ընկերությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը վճարում է կատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

4.12 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ
Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք
ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և
պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի
գումարների վրա:

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական
փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք
տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ
հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև
ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ
ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն
էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում:
Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն
էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների
փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական
հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Պաշարներ

Ղեկավարությունը գնահատում է պաշարների զուտ իրացման արժեքը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր
հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի ամենավստահելի ապացույցները: Այս պաշարների ապագա
իրացման վրա կարող են ազդեցություն ունենալ ապագա տեխնոլոգիաները կամ շուկայով առաջնորդվող
այլ փոփոխությունները, որը կարող է նվազեցնել ապագա վաճառքի գները:

Իրական արժեքի չափումը

Այն պարագայում, երբ գործող շուկաների տվյալները բացակայում են, ֆինանսական գործիքների իրական
արժեքը և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշելու համար ղեկավարությունն
օգտագործում է գնահատման մեթոդներ: Այս գործընթացն ընդգրկում է գնահատումների և
ենթադրությունների մշակում, որոնք համահունչ են նրա հետ, թե ինչպես շուկայի մասնակիցները
կգնահատեին գործիքը: Ղեկավարությունն իր ենթադրությունների համար որպես հիմք է վերցնում
դիտարկելի տեղեկատվությունը, սակայն այդպիսի տեղեկատվությունը միշտ չէ, որ հասանելի է: Այս
պարագայում ղեկավարությունն օգտագործում է հասանելի լավագույն տեղեկատվությունը: Գնահատված
իրական արժեքը կարող է տարբերվել հաշվետու ամսաթվի դրությամբ իրական գներից, որոնք կարող են
ստացվել պարզած ձեռքի գործարքի պարագայում (տե՛ս Ծանոթագրություն 27):

4.12.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված կարևոր դատողություններ

Ստորև ներկայացված են ղեկավարության՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման
ընթացքում կատարված դատողությունները, որոնք ամենաէական ազդեցություն ունեն ֆինանսական
հաշվետվությունների վրա:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը

Այն չափը, որով կարող է ճանաչվել հետաձգված հարկային ակտիվ, կախված է այն հավանականության
գնահատումից, թե արդյո՞ք ապագայում հասանելի կլինի եկամուտ, որի դիմաց կիրացվեն նվազեցման
ենթակա ժամանակավոր տարբերությունները և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային

վնասը: Ի լրումն, անհրաժեշտ է էական դատողություն հարկային միջավայրում իրավական և տնտեսական սահմանափակումների և անորոշությունների գնահատման ժամանակ:

5 Հասույթ

	2024թ.	2023թ.
Ժամանակի մեջ ինչ որ պահին փոխանցվող ապրանքներ	1,356,577	1,623,124
Ժամանակի ընթացքում մատուցվող հեմոդիալիզի ծառայություններ	453,364	329,649
	1,809,941	1,952,773

Ընկերությունն ապահովվում է պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով հեմոդիալիզային բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումը և իրականացումը՝ ամբողջ բնակչության համար:

6 Վաճառքի ինքնարժեք

	2024թ.	2023թ.
Ապրանքների վաճառքի ինքնարժեք	903,979	1,177,675
Հեմոդիալիզի ծառայությունների մատուցման ինքնարժեք		
Նյութական ծախսումներ	205,014	138,591
Մաշվածության ծախսեր	48,471	47,767
Աշխատանքի վճարման ծախսեր	31,353	16,342
Բժշկական լաբորատոր ծառայություններ	14,197	13,988
	1,203,014	1,394,363

7 Այլ եկամուտ

	2024թ.	2023թ.
Ակնկալվող պարտքերի կորուստի գծով պահուստի հակադարձում (տե՛ս Ծանոթագրություն 19)	25,082	-
Պետական անվճար դեղորայքի տրամադրումից եկամուտ	19,639	23,039
Հիմնական միջոցների վաճառքից ստացված եկամուտ	8,804	16,357
ԱԱՀ եկամտագրում	4,575	5,494
Այլ եկամուտ	3,467	2,116
	61,567	47,006

8 Իրացման ծախսեր

	2024թ.	2023թ.
Աշխատանքի վճարման ծախսեր	55,513	50,346
Այլ իրացման ծախսեր	12,470	23,506
Վառելիքի ծախս	4,133	3,489
	72,116	77,341

9 Վարչական ծախսեր

	2024թ.	2023թ.
Աշխատանքի վճարման ծախսեր	58,575	53,785
Խորհրդատվական ծախսեր	21,513	6,900
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	13,843	6,964
Հաշվապահական ծառայության գծով ծախսեր	12,000	12,000
Տեխնիկական սպասարկման ծառայություններ	7,425	6,000
Վերանորոգման ծախսեր	3,213	14,880
Ապահովագրավճար	3,351	2,054
Բանկային երաշխիքի գծով ծախս	3,131	676
Գործուղման ծախսեր	865	4,469
Այլ վարչական ծախսեր	16,429	18,008
	140,345	125,736

10 Այլ ծախսեր

	2024թ.	2023թ.
Ժամկետանց դեղորայքի դուրսգրման ծախսեր	35,336	19,632
Ակնկալվող պարտքերի գծով պահուստ (տե՛ս Ծանոթագրություն 19)	-	30,046
Այլ	11,107	13,896
	46,443	63,574

11 Ֆինանսական եկամուտ և ծախսեր

	2024թ.	2023թ.
Բանկային վարկերի և լիզինգով ձեռքբերումների գծով տոկոսային ծախսեր	2,331	3,979
Ֆինանսական վարձակալության գծով տոկոսային ծախսեր	7,651	7,656
Ընդամենը ֆինանսական ծախսեր	9,982	11,635
Բանկային հաշիվներից տոկոսային եկամուտ	43	72
Ընդամենը ֆինանսական եկամուտ	43	72
Զուտ ֆինանսական ծախսեր	9,939	11,563

12 Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ

	2024թ.	2023թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	(9,187)	655
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	16,510	7,500

	2024թ.	2023թ.
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ	7,323	8,155

13 Շահութահարկի գծով ծախս

	2024թ.	2023թ.
Ընթացիկ հարկ	76,326	63,317
Հետաձգված հարկ (տե՛ս Ծանոթագրություն 20)	(4,863)	(9,631)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	71,463	53,686

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

	2024թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2023թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՄ-ների)	406,974		335,357	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2023թ.՝ 18%)	73,255	18	60,364	18
(Զհարկվող եկամուտ) չնվազեցվող ծախսեր, զուտ	(1,792)	(0.44)	(6,678)	(1.99)
Շահութահարկի գծով ծախս	71,463	17.56	53,686	16.01

14 Հիմնական միջոցներ

	Տրանսպորտային միջոցներ, Մեքենաներ և Արտադրական գույք, սարքավորումներ գործիքներ և այլ		Ընդամենը
Սկզբնական արժեք			
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	179,822	61,658	241,480
Ավելացում	68,185	2,448	70,633
Օտարում	(20,582)	-	(20,582)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	227,425	64,106	291,531
Ավելացում	2,610	714	3,324
Օտարում	(11,814)	-	(11,814)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	218,221	64,820	283,041
Կուտակված մաշվածություն			
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	48,925	31,819	80,744
Տարվա հաշվարկ	23,637	7,083	30,720
Օտարման հետևանքով դուրսգրում	(8,271)	-	(8,271)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	64,291	38,902	103,193
Տարվա հաշվարկ	23,456	7,203	30,659

	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ, Արտադրական գույք, գործիքներ և այլ	Ընդամենը
Օտարման հետևանքով դուրսգրում	(3,337)	-	(3,337)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	84,410	46,105	130,515
Հաշվեկշռային արժեք			
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	163,134	25,204	188,338
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	133,811	18,715	152,526

Բանկային վարկերը ապահովելու նպատակով Ընկերությունը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրավադրել է 1,106 հազար << դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,056 հազար << դրամ) հաշվեկշռային արժեք ունեցող տրանսպորտային միջոցներ:

Մաշվածության գծով ծախսը ճանաչվել է հեմոդիալիզի ծառայությունների գծով ինքնարժեքում:

15 Վարձակալություն

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

	Տարածքներ	Կապիտալացվող ծախսեր	Հեմոդիալիզի էլեկտրական ալթոններ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	52,270	8,837	58,118	119,225
Ավելացում	30,651	-	-	30,651
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	82,921	8,837	58,118	149,876
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	82,921	8,837	58,118	149,876

Կուրսակված մաշվածություն

2023թ. հունվարի 1-ի դրությամբ	12,821	884	6,769	20,474
Տարվա հաշվարկ	7,526	442	9,079	17,047
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	20,347	1,326	15,848	37,521
Տարվա հաշվարկ	8,291	442	9,079	17,812
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	28,638	1,768	24,927	55,333

Հաշվեկշռային արժեք

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	62,574	7,511	42,270	112,355
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	54,283	7,069	33,191	94,543

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության գծով պարտավորությունները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ընթացիկ	53,058	72,042
Ոչ ընթացիկ	18,985	17,840
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ	72,043	89,882

Ընկերությունը վարձակալել է տարածքներ, հեմոդիալիզի էլեկտրական աթոռներ և տրանսպորտային միջոց: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն:

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Ընկերությունը, քանի դեռ առկա չէ ակտիվն այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Հեմոդիալիզի էլեկտրական աթոռների վարձակալության պայմանագիրը կնքվել է 4 տարի ժամկետով և պարունակում է անմիջապես վարձակալության ժամկետի ավարտին ձեռք բերելու հնարավորություն:

Վարձակալության գծով պարտավորություններն ապահովագրված են համապատասխան հիմքում ընկած ակտիվներով: Ապագա նվազագույն վարձավճարները 2024թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ արտացոլված են ստորև.

	Նվազագույն վարձավճարներ	
	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Մեկ տարվա ընթացքում		
Վարձավճարներ	25,782	25,840
Ֆինանսական ծախս	(6,797)	(8,691)
	18,985	16,789
Երկրորդից հինգերորդ տարիների ընթացքում		
Վարձավճարներ	57,873	74,510
Ֆինանսական ծախս	(13,017)	(18,326)
	44,856	56,184
Հինգ տարվանից հետո		
Վարձավճարներ	9,007	19,202
Ֆինանսական ծախս	(805)	(2,293)
	8,202	16,909
Զուտ ներկա արժեք	72,043	89,882

Վարձակալության գծով վճարներ, որոնք չեն ճանաչվում որպես պարտավորություն

Ընկերությունն ընտրել է կարճաժամկետ վարձակալությունների (12 ամիս կամ ավելի պակաս ակնկալվող ժամկետով) և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար չճանաչել վարձակալության գծով պարտավորություն: Նման վարձակալությունների համար կատարված վճարները ծախսագրվում են գծային հիմունքով:

Վարձակալության գծով պարտավորությունը չափելիս չներառած վճարներին վերաբերող ծախսերը ներկայացված են ստորև.

	2024թ.	2023թ.
Կարճաժամկետ վարձակալություններ	1,800	1,800
Ընդամենը վարձակալության գծով վճարներ	1,800	1,800

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի կարճաժամկետ վարձակալությունների գծով ապագա պարտավորվածություններ, և այդ պարտավորվածությունների ընդհանուր գումարը կազմում է 150 հազար ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 900 հազար ՀՀ դրամ):

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարում վարձակալության գծով դրամական միջոցների ընդհանուր արտահոսքը կազմել է 16,894 հազար ՀՀ դրամ (2023թ.՝ 14,228 հազար ՀՀ դրամ):

16 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

16.1 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են Ծանոթագրություն 4-ում: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև:

Ֆինանսական ակտիվներ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր ¹	236,677	166,773
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	42,887	23,021
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	279,564	189,794

¹ այս գումարներն արտացոլում են միայն առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, որոնք հանդիսանում են ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական պարտավորություններ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	42,878	302,168
Վարձակալության գծով պարտավորություններ	72,043	89,882
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	709,372	522,967
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	824,293	915,017

16.2 Վարկեր և փոխառություններ

	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Բանկային վարկեր և վարկային գծեր/օվերդրաֆտներ	23,130	48,738	-	23,130
Կապակցված կողմերից չապահովված փոխառություններ	19,748	230,300	-	-
Ընդամենը վարկեր և փոխառություններ	42,878	279,038	-	23,130

Բանկային վարկերն ունեն 2 տարի մարման ժամկետ և տարեկան 9.6% միջին տոկոսադրույք (2023թ.՝ 12.8% տոկոսադրույք):

Կապակցված կողմերից չապահովված փոխառությունները կարճաժամկետ, անտոկոս փոխառություններ են:

Վարկերն ապահովված են ընկերությանը պատկանող տրանսպորտային միջոցներով (տե՛ս Ծանոթագրություն 14):

Վարկերի և փոխառությունների իրական արժեքը հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին, քանի որ զեղչման ազդեցությունն էական չէ:

Տե՛ս Ծանոթագրություն 26՝ վարկերի և փոխառությունների արժույթների բացահայտման համար:

16.3 Այլ ֆինանսական գործիքներ

Ստորև նշված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները համարվում են իրական արժեքի ողջամիտ մոտարկում.

- առևտրային և այլ դեբիտորական պարտքեր
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, և
- առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր:

17 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

	2024թ.	2023թ.
Տարեսկզբի մնացորդ	9,631	-
Շահույթում կամ վնասում ճանաչված ծախս (տե՛ս Ծանոթագրություն 13)	4,863	9,631
Տարեվերջի մնացորդ	14,494	9,631

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2024թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	12,895	(1,340)	11,555

	1 հունվարի 2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2024թ.
Առևտրային դեբիտորական պարտքեր	5,408	4,088	9,496
Առևտրային կրեդիտորական պարտքեր	2,591	623	3,214
	20,894	3,371	24,265
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	11,263	(1,492)	9,771
	11,263	(1,492)	9,771
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	9,631	4,863	14,494

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2023թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2023թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	12,895	12,895
Առևտրային դեբիտորական պարտքեր	-	5,408	5,408
Առևտրային կրեդիտորական պարտքեր	-	2,591	2,591
	-	20,894	20,894
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	11,263	11,263
	-	11,263	11,263
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	-	9,631	9,631

18 Պաշարներ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Վաճառքի համար ապրանքներ	721,867	565,372
Հումք և նյութեր	77,765	122,740
Պահեստամասեր	68,403	101,029
Այլ	1,953	5,786
Ընդամենը պաշարներ	869,988	794,927

Տարվա ընթացքում ծախս ճանաչված պաշարների գումարը կազմում է 1,127,178 հազար ՀՀ դրամ (2023թ.՝ 1,325,650 հազար ՀՀ դրամ):

Պաշարները գրավադրված չեն:

19 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	289,430	244,608
Պարտքային կորուստների համար պահուստ (տե՛ս Ծանոթագրություն 26.2)	(52,753)	(77,835)
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	236,677	166,773
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Տրված կանխավճարներ	173,581	187,085
Այլ դեբիտորական պարտքեր	722	549
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	101	-
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	174,404	187,634
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	411,081	354,407

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ապրանքների վաճառքից (և/կամ ծառայությունների մատուցումից) առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 47 օր (2023թ.՝ 31 օր): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

Ընկերության՝ համեմատական ժամանակաշրջանի բոլոր առևտրային և այլ դեբիտորական պարտքերը վերանայվել են արժեզրկման հայտանիշների առկայության ստուգման համար:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի համար կորուստի գծով պահուստի մնացորդը համադրվում է տարեսկզբի մնացորդի հետ հետևյալ կերպ.

	2024թ.	2023թ.
Կորուստների գծով պահուստը, տարեսկզբի մնացորդ	77,835	47,789
Տարվա ընթացքում պահուստի ճանաչում (տե՛ս Ծանոթագրություն 10)	-	30,046
Տարվա ընթացքում չօգտագործված պահուստի հակադարձում (տե՛ս Ծանոթագրություն 7)	(25,082)	-
Կորուստների գծով պահուստը, տարեվերջի մնացորդ	52,753	77,835

Ծանոթագրություն 26.2-ում ներկայացված են պարտքային ռիսկի և ակնկալվող պարտքային ռիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները: Արժեզրկման պահուստի ընթացիկ և համադրելի գումարները հաշվարկելիս կիրառվել է ՖՀՄՍ 9-ի՝ ակնկալվող կորուստների մոդելը:

Տե՛ս Ծանոթագրություն 26.1՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

20 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները դրամարկղում ու բանկերում և մինչև 3 ամիս մարման ժամկետ ունեցող կարճաժամկետ ներդրումները՝ նվազեցված բանկային օվերդրաֆտի մնացորդը: Ֆինանսական տարվա վերջի դրությամբ դրամական հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացված դրամարկղում և բանկերում մնացորդները կարող են համադրվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվության հոդվածների հետ հետևյալ կերպ.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Կանխիկ միջոցներ	12,910	11,733
Բանկային հաշիվներ	29,977	11,288
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	42,887	23,021

Տե՛ս Ծանոթագրություն 26.1՝ դրամական միջոցների և դրանց համարժեքների արժույթների բացահայտման համար:

21 Սեփական կապիտալ

21.1 Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 36,050 հազար ՀՀ դրամ (31 դեկտեմբերի 2023թ.՝ 34,470 հազար ՀՀ դրամ), որը 100%-ով պատկանում է ՀՀ ռեզիդենտ Արթուր Մելքոնյանին:

2024թ.-ի դեկտեմբերի 17-ին Արթուր Մելքոնյանը կատարել է 1,580 հազար ՀՀ դրամի կանոնադրական կապիտալի ավելացումը:

21.2 Շահաբաժիններ

2024թ.-ի ընթացքում բաժնետիրոջը վճարվել է 31,724 հազար ՀՀ դրամ շահաբաժին, իսկ 2023թ.՝ 688,256 հազար ՀՀ դրամ:

22 Առևտրային և կրեդիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	691,903	509,686
Հաճախորդներից կանխավճարներ	157,791	277,322
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	5,800	4,421
Հաշվեգրված ծախսեր	17,469	13,281
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	872,963	804,710

Ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է 221 օր (2023թ.՝ 141 օր): Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

Առևտրային կրեդիտորական պարտքերը հիմնականում ներառում են կրեդիտորական պարտքեր Abbott Vascular և Baxter AG գործընկերներին՝ համապատասխանաբար 380,324 հազ. ՀՀ դրամ և 195,489 հազ. ՀՀ դրամ:

Ընկերության արտարժույթային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 26-ում:

23 Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Ընկերության պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

	Բանկային վարկեր	Կարճա-ժամկետ փոխառություններ	Վարձակալության գծով պարտավորություններ	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	2,000		81,633	83,633
Դրամային հոսքերից				
Ստացված գումար	373,920	295,000	-	668,920
Մարումներ	(305,433)	(64,700)	(30,058)	(400,191)
Վճարված տոկոսներ	(1,870)	-	(2,109)	(3,979)
Ոչ դրամային հոսքերից				
Իրական արժեք	-	-	30,652	30,652
Տոկոսի հաշվեգրում	1,870	-	9,764	11,634
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	1,381	-	-	1,381
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	71,868	230,300	89,882	392,050
Դրամային հոսքերից				
Ստացված գումար	26,400	206,745	-	233,145
Մարումներ	(74,365)	(416,459)	(25,490)	(516,314)
Վճարված տոկոսներ	(1,291)	-	(1,040)	(2,331)
Ոչ դրամային հոսքերից				
Տոկոսի հաշվեգրում	1,291	-	8,691	9,982
Փոխարժեքային տարբերությունից վնաս	(773)	(838)	-	(1,611)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	23,130	19,748	72,043	114,921

24 Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերը ներառում են հիմնական մասնակցին, ղեկավար անձնակազմը, ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերությունը, ինչպես նկարագրված է ստորև:

24.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է Արթուր Մելքոնյանի կողմից, որին պատկանում է Ընկերության բաժնետոմսերի 100%:

24.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Գործարքներ

	2024թ.	2023թ.
Մասնակցի հետ		
Ստացված փոխառություններ	206,745	295,000
Ստացված փոխառությունների մարում	416,459	64,700
Ստացված ծառայություններ	9,800	7,133
Փոխառությունների տրամադրում	28,000	-
Տրամադրված փոխառությունների մարում	28,000	50,000
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Ծառայությունների մատուցում	1,200	1,400
Նյութերի ձեռքբերում	-	1,570
Ստացված ծառայություններ	13,024	11,346

Մնացորդներ

	2024թ.	2023թ.
Մասնակից		
Ստացված փոխառություններ	19,748	230,300
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-	1,567
	19,748	231,867
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	67,653	59,596
	67,653	59,596

24.3 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ղեկավարությունը և նրանց անմիջական ազգականները կանոնադրական կապիտալում էական մասնակցություն չունեն:

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Փոխհատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

	2024թ.	2023թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	16,758	16,694
Ընդամենը	16,758	16,694

25 Պայմանականություններ

25.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով

ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

25.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

25.3 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

26 Ֆինանսական գործիքների ռիսկ

Ռիսկի կառավարման քաղաքականությունները և նպատակները

Ընկերությունը ենթարկվում է արտարժույթի փոխարկման, պարտքային, և իրացվելիության որոշակի ռիսկերի: Ընկերությունը կատարում է ձեռքբերումներ արտերկրից և վաճառքներ արտերկրում արժույթից տարբեր այլ արժույթներով, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածության ռիսկին:

Ընկերությունը ենթարկվում է նաև արտարժույթային ռիսկի, որն առաջանում է ներմուծված ապրանքների գծով կրեդիտորական պարտքերի գումարների միջև առկա արժույթային տարբերություններից:

Ընկերությունը չունի իրացվելիության ռիսկի էական ենթարկվածություն, քանի որ ունի զգալի անսահմանափակ դրամական միջոցներ, որոնք համալրվում են իր գործառնությունների արդյունքում:

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ընկերությունը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

26.1 Շուկայական ռիսկի վերլուծություն

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի և տոկոսադրույքային ռիսկի:

Արտարժույթի ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ընկերության գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Ընկերության՝ արտերկրյա

վաճառքներից և ձեռքբերումներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով, ռուբլով և եվրոյով: Բացի այդ Ընկերությունն ունի ԱՄՆ դոլարով վարկ, որն օգտագործվել է սարքավորումների ձեռքբերումը ֆինանսավորելու համար:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով:

Հոդված

31 դեկտեմբերի 2024թ.	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի
Ֆինանսական ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	2,981	9,813
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	183	1,006	203
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	183	3,987	10,016
Ֆինանսական պարտավորություններ			
Բանկային վարկեր և փոխառություններ	21,130	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	616,860	45,277	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	637,990	45,277	-
Զուտ արդյունք	(637,807)	(41,290)	10,016

Հոդված

31 դեկտեմբերի 2023թ.	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի
Ֆինանսական ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	1,499	204
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	165	2,904	634
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	165	4,403	838
Ֆինանսական պարտավորություններ			
Բանկային վարկեր և փոխառություններ	32,449	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	476,604	7,771	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	509,053	7,771	-
Զուտ արդյունք	(508,888)	(3,368)	838

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի, ռուբլու և եվրոյի նկատմամբ դրամի 10% (2023թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2023թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը

ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2023թ.՝ 10%):

Դրամի արժևորումն ԱՄՆ դոլարի, ռուբլու և եվրոյի նկատմամբ 10%-ով (2023թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն		Ռուբլու ազդեցություն	
	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.
Շահույթ կամ վնաս	(63,781)	(50,889)	(4,129)	(337)	1,002	84

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

26.2 Պարտքային ռիսկի վերլուծություն

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Ընկերության պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է բանկային հաշիվները տարբեր բանկերում պահելու միջոցով և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Ընկերությունը շարունակաբար հսկում է հաճախորդների պարտքի հատկանիշները՝ ելնելով պարտքի վարկանիշային քարտից: Եթե հնարավոր է, օգտագործվում են նաև հաճախորդների վերաբերյալ արտաքին վարկանիշներ և/կամ հաշվետվություններ: Ընկերության քաղաքականությունն է համագործակցել միայն վճարունակ գործընկերների հետ: Պարտքերի ժամկետները տատանվում են 30-ից 90 օրերի միջև: Հաճախորդների հետ պարտքերի վերաբերյալ պայմանների համաձայնեցումը պետք է անցնի հաստատման գործընթաց, որը ենթադրում է վարկանիշային քարտի կիրառում: Ընթացիկ պարտքային ռիսկը կառավարվում է պարբերական ժամկետային վերլուծություններ կատարելու միջոցով՝ համատեղելով յուրաքանչյուր հաճախորդի համար կրեդիտորական պարտքի սահմանաչափի որոշմամբ:

Առևտրային դեբիտորական պարտքերի համար Ընկերությունը գրավ չի վերցնում: Բացի այդ, Ընկերությունը գրավ չի պահանջում նաև այլ ֆինանսական ակտիվների համար:

Առևտրային դեբիտորական պարտքեր

Ընկերությունը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ:

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ: Դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

Ակնկալվող կորուստների դրույքաչափերը հաշվարկվել են՝ հիմնվելով 2024թ. դեկտեմբերի 31-ին և 2024թ. հունվարի 1-ին համապատասխանաբար նախորդող 12 ամսվա ընթացքում վաճառքի դիմաց ստացված վճարումների պատկերի վրա, ինչպես նաև հաշվի առնելով այդ ժամանակամիջոցում ձևավորված պատմական պարտքային կորուստները: Այս պատմական դրույքաչափերը ճշգրտվում են, որպեսզի արտացոլեն ընթացիկ և ապագային վերաբերող մակրոտնտեսական գործոններին, որոնք ազդեցություն ունեն հաճախորդի՝ չվճարված մնացորդը մարելու կարողության վրա: Այնուամենայնիվ, հաշվի առնելով պարտքային ռիսկի կարճաժամկետ բնույթը՝ այս մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը հաշվետու ժամանակաշրջանում էական չի:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (<<) դրամով)

Երբ հավանական չէ առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրումը, դրանք դուրս են գրվում (ապահանջվում են): Հաշիվ-ապրանքագրի ամսաթվից հետո 360 օրվա ընթացքում վճարում չկատարելը և Ընկերության հետ այլընտրանքային վճարման վերաբերյալ համաձայնության չգալը համարվում է գումարի վերադարձման վերաբերյալ խելամիտ սպասումներ չունենալու համար հայտանիշ:

Ելնելով վերը նկարագրվածից՝ առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդները ներկայացված են հետևյալ աղյուսակներում.

31 դեկտեմբերի 2024թ.

	Ակնկալվող պարտքային կորուստ	Համախառն հաշվեկշռային արժեք	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում
Մինչև 1 ամիս	2.25%	183,433	4,132
1 ամսից 2 ամիս	2.69%	7,188	193
2 ամսից 3 ամիս	5.37%	27,876	1,498
3 ամսից 6 ամիս	10.38%	24,225	2,513
6 ամսից մինչև 1 տարի	28.61%	3,209	918
1 տարուց ավելի	100%	43,499	43,499
		289,430	52,753

31 դեկտեմբերի 2023թ.

	Ակնկալվող պարտքային կորուստ	Համախառն հաշվեկշռային արժեք	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում
Մինչև 1 ամիս	1.62%	69,228	1,223
1 ամսից 2 ամիս	2.69%	-	-
2 ամսից 3 ամիս	5.37%	3,974	213
3 ամսից 6 ամիս	10.38%	93,128	9,662
6 ամսից մինչև 1 տարի	28.61%	16,028	4,587
1 տարուց ավելի	100%	62,250	62,250
		244,508	77,835

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ դեբիտորական պարտքերի և պարտքային ներդրումների համար կորուստի գծով պահուստի մնացորդը համադրվում է տարեսկզբի մնացորդի հետ հետևյալ կերպ.

	2024թ.	2023թ.
Կորուստների գծով պահուստը հունվարի 1-ի դրությամբ	77,835	47,789
Տարվա ընթացքում պահուստի ճանաչում	-	30,046
Տարվա ընթացքում չօգտագործված պահուստի հակադարձում	(25,082)	-
Կորուստների գծով պահուստը դեկտեմբերի 31-ի դրությամբ	52,753	77,835

26.3 Իրացվելիության ռիսկի վերլուծություն

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Ընկերության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Ընկերությունը ստիպված կլինի մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2024թ.

	Անտոկոս	Պարտավորություն ֆինանսական վարձակալության գծով	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		11.29%	9.6%	
Մինչև 6 ամիս	729,120	18,985	23,130	771,235
1-5 տարի	-	44,856	-	44,856
Ավելի քան 5 տարի	-	8,202	-	8,202
	729,120	72,043	23,130	824,293

2023թ.

	Անտոկոս	Պարտավորություն ֆինանսական վարձակալության գծով	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		11.58%	12.8%	
Մինչև 6 ամիս	753,267	16,789	48,738	818,794
1-5 տարի	-	56,184	23,130	79,314
Ավելի քան 5 տարի	-	16,909	-	16,909
	753,267	89,882	71,868	915,017

Ընկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Ընկերության դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերն էականորեն էականորեն ցածր են անհրաժեշտ դրամական արտահոսքերից, սակայն ընկերությունը մտադիր է մարել պարտավորությունները տարեվերջի դրությամբ առկա պաշարների վաճառքից եկամտի հաշվին:

27 Իրական արժեքի չափում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց համար իրական արժեքը բացահայտված է

Ընկերության ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքները համարվում են իրական արժեքի խելամիտ գնահատում:

Առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները իրացվելի են կամ կարճաժամկետ են, ուստի ենթադրվում է, որ հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին:

Վարձակալության գծով պարտավորությունների իրական արժեքը գնահատվում է զեղչված դրամական հոսքերի մեթոդով՝ կիրառելով այն շուկայական տոկոսադրույքները, որոնք Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ պետք է վճարեր համանման ժամկետում և ապահովվածությամբ փոխառություն ստանալու համար՝ համանման տնտեսական միջավայրում համանման արժեքով օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ձեռքբերման նպատակով: Ամենազգալի փոփոխականը զեղչման տոկոսադրույքն է:

Ընկերության ֆինանսական գործիքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 2 մակարդակում:

28 Կապիտալի ռիսկի քաղաքականություններ և ընթացակարգեր

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարար եկամուտ մատակարարի:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը ու կուտակված շահույթը, որոնք բացահայտված են Ծանոթագրություն 21.1- ում:

Ղեկավարությունը գնահատում է Ընկերության կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք՝ խուսափելով չափազանց մեծ լծակավորումից (լեվերիջ): Հաշվի են առնվում Ընկերության վարկերի տարբեր դասերի ստորադասության մակարդակները: Ընկերությունը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով Ընկերությունը կարող է փոփոխել մասնակցին վճարվող շահաբաժնի գումարը, թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու համար:

Ընկերությունը վերահսկում է կապիտալը՝ կիրառելով «գուտ պարտքի» և «ճշգրտված սեփական կապիտալի» հարաբերակցությունը.

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (<<) դրամով)

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Զուտ պարտք		
Վարկեր և փոխառություններ	42,878	302,168
Հանած՝ ստորադաս վարկ	19,748	230,300
Հանած՝ Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	42,887	23,021
	(19,757)	48,847
Ճշգրտված սեփական կապիտալ		
Ընդհանուր սեփական կապիտալ	557,768	252,401
Գումարած՝ ստորադաս վարկ	19,748	230,300
	577,516	482,701
Զուտ պարտքի և ճշգրտված սեփական կապիտալի հարաբերակցության գործակից	(3%)	10%